

ԱՐԴՅՈՒՆՎԱՐ

ՀԱՅԻ ՏԱՐԱ

ՔՐՈՍՈԿՈՒՆ

Ա. ԶԵՐՄԱՆ
Ժամ - 1939


891.99

Գ - 87

0013







C 3065


01 JAN 2009

891 gg UGNS 97051

9-87

6 DEC 2011

ՔՆԱՐԱԿԱՆ



ԺԱ-ԺՊՅՈՒ

ԱԶԵՐՆԵՐ
Բագր. — 1939

22.03.2013

25863

ԹՎ 35



60947-67

ՅԵՐԳՈՒՐ

ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Կյանքս կտամ քո արնավառ դրոշակին,
Թորհրդային անզուգական իմ հայրենիք,
Ծեթե հորդեն Հորդաները նենդ, վայրենի,
Կյանքս կտամ քո արնավառ դրոշակին:

ԱՌ ինձ, թիժիք բորբ բողերում քո կրակի,
Կոփիր փորձով անմահացած մեր հայրերի,
Կյանքս կտամ քո Լենինյան դրոշակին,
Ստալինյան անզուգական իմ հայրենիք:

ԴԻՄՈՒՄ ԿՈՄԿՈՒՍԻՆ

Յերգն այս քեզ եմ հղում, իմ մայր կուտակցություն,
Իրբել անդավանան, Հավատարիմ զորդի,
Դու տվել ես մեզ կաթ, տվել ես կամք և հուն,
Յեվ կորովներ անհուն ժաքառամի, մարտի:

Ինչ դու մեզ ես տվել, չի տվել աշխարհաւմ
Դեռ վոչ մի մայր փորդուն իր անդին, Հրեղեն,
Մենք Հարուստ ենք քո այդ ժառանգությամբ
Հարուստ,
Մեզ չափ վաչ մի Հարուստ դեռ Հարուստ չի յեղել:

Ինչպես կաղնիները հեռավոր անտառում
Բազում արմատներավ կապված են սուրբ Հոգին,
Դու մեզ ուռուցիլ ես մեզ կյանքում, պայքարում
Այլպես կապվել մարզուն յեվ քո Հիմունքներին:

Իսկ թե վոմանք յեղան զավաղ ու զավաճան
Քո լենինյան տոհմին ու քո վոեմ գրոշին, —
Թող պատժվեն նրանք բազկով քո սրբազն,
Թող չմնա յերկրում անզամ նրանց վոշին:

Յես մի փափագ ունեմ լինել քեզ արժանի,
Այն չափ քեզ արժանի ու մահանալ այնպես,
Վոր մայրական ձեռքով դու ինձ քո զահերի
Նվիրական անթիվ անյուններին խառնես:

...Մենք քեզ հետ ենք մայր իմ, մենք քո մշտականաչ
Մայրայան անառողի ծառերն ենք կենսահորդ,
Յեվ կրում ենք մեջ ավյունը քո անանց,
Յեվ արմատներ ունենք Հոգում քո անհողպող:

Ով քեզ հետ ե — հոգում ունի սխրանք հաղար,
Ով վոր դավից քո դեմ, — անդարձ կորած ե նա,
Դու և սիրել զիտես քնքուշ ու մայրաբար,
Յեվ ատել աններում, ո՛, մայր դու անխնա:

Քո սրբազն գործին ով վոր դամիի — նրան
Ճգմիր քո մարտերի զաշտում դու անսահամի,
Միլիոնների սերն ե քեզ անխորտակ պրահ,
Եվիրվածությունը անխոցիի վահան:

ՅԵՐԴՈՒՄ

Յերդվում ենք, զեկավա՞ր, պայծառ քո՝ անունով,
Յերդվում ենք զրոշնվ քո կուռ գլարդիայի,
Յերդվում մեր յերկնքի լաղուբաչ անհունով,
Յերդվում հայրենիքով մեր ծաղկավետ մայս։
Յերդվում ենք մեր հոգով վոսկերելք ու բեղուն,
Յերդվում մեր ծառերով, վոր զամբյուղ առ դամբյուղ
Գուղղմէրն են վասիե ահա մեր դեմ դեղում
Այդիներում ամիսան քուրող ու համասփյուռ։
Յերդվում ենք լի հունձքով համայնական հողի,
Զբերի պես գարնան հորդ ափեափի փափած,
Յերդվում մեր կալերի խնդությամբ անթախիծ,
Հացի լույս դեղերով, մեր՝ լիությամբ շոայլ . . .
Յերդվում ենք մեր չքնաղ դեղանիստ Կովկասի
Անհամ բարձրունքների ջրմիջներով արծաթ,
Այնքա՞ն պոետական, այնքա՞ն դեղատեսիլ
Լեռնաշխարհով մեր այս, — դեղեցկության արձան։
Առայլույսներով մեր, վոր քեզ մոտ են մանկուց։
Մեր բնությամբ՝ հզի գանձերով բյուրավոր,
Մանուկներով մեր լույս, մշտածիծաղ, դանդուր,
Մեր բանակով անպարտ, հզոր ու փառավոր։
Գումարտակներով մեր անկոր, հզորագույն,
Մեր գնդերով — կովկած Միրոնիչի ձեռքով,
Վոր սրբում այս հուրը փոքրիկ մի զօրագունդ
Կոեց ու բարձրացավ գերազար բանակով . . .
Յերդվում ենք, զեկավա՞ր, մեր յերկնքում թևող
Մեր սավառնակների յերամներով անպարտ,
Նրանց մեն մի պինտով, նրանց մեն մի թևով,
Պոմպանորդներով մեր արի ու իմաստապանծ։
Յերդվում ենք մեր կյանքով, մեր սրտերի հրով,

Մեր րորբ արյան յուրաքանչյուր մի կաթիլով,
Մեր մեծ առաջնորդի — լենինի շիրիմով,
Այն ամենով, ինչ վոր թանգ և մեղ աշխարհում։
Յերդվում ենք մեր մայր, անծայր հայրենիքով, —
Վտանգների պահին կանգնել իբրև պատնեշ,
Մարտ նետվել սայրասուր մեր սրերով, զենքով,
Նժույգներով մեր հոգմ, սավառնակներով մեր։
Հանուն մեր հաղթության ամբողջ յերկրագնդում,
Հանուն մեր փառքերի, թևերով շառաչուն,
Հանուն նոր մարդկության ամբագայի իմելուն,
Հանուն քո վիճ անվան, անդուլ մեր առաջնորդ։

ԿԵՆԱՑ ԽՆԴՐԻԹՅԱՆ

Քարձրացնե՛նք բաժակները գինեհորդ,
Թող վարդապույն խնդությունը կարկաչի,
Նվիրական այս բաժակն առաջին
Քո կենացն ե, ո՛վ մեր արե առաջնորդ:

Քո կենացն ե, ուրախության կենարար
Դու մշտահոս, դու անհամում խոր ակունք,
Վոնց անթառամ, մշտափթիթ վառ ծաղկունք,
Կյանքն ե ծաղկում քո հանճարով շինարար:

Մեր բազմապէի ժողովրդի սեղանին
Փռել ես դու հազար բարիք չողշողուն,
Առատության լույս աստղերն են ծիծաղում
Մեր գյուղերում, քաղաքներում զեղանի:

Յես հարցնում եմ խնդությանը մեր անհատ.
— Աւրախություն, գետի նման հորդալի,
Վո՞ր հոնովն ես կարկաչաձայն դու զալի,
Տկո՞ր ակնեն ես ոկիղը առնում հորդառատ:

— Ակնաղբյուրն իմ Կրեմլումն ե փառավոր,
Այստեղից եմ գլուխեն յես հորդում,
Զի՞ն խոխոջում ժողովողի լոյն սրտում,
Հայրենիքում զեղեցկագեղ, լուսավոր:

Ստա՛լինն ե բացել հունի իմ լուսավետ,
Ստա՛լինն ե ինձ վարարել աշխարհում,
Յես հոսում եմ սոցիալիզմի դարարուն
Այդիներով արդեն ծաղկած առհավետ:

Ստա՛լինը մեծ Լենինի պատգամով՝
Բացեց ակն իմ մաքուր, վորպես հուր-ճաճանչ.
— Խմե՛ք, ասավ, ժողովուրդներ բազմատանջ,
Ուրախության հորդ ակունքից յերկնամով:

Խմե՛ք, ասավ, ու պաշտպանե՛ք մշտարթուն
Ձեր խնդության ակնաղբյուրը հորդահորդ,
Բնաջնջվի՛ թող ամեն մի վիշապ, վորդ,
Վոր կվորձի թափել այնտեղ մաղձ ու թույն:

Քարձրացնենք բաժակները գինեհորդ,
Թող մեր անհուն խնդությունը կարկաչի,
Նվիրական այս բաժակը առաջին
Քո կենացն ե, ո՛վ խնդության առաջնորդ:

ԱՆՄԵՌ ԶՈՐԱՎԱՐԸ

(Ֆրունզեյին)

Հիշում ենք քեզ՝ մեր հանձարեղ զորավար,
Հիշում ենք քո գրոհները հողմավար :

Հիշում են քեզ հոգիաները Դրեմի,
Աւկրաինայի ստեղները զեղանի,

Պերեկոպը ու Սիվաչն են քեզ հիշում,
Արոհներին սիրանաներից քո հուշում :

Դուռ անողոք, դուռ միշտ անհաշտ, անդիջում,
Գրոհներում՝ ովկիանի պես շառաջուն,

Ինտերվենտյան հիգաներին ամեհի
Դու մատնեցիր կործանումի ու մահի : —

Ո՞ւր են նրանք՝ վսոկու Հորթի կուռքերը, —
Կոլչակները, Յուղենիչը, Վասնդելլ:

Ո՞ւր են նրանք, գեներաներն այն բազում,
Ո՞ւր են նրանք, բանդաներն այն զազապուն :

Մեր ժըրիկը գարձրեց նրանց հողմահար,
Պատմությունը այս կէիչի գարեղար,

Կէիչի քեզ, ո՞ւ, յերկաթե զորավար,
Ժողովրդի ողջի վորդի լեղենդար :

Վորտեղ մի որ քո քաջարի գնդերի
Ցերթը Հորդեց, նման յելման գետերի,

Վորտեղ հոսեց մարտիկներիու արյունը, —
Այնուեղ հիմար բացվել ե մեր զաքունը :

Ծաղիկներն են աստղերի պես ծիծաղում,
Ցողն և նրանց թերթիկներին չողչողում,

Ու ցորենի լայն ծովերն են կանաչում,
Ու սրտառուչ մեր յերգերն են կարկաչում,

Քեզ ե կանչում մեր կյանքը՝ լույս ծիածան,
Վորպես անմեռ քո գործերի հուշարձան :

Ենջի՛ր խաղաղ դռւ Կրեմլի սկատի տակ,
Մենք, փառավոր ոազմիկները քո չիտակ,

Կպաշտպանենք մեր զենքերով, մեր կյանքով
Բոլշևիչյան զորապետի կյանքը քո, —

Խորհրդային Սիությունը վոսկեխինդ,
Վորպես մեր ծով յերջանկության մարգարիտ :

ՀՐԱԺԵՇ

Մենք սովոր ենք միշտ ընկեր Ստալինի
Կողքին քեզ կանգնած տեսնել, Սերգո՝
Վորպես վիթխարի կանաչ մի կաղնի,
Խոյացած մեր ջինջ յերկնի ներքո։
Յեվ ինչ... այսոր նենդ մահն անադորույն
Տապալից դետին հասակդ սեղ,
Հեղափոխության դու կտրիձ կորյուն,
Հեղափոխության բյուրեղյա սեր...

Մահը անկար ե իլել մեզանից
Կյանքը, վորին դու կյանքդ ես տվել,
Աշխատանքում սեր ու կամք գրանիտ —
Այդ խոսքերն են սավառնում վեր։
Այդ քո դարբնած պայծառ սերունդն ե,
Վորպես մայիսյան դվարթ պուրակ,
Ալմկում գարնան քամիների դեմ,
Վոստերով կանաչ, հավետ ուրախ։

Յեվ արմատները, ո՛, խոր են նրա,
Յեվ աաղարթները թարմ ավելի,
Այդ նա յե զարկել հովասուն վրան
Մեր հայրենիքի լայն ափերին։
Քո մեծ սիրով ե նա մավել կյանքում,
Քո փարփայանքով աճել փարթամ,
— վողույն պուրակին կանաչագանդուր, —
Վասում ե կարծես աճյունդ թարմ։

Թող նա սսամիի գերեզմանիա քով,
Լիքը մեր բախտով, հավատով ջերմ,
Գլուխն աստղալից, խաղաղ յերեկո,
Շուրջը նոր կյանքի վառ կակաչներ։

Յեվ անհաշու լինի թշնամու համուեալ,
Դեպ բարեկամը՝ լիքը սիրով,
Յեվ ինչ թողիլ ենք մենք կիսատ ու թեր
Ավարտի ջահել բազուկներով,
Սիրի՛ հայրենի հողը սրբազն,
Ինչովես վորդին ե մորը սիրում,
Մնաս բարով, իմ յերկիր հաբազատ,
Բնկերներ ու կյանք, պայծառ գարուն...

6094.74.67



ԱԴՐԲԵԶԱՆ ԻՄ ԶՔՆԱՂ

Պաշտանքով եմ յես այսոր իմ յեթեռը նվիրում
Քեզ, Հայրենի որորան, Աղբբեջան գեղանի,
Յերախտապարտ, Վորդիական սիրով եմ յես քեզ
սիրում,
Սիրով եմ յես անունով սրուում, լույս հայրենիք:

Ո՛, ծնմիկ են, սնվել են քո մայրական կաթովը
Արիստիքան ու փառքի քանի՛ պայծառ սերունդներ,
Թուլարան են յեղել քո ու հանքերը, բիլ ծովը
Ստալինյան ճուղվածքի վորդիների քո անմեռ:

Ստալինը կովովել ե մըրիկներում պայքարիդ,
Շախրել ե քո ափերով, վորապես արծիվ անմիեներ,
Սնուցել ե ստեղծել վորդիներից քո արի
Արծիների բյուր յերամ՝ պայքարների համար մեր:

Արյունառուշտ քանի ցին հոչուել են քեզ հնում
Քանի ուլուր ե, յերկի՛ր, քո մարմինը ծվատել
Մարդիկներով մահառեթ, մարդիկներով արյունոտ...
Մինչեւ ճախրել են խողախ արծիվները սրաթեվ,

Ժողովրդի հետ մեկ տեղ, մաքառել են, թրատել
Անգղներին ցարական, մուսավաթյան ցիներին,
Ուլուրներին դաշնակյան, մենշևիկյան սեազեմ
Ազուաներին, բուերին՝ խաժամուժ ու գարշել:

Փիրուղաչյա յերկնքիդ, արդասարեր դաշտերիդ,
Կանաչապատ լեռներիդ, հովիտներիդ ծաղկալետ
Տերերը արդ վորդիքդ են, Աղբբեջան սիրելի,
Եւլ թոփչքն ե քո արդ լայն ու անկապանք հար համետ:

Ալրդ քո ապատ, հարազատ ասորյան ե աղմկում
Քո ամեն մի անկյունում, արեային իմ յերկի՛ր,
Աշուղներով սազերով զիարթ վասքն են քո յերգում
Լենքորանում, Շամախում, Ղարաբաղում խնդադին:

Աղմիկներով չողերի նման մաքուր մատներով
Քո մրգալի բաղերն են դործում չփեղ գորդերին,
Բերքն են քաղում արտերում ուրախ, զվարթ խմբարով,
Իրենց թուխիկ վարսերը տված քնքուշ հովերին:

Զավակներդ, ողային ու ծովային լայներով
Այսոնների, հավերի յերամներն են քո վարում,
Ծովաղնաց, սալառնորդ ու նավթային բյուր հերսու
Անցնում են քո յերկերով, փառաբանվում,
Գուղղուրվում:

Փայիտյում ես զու նրանց քո մայրական քնքանքով
Պարզեւում ես և՛ անուն, և՛ սեր և՛ հուր յեռանդի,
Արեւելքի լույս չեմի յերկնակամարի ներքո
Փառքն ե ծաղկում, տարածվում սահմաներից քո
անդին:

Հայրենիքում Խայամի, Հայրենիքում Տաղորի
Հողի մարդիկի սովալուկ քնքանքով են քեզ հիշում,
Բաղու՛, Բաղու՛, ներշնչա՞նք իմ սրտահույզ տողերի,
Մայրաքաղա՞ք թանկացին, փառապահծ ու փառաշուշ:

Դու ծաղկում ես քո չքնազ, կախաղդական քույրերի,
Թրիխոսի արեւոտ, Յերեանի հետ խնդուն,
Յեկ ձեր սերը—սերն ե արդ յեղայրական աղդերի,
Ժողովուրդների բազում մեծ Միության լուսանուն:

Ծաղկի՛ր, աճիր զու վարթամ, Աղբբեջան իմ չքնազ,
Արենազիրքի թող զանա ինձ համար լույս յերջարան,
Քեզ ե տալիս պետը և՛ սիրտ և՛ սեր և՛ քնար,
Քեզ, Հարազատ, հանձարեղ առաջնորդիդ անվարան:

ՅԵՐԳ ՅԵՐԿԱՆՔԻ ՅԵՎ ՅԵՐԿՐԻ

ՄԵՆՔ յերկինքը թողեռւմ ենց
Հըեշտակներին, ծաերին...
Հենրիխ Հայն

Չեն համաձայնվիք քեզ հետ, ով Հայնե՛,
Վոչ Զկալովը, վոչ Կոկիլինակին,
Ինչքան ել սիրեն յերգերիդ ձայնը,
Այնքա՞ն կարկաչուն, այնքա՞ն քնքչաղին:
Չեն թողնի՝ անհուն յերկինքը լուսն
Հըեշտակներին չեղած ու անդո՛,
Վորոնց, ով Հայնե՛, վոչ դու յես տեսէլ,
Վոչ սափառնորդները մեր ամբակուռ:

Նյանք յերկինքը թերթել են այնուհս,
Ինչպես յես անմահ «Յերգերի դիրք»-ը,
Ըսկզմվել լաղուր խորքերն իր անտես,
Քո յերգած բոլոր աստղերը դրկել...
Թե դու կենդանի լինեցիր այսոր,
Մեր թոշունների թևերի վրա
Քեզ թոփչքներով նրանք մեծազոր
Կթոցնեյին մինչեւ արել հրակ:

Կտանեյին քեզ ու ման կածեյին
Մեր խորհրդային անհուն բաղուրում,
Մեր բիլ յեթերում բա՛րձր, հմայի՛չ,
Վորոտեղ չի հասել և վոչ մի ուրուր:
Կտեսնեյիր դու մեր պողպատաթեկ
Սավառնակների յերամները սեղ,
Վորոնք յերկինքն են ճեղքում խնդադեմ
Ու հորիզոններ յերիզում լուսե:

Կտեսնեյիր քո աչքերով քնքուչ,
(Հայացքով, հառած ամռան կապույտին),
Վոնց են հանդուզն լողում յերկինքում
Մեր աղջիկնե՛րը պարաշյուտիստ:
Կլսեյիր դու սրտիդ ականջով
Նրանց յերգերը յերկնքում յերգած,
Յե՛վ ցնորքները նրանց կարկաչուն,
Յե՛վ յերազները ցանկալի այնքան:

Պարաշյուտները նրանց մետաքսե,
Վորպես մայիսյան վարդեր սպիտակ,
Կրացվեյին քո հողում մշտառեր
Յեկ յերգերիդ մեջ արտահույզ, հստակ:
Ինչպիսի՞ տաղեր կծոնեյիր դու,
Յե՛վ քնարական, և՛ քնքուչ, և՛ նուրբ
Մեր աղջիկներին թևավոր, խնդուն,
Բղաջուններին մեր խիզախ, հմուտ:

Ինչ վսեմ յերգով, Հայնե՛, կերպեյիր
Կառուցումները մեր աշխարհաշեն,
Մեր կյանքը ծաղկուն, արեստ մայիս,
Մեր ստեղծումի կրակը անշեջ:
Յե՛վ այն, վոր ազատ մեր հողի վրա,
Մենք մեր դրախտն ենք արգեն կառուցում,
Յեկ նվաճում ենք յերկինքն անդրավ,
Յեկ հո՛զը, ջուրը, մուժը, սառուցը...

Յեկ ա՛յն, վոր, Հայնե՛, ապրում ենք արտեն
Առաստության մեջ, անվիշտ, անկարիք,
Յեկ ունենք յերգեր ու հաց ու վարդեր,
Ու անհուն կորով՝ գալիք պայքարի:
Կքնարեյիր այդ ամենը դու
Քո լիրիկական բոցուն քնարու,
Կմաքառեյիր մեզ հետ, մեր մարտում,
Ինչպես տրիբուն, պոյետ պայքարող:

Յեկ յեթե մի որ հայրենիքից քո,
 Աւը լույս յերկերդ խարույկ են հանել,
 Աւը պատերազմ են հրահրում անքուն,
 Աւը սովոր են, առ են, մահ են սերմանել,—
 Ո՛, յեթե մի որ այնաեղից մեկնեն
 Իրենց թաթը սեվ մեր բախտի վրա,
 Դուռ ել զինավառ կելնեցիր մեկնեն
 Մեր գնդերի հետ, հուր յերդեր կուած—

Կտեսնեցիր վոնց կպայքարեցին
 Մեր հերոսները յերկնքից անհուն,
 Յեկ հուր, և ուսմբեր, վոնց կանձրեցիցին
 Բւժերի վրա արնոտ թշնամու,—
 Հանուն մարդկության մեծ յերջամեկության,
 Աղասառթյան իր աշխարհում անհուն,
 Վորին տվել ես և քնար, և կյանք,
 Եկ արհվաշող վառքեր ու անուն...

Մենք մեր յերկենքը չենք թողնի, Հայու՛,
 Հրեշտակներին չեղյալ, ծակըն,
 Ինչքան ել սիրենք յերգերիդ ձայնը,—
 Այնքան կարկաչուն, այնքան սիրելի...

ԽՈՍՔ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ

Ատելություն, խաղու՛,
 Տեղա՛ մեր սրտերում,
 Սրերի պես չողա՛,
 Անողոք, աններում:
 Փայլի՛ր իմ տողերում,
 Հույզերում անխաղաղ,
 Ատելություն գերուժ
 Երկրիս լուսաշաղախ:

Մեր ծովերից անծայր,
 Ենքերից բարմահարկ,
 Մեր դաւդերից անցավ,
 Հանի՛ր վորպես վահան,
 Ահա քո պեմ, ահա,
 Գործած հաղար հանցանք,
 Կանդնած են դետնահար —
 Դավաճաններն անձայն...

Իժերի պես նրանք
 Սողացել են յերեկ,
 Ու թույն, ու մաղճ, կրակ
 Մեր վերելքին բերել,
 Հիմա վորպես տերել,
 Քո սրերից հրակ,
 Թող սարսափեն յերեր—
 Մահ ե նրանց դրված:

Մահու պարսկած դողա՛ն
 Թող իժերն այդ թունոտ,
 Վորոնք ողակ-ողակ
 Կծկվելով, մեր նոր

Տունն են մտել, յելնող
Մեր յերկրում՝ սքողված,
Ներկել մեզ արյունով
Ու թույներով չեղած...

Ո՞ւր ե մեր Կիրովը,
Ղեկավարը բոցուն,
Ո՞ւր ե այն կորովը,
Գորովն այն բորբ ու ծով:
Ո՞ւր ե պողպատաձույլ
Կամքեա այն անկոր ու վեհ,
Ինչո՞ւ յե հոգում ցուրտ
Մեդ հասակն այն թաղվել...

Խաղա՛, ատելությո՛ւն,
Իմ տողերում լուսե,
Բորբոքիր հուր ու թույն,
Ու վոխ, ու քե՛ն վսեմ,
Թող յերդերս հյուսեմ
Մեր մարտերում անդուլ,
Սրեմ վորպես սուսեր
Ո, սուրբ ատելություն:

Փռել են մահ, դամեր
Նրանք քո գեմ, յերկիր,
Արշավի դեմ քո վեհ,
Հայրենիք իմ յերդ իմ.
Նրանց արնոտ ձեռքից
Պիտի ջնկներ այն վեհ
Առողջորդը անդին,
Վոր քեզ կյանքի հանեց,

Վոր ավել ե թոփչք
Քեզ զեզ յերանություն,
Հանել մոխրից, մրից

Քո թևերը թույլ.
Եա, վոր անհուն ինդում
Տվեց չարքաշներին
Ու վարում ե անդուլ
Յերթը մեր գնդերի:

Վորի վրառքը այսո՞ր,
Վորպես անձրեվ զարնան
Բարեբեր ու հզոր
Շափշափում ե շոայլ
Լայնությունների վրա
Հողագնդի բուրը,
Ու սիրում ենք նրան
Սիրով մի չեմ ու բորբ:

Ուզում ելին նրանք, —
Ուրացողներն այդ սել, —
Բացել անարդ կրակ՝
Առաջնորդի վսեմ
Զինակիցների սեդ,
Տոկուն շարքի վրա,
Քո շքերթը կասել
Դեպի դաւիքն հրաչ:

Խաղա՛, ատելությո՛ւն,
Իմ տողերում լուսե,
Բորբոքիր հուր ու թույն,
Ու վոխ ու քե՞ն վսեմ.
Թող յերդերս հյուսեմ
Մեր մարտերում անդուլ,
Սրեմ վորպես սուսեր
Ո, սուրբ ատելություն:

Ահա նրանք, ահա
Ստորաքարչ առմիշտ

Կանգնած են դետնահար
Առաջ դատարանիու,
Մեր ցասումի քամին
Թող չաչի՛ աննահանջ,
Թող մեր փառքը կարմիր
Նրանց նզովի՛ հար :

Նղովք՝ հավատալանց
Նրանց գործին վարձկան,
Նղովք ու խարազան
Մտքերին վոխկալ...
Գովք հեղափոխական
Քո լայներին ազատ,
Աչքին չեկիստական,
Մրէն մեր սրբական :

Գովք մեր ֆելիքսակարմ
Չեկիստներին արթուն,
Վոր յուրաքանչյուր ժամ
Չղոն են մեր մարտում,
Վոր հսկում են անդուն
Անշահ ու անկաշառ
Քեզ, յերկիր իմ խնդուն,
Յերդ իմ մարդարտաշար :

Պատճեշիր դու հող իմ,
Առաջնորդներին քո
Ամեն դավից, վոխից.
Յեղիր պայծառ, զգոն,
Ու քո արդար ձեռքով
Արնախում վոսոխին, —
Մատնիչներին լովիրչ
Դարձու հող ու մոխիր :

Ատելություն, իսակար'
Տեղա՛ մեր սրտերում,

Սրերի պես չողա՛
Սայրասուր, աններում,
Փայլի՛ր իմ տողերում,
Հույղերում անիսաղաղ,
Ատելություն դերուժ
Յերկիրիս լուսաշաղախ :

ՅԵՐԳ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

— Մարդը պսակն եւ բնության—
Խոր թնդում եւ ձայնը Գորկու,
Վորպես զողանջ ազատության,
Վորպես կանչը սիրող հոգու:
Մարդը հպարտ եւ միշտ հնչում,
Վորպես ազատ յերդ լեռնային,
Մարդու հանճարն եւ բողբոջում
Ծաղիկներով լարնանային:
Մարդը անտիկ զունաստանում,
Արևի տակ հելլենական
Քերթությունն եւ թողել անհուն,
Պսակված ձիրքով հոմերական:
Քանդակել եւ նա մարմարէ
Արձանները դեղեցկության,
Վոր ապրում են զարեր, դարեր,
Մանկության պես վառ ու կենդան:
Մարդը կանգնել եւ քաղաքներ
Մով ծովերի, գետերի մոտ,
Այդիներով եւ պսակել
Ամեն ավան, գյուղ արեվոտ:
Մարդ շարժել եւ լեռները,
Գցել կամուրջներ անհամար,
Վորդիներն իր, յերբ մեռել են
Վաստակներ են թողել անմար:
Մարդը հանճարով նյուտոնի
Կարբաց սիրու տիեզերքի,
Ու շունչ տվեց թեթհովենի
Մուզիկային անմեռ, անդին:
Մարդը հասավ մարզսիզմի
Գաղաթիները արեգական,

Լսեց ձայնը մեծ Լենինի,
Յե՛վ փրկարար, յե՛վ մարտական:
Լսեց Լենինին: Հանց լեղենդար
Պրոմեթեյը ազատաբարդ
Շղթաններն իր թոթափեց մառ,
Ու չողաց մի վառ լուսաբաց:
Բացվեց ազատ մեր աշխարհում
Մարդկության զարունա առաջին,
Այնքան չքեզ ու դալարուն
Մեխակներով աստեղաջինջ:
Մարդն իր ջանքով բազմաբարիք
Դարձրեց հողն իմ պարտեզ՝ ծաղկուն,
Մեր ազգերն են արդ յերջանիկ
Ապրում այդում այդ ծիծաղկուն:
Մտալինը տվեց թեզեր
Մարդուն կյանքում մեր ճախրելու,
Սակառներու միշտ դեպի վեր,
Դեպի բեվեռ, դեպի հեռուն:
Մարդը՝ ազատ քաղաքացին
Խորհուրդային որորանի
Անցնում եւ, տես, անձայրածիր
Ծով արտերով մեր գեղանի:
Մարդն իր հողի ընդերքներում,
Ծովի վրա, ծովի ծոցում,
Մարդը յերկնի վոլորտներում
Հրաշքներ եւ հիմա դործում:
Մեր հարավում, մեր հյուսիսում
Քայլում եւ մարդը հպարտ,
Ինքն իր մասին յերդ եւ հյուսում,
Յերգում աշխարհն իր ծաղկազարտ:
Մանուկներն են նրա բուրում
Հանց կակաչներ վառ, հարազատ,
Յես մեր հողն իմ չերմ համբուրում,
Ուր ապրում եւ մարդը ազատ:
— Մարդը պսակն եւ բնության —
Խոր թնդում եւ ձայնը Գորկու,

Վորպես զողանջ աղատության,
 Վորպես կահչը սիրող հովու:
 Սակայն կյանքում ու աշխարհում
 Ամեն յերկրի յերկնի ներքո,
 Մարդ, քո պայծառ կերպարանքով
 Կան և գայլեր արյունախում:
 Կան և իժեր նենդ մահթույն,
 Վոր ապրում են քո այգում գեռ,
 Թունավորում, յեկ ծիլ, յեկ թուփ
 Ու վարդերդ պայծառաթերթ:
 Նրանք ժամանում են քեզ հաճախ,
 Հաճախ նասում քեզ հետ հացի,
 Արտասանում բաժականառ,
 Գաղտնի թորում թույն մահածին:
 Նրանք կյանքիդ հասուն արտում
 Ավել — կրակ են սերմանում,
 Յեղիր զգոն, յեղիր արթուն
 Խորհրդային մարդ լուսանուն:
 Նրանք պայծառ առաջնորդեկ
 Արյամբ Սմոլնին ներկեցին,
 Քո որբազան հողը հուռթի
 Ճիշաղներին վաճառեցին:
 Ու ե Գորկին, վորի հրկեզ
 Զայնը յերկրում մեր բովանդակ
 Ղողանջում եր վորպես զանգակ,
 Ու զինում եր, հայրենիք, քեզ:
 Զինում եր ձեզ ժողովուրդներ,
 Ստալինյան ընտանիքի,
 Ու յերգում եր արելամերձ
 Բարձունքները նորմեկ կյանքի:
 Զինում եր ձեզ արեվմուտքի
 Ընչափուրկներ հալածական,
 Զինում եր նա հուրկայծակի
 Խոսքերով իր աղատական:
 — Մարդը պատկն ե լնության —

Խոր թնդում ե ձայնը Գորկու,
 Վորպես զողանջ աղատության,
 Վորպես կահնչը սիրող հովու:
 Սակայն կյանքում ու աշխարհում
 Ամեն յերկրի յերկնի ներքո,
 Մարդ, քո պայծառ կերպարանքով
 Կան և իժեր նենդ, մահաթույն
 Ճզմիր նրանց քո պայքարում,
 Անունդ պահի՛ր անարատ,
 Վորպես զբոշը մեր հուրդուրուն,
 Աղատական ու վրկարար:

ՀՅՈՒՍԻՍ

Հյուսիս, դեպի հյուսիս, այնտեղ, ուր հանդչում են
Վոսկորները՝ խիզախ, անձնուրաց Սեղովի,
Այնտեղ, ուր հողմերը ահեղ մռնչում են
Սրկտիկան շնչով մոլեգին, անթովիչ:

Հյուսիս, դեպի հյուսիս, դեպի ճերմակ հեռուն,
Ուր քաջ ճանապարհորդ Ամունդսենն են ննջում
Սառուցների ճերմակ դերեգմանի միջում,
Հավերժաբար թաղված ծավալուն ձյուներում:

Հյուսիս, դեպի Հյուսիս, վորտեղ հարյուրավոր
Բեկեռախույզ, հանդուգն հերոսներ են ընկել,
Դեպի Հյուսիս թոփի իմ բարեկամ, ընկելք,
Քո մեծ յերկրի նման հզոր ու թեավոր:

Դեպի Հյուսիս, վորտեղ Զելյուսկինը խորտակ
Մեղ ե կանչում, վորպես հուշ մի նվիրական,
Սուրա դեպի այնտեղ, ընկեր հերոսական,
Սուրա յերկնքներով միջուտ և կապուտակ:

Սուրա արծրվաբար, վորպես Վոլոսյանով,
Վոր չունի իր սրտում վախի վոչ մի նշույլ,
Վորի սավառնակը վորպես պեզաս նժույդ
Ճախրում ե առմատերում, վե՛րը յեթերի մով:

Վորպես Զկալովը, Գրոմովը Հերոս,
Վորոնք ողային բիլ դարպասները բարցին,
Դեպի Հյուսիսային բեկեռը ձյունածին,
Դեպի Կալիֆորնյան անտառները հեռու:

Սուրա խիզախաբար հետքերովը նրանց
Ստալինյան անշեղ կողմնացույցներ առած,
Քեզ չի դավաճանի մեքենադ, կառուցած
Մեր մետաղից, մեր կուռ ձեռքերով փառապանն:

Քեզ նայում ե ահա ժողովուրդը մեր մեծ,
Իսկ դու, խիզախ, մսից, արյունից ես նրա,
Նա յե քեզ որորում իր թևերի վրա,
Նա յե քեզ պսակում դափնիներով անմեռ:

Նա յե քեզ միշտ մզում պանծալի սխրանքի,
Նա յե քեզ պարզեւում թռիչքների թևեր,
Առաջնօրդի ձայնով, և' հաղթական, և' վեհ,
Առաջնօրդի խոսքով հայրական ու անդին:

Սուրա դեպի Հյուսիս, լայնացրու գու մեր
Տերության ափերը, սահմանները թովիչ,
Ճեղքիր ովկիանները գու յերկնային մովի,
Ի փառս մեր աշխարհի, բանակի անվեհեր:

Հյուսիս, դեպի Հյուսիս, վորտեղ ձյուների մեջ
Բազում հարստությամբ բնությունն են նիրհում,
Ուր հյուսիսափայլն ե կաթնավողող ցոլում,
Վորտեղ լուսթյունն ե թագամորում անվերջ:

Մեր սառցահատները այնտեղ կառնեն դադար,
Ու կնեսեն խարիսխ ձյունածածկ ափերին,
Կիսյանա անտառը մեր նավակայմերի
Յերկնքի տակ ձյունե ու ճերմակապաստառ:

Կկառուցենք այնտեղ մենք ճերմակ ավաններ,
Ու ճերմակ քաղաքներ, շենք բեկեռային,
Ապա հանգրվաններ լայնանիստ, ծովային
Ուր կայցելեն նավերի ուրախ քարավաններ:

Մեր սավառնաւկները կիջնեն յերամներով
Յուրաքանչյուր մի որ, յուրաքանչյուր մի ժամ,
Զե վոր բեկեռն ահեղ, անմատչելի, դաժան
Դառնում և հուշ միայն հնամենի, հեռու:

Բարի յերթ, բարեկամ, քեզ հետ և սավառնում
Բուշեկյան զորեղ թեավոր մի սերունդ,
Վորին գուրգուրում և մի բախտավոր դարուն,
Մեծ, Հանճարեղ մարդու անկրկնելի դարում . . .

ՀԱՆԴԻՊՈՒՄ

1.

Հայրենիք իմ գեղանի, հերոսների որորա՞ն,
Բաժանում եմ սրտաբուխ խնդությունդ անսահման:
Ծաղիկներից անհամար պսակներ ես դու հյուսում
Գանգուրները պսակում աղջկիկներիդ դյուցազուն:
Առաջնության, հաղթության դափնիներ ես բաժանում
Կապույտները նվաճող իմ քույրերին լուսանուն:
Նրանց ուղին փառավոր վարդերով ես դու զուգել,
Պոետներին մնում ե մայրական սերն այդ յերգել:
Առ իմ յերգի այս փոքրիկ ծաղկե փունջն եւ, հայրենիք,
Տուր թեավոր քույրերիս, դուստրերին քո յերջանիկ:

2.

Գրիր վոսկե քո դրքում յերեք անուն կանացի —
Վալենտինա, Մարինա, Ասյակենկո առնացի:
Նրանք անվախ ճեղքեցին կոհակները թուխապերի,
Թուան ողի բյուրավոր անդունդներով ահալի,
Փոթորկարեր, սառցաշուչ ցիկլոպներին դիմագեր
Թուան նրանք, զեկած մի հրաշալի ինքնաթիռ:
Նրանք բացին լայնանիստ, մի հեռավոր ճանապարհ
Քո ողային նավերի յերթելեկության համար:
Նրանք մինչեւ յեթերը բարձրացրին փառքը քո,
Ու պատմեցին աստղերին կյանքի մասին մեր ծաղկու:

3.

Մոռկվա՛, Մոռկվա՛ Ստալինյան մայրաքաղաք փառա-
վոր,

Թնդում ե քո սիրոն, այսոր, վորակես պարնան
առավոտ :

Գորովանքով քնքշալի դիմավորում ես սրանց
Նրանց — իմ սեղ քույրերին, քո դուստրերին փառա-
պանծ :

Ավտոները անազմուկ այրովոմ են ալանում
Ու ծաղկահյուս պսակներ աղջիկներին քո տանում :
Իբրեւ հաղթության նշան գրոշներ են ծածանվում,
Ու կրեմլի վառ աստղերն են նրանց սիրով վողջու-
նում :

Փայտայում ե դուստրերին ժողովուրդը մեր ազատ,
Ծափահարում ե նրանց Ստալինը հարազատ :

4.

Մոսկվա', Մոսկվա' աննման, հերոսների որոքան
Ստալինն ե մեր արելը վոսկեղեն,
Նրան միշտ ել հավատարիմ ենք յեղել
Ու կմնանք հավատարիմ հալիտյան :

ԿՐՈՒՆԿՆԵՐ

Շարան — շարան յերամով
Ամեն ամրան վերջերին,
Վորակես քույրեր մտերիմ,
Սլանում են յերկնով մով
Կռունկները սիրելի...
Ախ, այնքան եմ յես սիրում
Կռունկներին մեր սիրուն :

Ամեն անգամ մանկական
Կարոտով եմ յես նայում
Նրանց յերթին հմայուն,
Նրանց քնքուշ, թովչական
Յերդն ե սիրտը իմ փայտում,—
Ախ, այնքան եմ յես սիրում
Կռունկներին մեր սիրուն :

Սերն այս մանկութ այն հեռու
Որվանից ե դեռ գալի,
Յերբ յես տեսա լուսաբիք
Մեր լճակի հայելում,
Նրանց պատկերը քնքշալի,—
Այն որից եմ յես սիրում
Կռունկներին մեր սիրուն :

Բայց այդ սիրուց ավելի
Շողլող սիրով մի անմեռ
Սիրում եմ ձե՛ղ աստղամերձ
Մովով ճախրող, պանծալի,
Մեր պողպատե կռունկնե՛ր :

Սիրում եմ ձեղ յես խորոշնկ,
իմ թեվալոր աշխարհում :

Զկալովյան սխրանքով
Յուրաքանչյուր ոդաչու
Տենչում ե ձեր հզոր չուն
Վարի մեր լայն յերկնքով,
Ի փառք մեր մեծ, շառաչուն
Խորհրդային գնդերի,
Հողի, ոդի, ջրերի :

Զե՛րն ե չքնաղ, վոսկեղոծ
Զինջ յեթերը հարավիր,
Զե՛րն ե վոլորտը ծավի
Արեվելքի յերաղուն,
Զե՛րն ե յերկինքը բեվեռի—
Տե՛րն եք անծայր, լայնանիստ
Մեր ոդային ովկիանի :

Թռե՛ք ուր ել դուք կուղեք,
Ուր ել կուղեք վերացե՛ք,
Ուր ել կուղեք սլաշեք
Մարշուտներով փիրուղե,
Ժողովուրդը մեր մեծ, սեգ
Թռի՛չքն ե հսկում ձեր հզոր
իմ կոռւնկնե՛ր փառավոր :

Թռե՛ք ու թռդ ձեր մասին,
Յերկնքի պես չինջաչյա,
Մանուկները մեր հաճախ
Յերգեր հյուսեն անբասիր
Ու յերազեն կենսուրախ
Դառնալ մի մի Զկալով,
Բելյակով ու Բայդուկով :

Թռե՛ք ու թռդ մեր խաղաղ
Հովիտները ծաղկավետ,
Գիշերները լուսավետ,
Աստղերի տակ մեր խաղան,
Անուշ նիջե՛ն լիճ ու գետ,
Այգի, անտառ՝ զով ու հով՝
Զեր հսկումով ապահով :

Թռե՛ք ու յերք թշնամի
Անդրդները մեր գեմ գան,—
Կապեք յերամ մարտական
Ու թեկերից ձեր կարմիր
Մաղեք ուսւմբեր անխափան
Ու վոսկիին արնախում
Մոխիր դարձրեք իր հողում :

ՑՆԾՈՒԹՅՈՒՆ

Ցընծա՛, աղատ իմ ժողովուրդ,
Քո բանակն ե դոփում, քայլում
Մեծ քաղաքիդ մաքուր, փայլուն
Փողոցներով լայն, լուսահորդ:
Մաղիկներով ու ծափերով
Դիմավորում ես դու աղատ
Վորդիներին քո հարազատ,
Խիզախասիրտ, քաջակորով:

Ցընծա՛, աղատ իմ ժողովուրդ,
Կարմիր հեծյալներդ են թուչում,
Ամեն նժույգ մի լույս թուչուն,
Ամեն հեծյալ կորիչ կորյուն:
Փողոցներն են բոցկլտում
Դոփյումներից քառատրոփ,
Նայիր ու թող անհուն սիրով
Լցվի քո սիրտը զվարթուն:

Ցնծա՛, աղատ իմ ժողովուրդ,
Անցնում ե քո հրետանին
Նման հզոր մի տիտանի,
Ցեվ փառավոր և սրտամոտ:
Ֆաշխտական հազար ժանիք
Դեռ կփշրես քո արկերով,
Հրագեններիդ հուր դարկերով,
Կուռ տանկերով քո աստղանիշ:

Ցընծա՛, աղատ իմ ժողովուրդ,
Բվ, դու իմ մեծ հայրենասիր,
Ենթիր նրանց փառքը վսեմ,

Ցերպդ թուշի թող չըթե - չուրիթ:
Հաղթանակով բազմախորհուրդ,
Նվաճումով բյուր, մեծամեծ
Նրանք գալիս են բարձրաբերձ
Քո լեռների լանջերից լուրթ:

Ցընծա՛, աղատ իմ ժողովուրդ,
Նվաճել են յերկնակարկառ
Նրանք քանի լեռան կատար,
Սուզված յերկնի կապույտ ծովում:
Յուրաքանչյուր բարձունք անհաս,
Յուրաքանչյուր կետ անառիկ,
Յուրաքանչյուր գետ փրփրալիք
Գրավել են նրանք անահ:

Սովորել են կուռ պաշտպանել
Կոլխոզային ամեն մի գյուղ,
Ամեն մի տուն, և թուփ, և չուղ,
Ամեն այդի ու արտ ու լեռ:
Թե պետք լինի, մենք կյանք կոտանք
Հանուն կյանքի քո հորդալի,
Մայր ժողովուրդ խորհրդալին, —
Դու արեգակ լուսարերկրանք:

Ցընծա՛, աղատ իմ ժողովուրդ,
Որինակով քո բանակի,
Աղատության, հաղթանակի
Տենչով վառված, համառ, անդուր
Կովում ե չին անընկնելի
Ժողովրդի բանակն արի,
Ցելած արդար, սուրբ պայքարի,
Բնդրեմ ճապոն գամփոների:

Ցնծա՛, աղատ իմ ժողովուրդ,
Քո բանակի որինակով,

Հերոսական Մաղրիդի քով,
Տախո գետի ափերին լուրի
Արշավում ե իսպանական
Ժողովրդի զորքը անդուլ,
Ֆաշիստական լուծը ջարդում,
Հանուն կյանքի, աղատության :

Յընծա՛, աղատ իմ ժողովուրդ,
Քո բանակի վառքն ե թնդում
Ամբողջ, ամբողջ յերկրադնդում,
Յերգն ե թոչում իր շրթե - շուրջ:
Նա սարսափի ե միշտ ել աղդում
Թշնամական վոհմակներին,
Իսկ մեր հեռու ընկերներին
Տալիս ե հույս, հավատ, խնդում:

Յընծա՛, աղատ իմ ժողովուրդ,
Ստալինյան քո բանակով,
Նրա ամեն հաղթանակով,
Աստղերիդ տակ այնքան թովուն:
Քո ջանքերով բազմաբարիք
Նա դարձել ե անհաղթ, հպարտ,
Նրանով ե յերկիրն անպարտ
Կանգնած վորպես բերդ անառիկ:

ՄԱՐԶԵՅԻՆ ԼՐԻԿԱ

ԱՆՏԱՌՈՒՄ

Գրում եմ յերգս յես անտառում,
Բայց յե՞ս եմ գրում, թե՞ սիրու իմ դո՛ւ,
Մեր անտառների թարմ բարբառով,
Մեր անտառների նման խնդուն:

Մեր անտառները յեղել են տուն
Պարտիզաններին մեր փառավոր,
Մեր պայքարներին հուր առավոտ
Կովով եր շնչում յերբ ամեն թուի:

Հիմա պառկած եմ յես անտառում,
Յեվ ընկերներս թարմ ծառերն են,
Յեվ զլուխներն են թափահարում,
Յեվ ծածանվում են ստվերները:

Բուրում ե ահա չուրջս, չըշում
Անտառի հովը գորովագութ,
Յես մեր անցյալն եմ սիրով հիշում,
Վոր սուզվեց անդարձ կապույտ միգում:

Վոր թողեց, աակայն, այնքան պայծառ
Դեմքեր, դրվագներ մեր մարտերից,
Մեր անտառներում մշտածիծաղ,
Մեր պուրակներում քնարելի:

Ինչք'ան վիւպերդներ կան չդրված,
Ինչք'ան պատմություն հերոսական,
Ինչքա՞ն արկածներ, ինչքա՞ն դրվագ,
Վոր սպասում են ձե՛ղ, մեծաքանքար

Քանաստեղծնե՛ր մեր այս ներկայի,
Մեր նկարիչնե՛ր հուր վլոձինով,
Մեր յերաժիշտնե՛ր խորհրդային,
Քանդակագործնե՛ր երայի նոր:

Յելեք դուք, մտե՛ք անտառները
Մեր հայրենիքի գեղանկար,
Տվե՛ք լաւ յերգե՛ր, մեծաքանքար
Նկա՛ր, քանդակնե՛ր: Սերունդները,
Վոր դլուխներն են իրենց դրել
Մեր պայքարների ճանապարհին,
Տարիներում այն բորբ ու հրե,
Կոփներում այն շոնքալից, —
Թող ձեր արվեստում անմահանան
Սերնդի առող յերիտասարդ,
Անտառների պես մեր այս կանաչ,
Կաղնիների պես յերկինք հասած:
Թող ապրեն նրանք, շնչեն նորից
Իրենց պայքարով, կյանքով, գործով,
Յեվ մեր վոսկեվառ այս որերին
Զինեն մեզ անցած մարտի փորձով:

ՂԱՐԱԲԱՂԻ ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԻՆ

Մանկությունից սիրել եմ յես ձյուները առաջին
Կապույտ յերկինքը քերող մեր լեռների բարձրաբերձ,
Յե՛վ աստղերը սպիտակ, և՝ ջրերը զուլալ, ջինջ,
Յե՛վ ծաղիկները վառվառ ձեր արյան պես, վոր
թափիլեց

Մեր հայրենի լեռներում... Ո, հարազատ ընկերնե՛ր,
Յես վնաբում եմ հիմա ձեր շիրիմները անտնուն,
Արահետները ձեր կոփած, ուր պայքարել, ընկել եք
Ու ձյուների տակ թողել և՛ հիշատակ, և՛ անուն —

Հանուն մեք ջինջ լեռների, մեր յերկինքի աստղադարդ
Մեր գաղտերի հարազատ, հանուն հացի ու հողի,
Հանուն մեր լավ գալիքի, հայրենիքի մեր ազատ... .

Սիրում եմ յես ձե՛ր սիրով մեր դրոշը, մեր ուղին,
Մեր լեռները ձյունածիր, վոր ձեր շիրիմը յեղավ,
Յեվ անունն եմ ձեր պահում մաքուր, լեռնային յեղ-
յամ... .

ԵԼԵԳԻԱ ՄԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՅԵՎ ԱՍՏՂԻ ՄԱՍԻՆ

Գիշերային այս ուշ ժամին
Եղերյերդ եմ գրում տխուր,
Դու, մաքտական բարեկամ' իմ,
Ուր ես, ուր ես, ուր ես, ալս, ուր :

Հիշում եմ քեզ, սիրաս ե մխում,
Շրջում անունդ անբասիր:
Դարաբաղ: Զյուն: Բուք: Մառախուղ,
Ու արնախում թեվան դաղիր:

Վնդստում եր հաղար մի դայլ,
Դաշնակցական բյուր բորենի,
Դերի վերցրեց քեզ, իմ յեղբայր,
Ենի վոհմակը նենդ թեվանի:

— Բերեք չեկին — վորոտաց նա,
Մառէրիստը այն դաղան,
Ու դուրս յելար այնպես անահ,
Դու, չիկահեր իմ բարեկամ:

Մեր լեռների պաղ պաղ քամին,
Վորպես քույրիկը քո անուշ
Աչքերն արցունք... բարեկամ' իմ,
Համբուրեց քո դեմքը քնքուշ:

— Մերկացրեք, — կրկին անդամ
Ֆշաց դահիճն արյունախում.
Քո դլմին կար կոմունարկա,
Կրան կարմիր աստղ շողուն:

Հուր, չիկացած յերկաթներով
Եեվ վոհմակը նենդ թեվանի
Խարանեց քո մեջքի վրա
Ցոթ հատ աստղ հինգթեանի:

Յերբ նայում եմ յես մարդիք
Հինգթեանի պայծառ աստղին,
Միշտ հիշում եմ կարոտով հիք
Բուռ, չիկահեր այն քաջ տղին,

Վոր բարձրաբերձ մեր լեռների
Խորհրդայնացման արշալույսին,
Թշնամու ձեռքով մեռնելիս —
Եեղավ այնքա՞ն արիստիրտ:

Յես հիշում եմ, ասում Հուրհրամ,
Շողա՝ աստղ մեր փրկության,
Հայրենիքիս հողի վրա,
Դրոշի վրա ազատության,

Կրեմլի վրա ու թե՛վերին
Մեր պողպատյա թռչունների,
Քո լույսի տակ՝ վոստիներից
Կառնենք վրեժն մեր զոհերի:

ՊԱՐՏԻԶԱՆ ԸՆԿԵՐՈՂԾՍ ՇԻՐԻՄԻ ՎՐԱ.

Պարում ե ահա ձորակի հովը,
Կապույտ մազերը ուսերին թափած,
Յես համբուրում եմ քո կոխած հողը,
Մեր պայքարների հարազատ յեղբա՛յր:

Այստեղ ընկած ե հողաթումբը քո,
Պատած ապրիլյան դալար թավիշով,
Մանուշակներով կապույտ, յերկնակույն,
Բարձրացած, յելած կյանքիդ ավիշով:

Զգո՞ւմ ես, արդյոք, ժայխտը պայծառ
Այս ծաղիկների, խոտի բուրավետ,
Յեկ այս ծառերի սոսապին անողագար:

Հիշո՞ւմ ես, քեզ հետ, ընկե՛ր իմ մանկութ,
Մենք իջնում եյինք այս ձորերը վառ
Ու մանուշակներ վիճում կապտաշուրթ:

ԶԻՌԻՍ ՀԵՏ

Մեր ձիերի մասին յես յերդ չունեմ հյուսած.
Այս գիշեր յերազում յես իմ ձիուն տեսա:

Մոռացել ես դու ինձ—նա խրխինջով ասաց,—
Բայց յեղել ենք մի որ ընկերներ հարազատ:

Դու իմ թամբի վրա, իսկ յես վորպես քամի
Քեզ թոցըել եմ ամեն մահառիթ կածանից

Այն որերում, յերբ յերկը ամեն թփի տակին
Թշնամին եր դարանած, վոխով թեժ գնդակի:

Յերբ լեռներում մեր մով ամեն մի թուփ, մի քար
Հեղափոխության վա՛ռ արյունով եր ներկված:

Քեզ յեղել եմ ընկեր անողոք պայքարում,
Քեզ հետ յես ել սովել, կարոտ մի բուռ գարու:

Վոսկորներն իմ հիմա ընկած են անտառում,
Որերիցը այն հո՛ւր, գարձած ցնորք հեռու:

Վոսկորներիս վրա խոտերն են կանաչել,
Շիրիմս յերելի դու յել չճանաչես:

Ուրիշ նժույդներ են կենսուրախ վրնջում
Ցայլաղայն, կանաչ թավիշ լեռնալանջում:

Սակայն յես ուրախ եմ, յերբ լսում եմ նրանց
Դոփիունները կանաչ իմ չիրիմի վրա:

Յեվ միշտ քե՞զ եմ հիշում դորշ շինելը հագիտ,
Նստած թամբիս վրա, հրացանը մեջքիդ.

Յեվ կոմունարկան քո կապույտ, վորպես յերկինք,
Յեվ այն տարվա ձյունը հայրենական յերկըի...

Հետո յես հիշում եմ քո աչքերը խնդուն,
Վորոնց ձյունը տարսավ մեր լեռներում հետո:

Արցունքով ե՞ն լցվում, ախ, հիմա յել արդյոք,
Թոհ ժպտում են հասուն, ամառային արտում:

Ախ, կուզեյի կրկին քեղ հետ յես ել լինել,
Թոցնել քեղ լեռները, մարդեր, կիրճեր անել:

Կշոյեյիր կրկին դու իմ բաշը փրփուր
Ու նոր կալսած զարով կկերակրեյիր ինձ դու...

Կթոչեյինք թարթառը, ... անարատ ջրերով
Կլողացնեյիր ինձ դու դորովանքով, սիրով...

Իսկ հարկավոր ժամին հեծդնդի հետ կարմիր, —
Մենք մա՛րտ կսուրայինք, ինչպես հուժկու քամի:

Կլինեյինք ելի բանակայինե՞ր շիտակ
Մեր հայրենի յերկրի ցոլուն աստղերի տակ:

Ուրիշ ձիերի յե վառ բախտն այս վիճակին,
Շիրիմս վաղուց ե կանաչ թավիշ հագել:

Սակայն յես ուրախ եմ, յերբ լսում եմ նըանց
Դոփյունները զվարթ իմ շիրիմի վրա:

ՔՐՈԶ ՊԱՏՄԱԾԸ

Աչքերը սեվ, վոնց գիշեր,
Մազերը ցրիվ, —
Քաջ աղբերս ձին քչեց
Ու գնաց կոխվ:
Քաջ աղբորս ձին խաղաց —
Մարերի քամի,
Քաջ աղբերս բոլցեմիկ,
Պարտիզան կարմիր:
Թողեց մենակ մեղ տանը,
Մարեր բարձրացավ,
Կողքից կապած նազանը,
Մեջքին հրացան:
Պառավ մերս լաց յեղավ
Եղբորս ճամբին,
Մի կարմիր քող կապեցի
Իր ձիու թամբից:
Ինչքան քատրակ, չքավոր
Տղերք քաջասիրտ, —
Քաջ յեղբորս հետ յելան
Մարը միասին:
Ով մարտում, դեղբերում
Զենք ուներ պահած, —
Հանեց դաշնակների դեմ
Կովի աննահանջ:
Կորչի՛—ասին—կարդերը
Ալան - թալանի,
Կտըենք մեր սեղ լեռներից
Վոտքը թեմվանի,

Վոր մեր մալը չքշի
Սարերից, հանդից
Ել վոչ մի մառղերիստ,
Ու վոչ մի բանդիտ:
Եսպես յերգով բարձրաձայն,
Մեկ տեղ, միասիրտ,
Յեղբորս հետ բարձրացան
Սարերը միասին:

2

Ա՛խ, սարերում, քերծերում
Զյունախառ քամի,
Քաջ յեղբորս վոտքերը
Ճուրտը կտանի:
Զյունից, ցրտից կսառեն
Ա՛խ, իր ձեռները,
Զյուն ե կոխել ու դուման
Տումա լեռները:
Ամպ ե կապել ու դուման
Բուք ու բորանում,
Տասը աղջիկ մի գոմում
Գուլզա յենք անում:
Հաց ենք հունցում ու թիւու,
Ղրկում սարերը...
Հիմա վոր միտա են ընկնում
Ա՛խ, են որերը:
Շուն թեվանին ողնության
Հասավ Նժդեհը,
Թալան գցեց գյուղերը,
Ու հրդեհեց:
Մի գիշեր ել խուժեցին
Մեր գյուղը առան,
Թանջապար հորըս բռնեցին
Գեղամեջ տարան...
Մառղերը հանեց

Խմբագետը սեվավոր,
Խմբագետը սպանեց
Հորս ալեվոր:
Հորս դիակը փոեց
Մի ավեր բակում,
Նրա շիրիմին հիմա
Վարդեր են ծաղկում...
Տարան մեր յեզն մորթեցին,
Ու քեֆ արին,
Արցունք կաթեց մեր աչքեց,
Ու որտից արին:

3

Են սեվավոր, սեվ տարին,
Ա՛խ են որերը,
Ինչե՞ր, ինչե՞ր ել չարին
Դաշնակ չները...
Լիքն ե սիրտս...
Ակն, ենքա՞ն
Բան կա հիշելու...
Մի որ ել եղ լորերը,
Փախան գիշերով:
Փախան: Կանուխ առավու
Մերոնք գեղն առան.
Քաջ աղբերս վիրավոր,
Սարից տուն գառավ:
Յեկան իր քաջ ընկերներ,
Ինքը կոմիսար եր,
Կարմիր Բանակը առես
Կանաչ մի սար եր:
Կարմիր Բանակ, վոր յեկավ
Նրանց ահ յեկավ,
Դաշնակցական գելերին
Արյուն - մահ յեկավ:
Կարմիր Բանակ վոր յեկավ —
Սրտներս բաց յեղավ,

Աւանչովարին արքատ կյանք,
Հալալ հաց յեղավ:
Կարմիր Բանակ վոր յիկավ
Սարերի դոշով,
Մեր հաղթանակն եր յիկավ
Կարմիր դոշով:

ՄԱԶԵՐԸ

Մայրերը իրենց մանուկների
Մազերը չա՛տ են, չա՛տ են սիրում,
Վորպես մանկության մի սիրելի
Հիշատակ, միշտ ել պայծառ, փիրուզ, —
Կտրում են իրենց սիրած մանկանց
Գանգուրներիցը մի փունջ անդին,
Գուրգուրում, պահում յերկա՞ր — յերկա՞ր,
Ու միշտ ել սիրով խանդաղաղին,
Իմ մայրն ել, ահա, մի իրիկուն
Կտրել ե մի փունջ իմ մազերից
Փաթաթել, պահել իր սնդուկում,
Մայրական սիրով մի նազելի:
Յեվ իմ ծննդյան պայծառ տոնին
Հիացել ե նա այդ փունջ մազով,
Յեվ խաղաղիքներ ե ինձ ձոնել
Յեվ լավ ապագա ինձ յերաղել...
Այն որերին եր արնազազիր,
Յերբ փախեփախին թողինք գյուղը
Բոցերի գրկում պատերազմի,
Ճանկերում մահի ու յերկյուղի...
Այրվեց Հայրենի իմ խրճիթն ել,
Այրվեց սնդուկն ել իմ մայրական,
Վորպես բոցն ընկած վոսկե թիթեռ,
Այրվեց յեվ իմ այն թուխ, մանկական
Մազերի փունջը քնքաղանդուը,
Մայրական համբույրները վրան,
Յեվ մոխիր դարձավ մառ կրակում,
Ու դարձավ մի հուշ սրտաղբավ...

Յերբ դառնում եյինք մենք ճամբարից,

Իր մանկությունից իբրեւ մի հուշ,
 Զբույցի մեջ իր պարզ ու անուշ,
 Այս դեպքն ինձ պատմեց անցյալ տարի, —
 Մեր կոմիսարը զինվորական,
 Վոր միշտ կանգնած ե աչքիս առաջ,
 Մաղերը ձյունե, սիփ ճերամակած,
 Հայացքն հայացքին իմ հառած:
 Նա միշտ լինում ե գվարթերես,
 Միշտ նույն ժամանվ մեղմ ու բարի,
 Նա, վոր անցել ե բոցերով կեզ
 Քաղաքացիական մեր պայքարի:
 Վորի սիրելի, լավ անունը
 Հնչել ե իբրեւ ահեղ սարսափ,
 Զորքերի համար թշնամու նենդ,
 Քշված մեր յերկրից դալարասի:
 Նա, վոր խաղացրել ե սուրը սուրսայր
 Նրանց հետեւից, այնքան հմուտ,
 Յեվ մեր լեռներից՝ ձյունապատկ
 Ցրել ե նրանց խմբերը մութ:
 Նա, վորի հարուստ ուազմի փորձով
 Իմ հայրենիքն ե հիմա սղատ,
 Յեվ հարազատ ե, յեվ շեն, յեվ ծով,
 Յեվ նոր փառքերով մեր լուսազարդ:
 Նա, վորի պայծառ, լույս կենացն ե,
 Գուցե այս պահին խմում ուրախ
 Կոլտնտեսային մի գյուղացի,
 Իր սեղանի շուրջ՝ լի ու շոայլ,
 Նա, վորի գանգուր մաղերը թուխ
 Մեր պայքարներում ճերմակել են,
 Ինչպես հունվարյան ձյունը շողշող,
 Վոր ծածկել ե մով մեր մարդերը:
 Յես ունեմ միայն մի ցանկություն
 Հորձանուաներում մեր պայքարի,
 Դուք ել ճերմակեք, մաղե՛ր իմ թուխ,
 Գանգուրների պես կոմիսարի:
 Դուք ել ճերմակեք, կովում սակայն,

Ուսման մեջ, սակայն, աշխատանքում,
 Մեր առողիայում հերոսական,
 Ուսանողական մաղեր գանգուր:
 Զեր յուրաքանչյուր մեն մի թելը
 Թող կապված լինի կյանքին մեր նոր,
 Վոր ինձ ել սիրեն մեր դնդերը,
 Զորամասերը՝ մեր փառավոր,
 Վոր ինձ ել հարգեն, վոնց քաջարի
 Կոմիսարին են մեր լավ հարգում,
 Վորի մաղերը ճերմակալիք
 Պայծառ գլուխն են իր պսակում:

Գ Ո Ր Ա Գ Ը

Նայիր, բարեկամ, դու այս գործին
Բազմածաղիկ ու բազմայերանդ.
Նման ե այնքան գարնան մարդի,
Գարնան ծիածան ե լույս յերազ:
Այստեղ ցանված ե շնորքն անհաս
Իմ Ղարաբաղի չքնաղ կանանց,
Իմ Ղարաբաղի հարսերի նուրբ,
Յեկ աղջիկների պայծառանուն:
Յերբ այն դու կախես քո տան պատից,
Յերբ նայես նրան ու հիանաս,
Խնդրում եմ այն ժամ չմոռանաս
Մեր աղջիկներին տալու պատիվ:
Յեկ Ղարաբաղը հիշես սիրով,
Իր չքնաղագեղ սեգ լեռներով:

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Իմ հայրենի, իմ ջինջ լեռնաշխարհում
Հնչում ե անունդ՝ գարնան հորդուն ջրվեժ,
Քո վեհ մտքերով են մեր մտքերը սնվել,
Ո՞, ղեկավա՛ր, անդուլ մեր ընթացքը վարող...

Խոսքերդ հնչում են վորպես շառաչ նոր,
Խոհերդ են շրջում վերջին հունդը, ծի՛լը.
Մեր յերկնքի նման բարձր ու անծի՛ր ե
Քո անունը պայծառ, ո՞, առաջնո՞րդ:

Մեր յերկնքի նման։ Ահա մի մարդ հողի,
Մի լեռնական հովիվ խոսում ե քո մասին,
Շողում են աչքերը ուրախության չողից։

Կարոտներով, սիրով անափ ու լիասիրտ
Քեզ տեսել ե մի որ նա Մոսկվայում հեռու, —
Այդ վառ հուշն է հիմա կատույտ իր աչքերում։

ՆՎԵՐԸ

Նրան հյուր ընկա : Մենք մտանք խրճիթ,
Նստեցինք շուրջը թեյասեղանի,
Սփռոցի վրա ձյունի պես վճիտ
Բաժակներն յելան թեյով ծիրանի:
Հարսը ձեռքերով արեվառ, բարակ,
Բերավ վոսկեդույն մեղր ու կարագ,
Լուսնյակի նման հացերը կլոր
Սփռոցի վրա շողշողացին լույս:
Որորոցի մեջ մանկիկը ժպտաց
Մանկական թեթև պայծառ յերաղում,
Յեկ հանկարծ դրսում վրնջաց անզուսպ
Մի ձի՝ խրխինջը ջրվեժ եր հստակ,
— Զի՞ս ե, կոլխողն ե ես ձմեռ տվել
Լավ աշխատանքի համար ինձ նվեր :

ԹԱՐԹԱՌԳԵՍ

Ճերմակ չենքերի մի չքնաղ շարան
Այս շառաչաձայն գետի յեղերքին
Կանդնած ե, ահա՛, վորպես հուշարձան,
Կենդանի վըկա կառուցող ձեռքի :

Դեմը ջրվեժն ե թակալվում արծաթ—
Ելեքտրալույսի աղբյուր ու արձան,
Բնությունը խոլ, կուսակա՞ն, վայրի՛,
Փոխել ենք փարթամ դրախտավայրի :

Այգեստանները կանաչ, համասվեյուռ,
Լեռնուղիները լայն, ալտոյասույլ,
Յեկ գյուղերը նոր՝ վողողված լույսով,
Մըտերը կիզված հույզերով մաքուր :

Այդ քո նոր փառքն ե, հայրենի՛ յերկիր,
Զուր ուրախության, ակունք իմ յերգի :

ԲԱՄԲԱԿԱՔԱՂ

Արտերի վրա իջել ե կարծես
Առաջին ձյունը թեթև ու մաքուր:
Բամբակնին ե ճերմակ վարդի պես,
Ծաղկել-ծիծաղում ե ամեն մարդում:
Ահա քաղում են հարսերը խնդուն,
Լույս աղջիկները, կանայք զվարթուն՝
Վարդերը ձյունե, վարդերը պայծառ՝
Նախանանային արտերում անծայր:
Յեկ նրանք գիտեն մտքով ու սրտով,
Վոր դուք, ձյուն վարդեր ճերմակափթիթ,
Մեր ֆաբրիկներում դառնալու յեք չեթ,
Շորեր խշխուն ու պայծառաթով,
Վոր մտնելու յեք և տուն, և լորձիթ,
Գրկելու կանանց մարմինը վըճիտ:



Զմռան իրիկուն: Յերկինքն ե ծաղկել
Ճերմակ աստղերով: Խրճիթը ձյունե
Իր ձմեռային քուրքըն ե հագել:
Մի կթվորուհի մեզ հյուր ընդունեց:
— Համագումարը մեզ համար տոն եր:
Ուրախություն եր: Յելա տրիբունը,
Միրտս ուզում եր կրծքից թռչի
Ուրախությունից այդ մեծ, առաջին:
Պատմեցի մեկ-մեկ յես մեր կոլիսողից,
Իսկ խոսքիս վերջում ՍՏԱԼԻՆՆ, ինքը
ինձ ծափահարեց ու սեղմեց ձեռքս:
— Վողջուներս տար, ասավ, ձեր մարդին.
Խնդրեցի նկարը — մակագրեց,
Ահա, նայեցեք, — և ինձ նվիրեց:

ՄԱՄՈՒԼԸ

Յեվ այն կարդում են լեռներում հեռու
 Մեր հովիվները՝ քարափին նստած,
 Սերմնացանները՝ մեր ծով հերկերում,
 Սահմանապահները՝ արթուն, զգաստ:
 Յերկրաբանները՝ նսվթի, վոսկու,
 Բնթերցողները՝ Մայակովսկու,
 Նախատիները՝ նավերի վրա,
 Սավառնորդները՝ հյուսիսի թռած:
 Նա հայելին և լենինյան հողի,
 Նրանում տեսնում եմ մեր յերկիրը,
 Մեր հերոսներին ու մեր յերգերը,
 Անցած, անցնելիք մեր անշեղ ուղին:
 Կարո՞ղ ենք ապրել մենք առանց նրան
 Մեր խորհրդային տիկերի վրա:

Սիրում եմ յես քո յերկինքը զուլաւ,
 Զինջ գեշերների աստղերով ծաղկուն,
 Նրա արեսվ լուսե գվայուլան,
 Թառ - սաքկիղը, բամբակն և ծաղկում,
 Տոթ, վոսկեհակինթ խաղողն և հասնում,
 Յե՛կ պերճ, և՛ շքեղ, և՛ վոսկեհասույթ,
 Բաղերում, այգում կոլտնտեսային
 Գինին և հորդում չոդ ու հմայիչ:
 Թարթառն և վշշում արծաթաքքեիջ
 Ու վարպետները ընտիր ցորենի
 Արտերն են հնձում վաղ առավոտից—
 Խուրձերն են վոսկե ընկնում գերկ-գրկի:
 Ո՛, հարուստ շըջան, բնդուն հող, յերկիր,
 Ներշնչանք իմ նուրբ, իմ քնքուշ յերդի:

Պ Ա Պ Ը

Զմեռն ե նայում ինձ ձյունաչյա
իմ հայրենական որոքանից,
Դաշտերի վրա ճերմակ լաշակ
Ու արշավասույր ձյունոտ քամի:
Գետախնյա կաղնին այս ձյունածածկ,
Կարծես իմ պապն ե դեմս կանդնած
Միբուքով ճերմակ, արծաթեղեն —
Ասում են ջրաղացպան ե յեղել,
Յեկ հարյուր տարի հարուստների
Ցորնի շեղջերն ե աղացել լուռ,
Բայց յերբ մեռել ե, մի բուռ ալյուր
Չի յեղել տանը: Սովոր ձեռքին
Թողել ե անդարձ ընտանիք, տուն
Յեկ ինձ — թոռնիկին իր խլառուն:

ԱՆՁՐԵՎԸ

Անձրեվն ե մաղում, հողը ծծում ե
Սել շրթունքներով ջինջ կաթը նրա,
Հողում հունդերը զվարթ ցնծում են,
Յերգում գալուստն իր՝ բարերեր, շոայլ:
Հողի հետ յերկրիս ծփուն ծիլերի,
Ծիծդուն ծառերի, ծաղիկների լուրթ
Անունից, հոգուս յերկնի ծիլերից
Քեզ յերգ եմ հղում, տաղեր վոսկելույս:
Մաղիր մայրենի մարդերի վրա,
Ո՛, մարմանդ, մարմանդ արցունքները քո
Արտերի վրա՝ հովիտով փոված,
Պուրակի վրա՝ կաղույտի ներքո:
Տո՛ւր նրանց կաթդ, տո՛ւր նեկտարներդ,
Հույլ բերքով ծփան մեր հեկտարները:

ՇԻՐԻՄԱՔԱՐԸ

Գետի յեզերքին, յերկու կաղնու
Փարթամ ճյուղերի լայն ստվերում,
Մանուշակներ են վորտեղ քաղում
Գարնանը մանուկները սիրուն,
Սոխակն ե վորտեղ յերդն առաջին
Խառնում ջրերի ջինջ շառաչին—
Շիրխմաքարն ե նրա ընկած,
Վլրեն ել սազը իր քանդակած:
Տաղերը նրա կարկաչում են
Նման այս գետին հստակահոս,
Դաշտերում, հանդում, փոթորկահույդ
Հարսանիքներում: — Հաստատում են՝
«Աշուղը մեռնում, տաղն ե մնում»,
իմաստությունը, ատված հնուց:



Քնարերդության ջինջ բաժակով
Են յերդ եմ հանում սրտիս լճից,
Ծաղկունքն է ծաղկել լույս, — խաժաղույն
Վիթի աչքերի նման վճիտ:
Այդիներում պերճ, մարդում չքեղ
Փեթակներ չար - չար ու յերմնագեղ,
Մեղուների պար, յեռ ու զեռ, յերթ,
Ծաղիկների բույր, արեվի յերդ:
Մեղուներն են բյուր անհաղ ծծում
Լույս ծաղկափոշին, լույս ավեշը
Այս ծաղկանց և այս զարնան թավիշը,
Յեկ լույսն արեվի անհուն, ցնծուն:
Փեթակների մեջ վորպես դոհար,
Հոսում ե մեղը կոհակ-կոհակ:

ԳԱՐՈՒՆ

ինձ անտառներն են նայում շքեղ
իմ Ղարաբաղի հստակ յերկինք,
Դրոշներն են հանել կանաչագեղ
Ծառերը, յելած գարնան յերթի:
Բուրում ե դաշտում, լեռան լանջին,
Աղջկա նման, խոտն առաջին,
Զուրն ե քրքջում, տիղմով պղտոր,
Յերկինքն ե նայում ճերմակ թէպով:
Վաղ գարնան անձրևներն են վիտում,
Այդչափ շոայլ ենք բազմացնելու
Մեր վոչխարները այս լուրթ լեռներում,
Հովհաններում այս մոտ ու հեռու:
Լսում եմ նրանց ջինջ մայունը,
Յերաժշտությունից հմայուն ե:

ՓՈՍՏԱՏԱՐԸ

Նստած նիկելած շողուն հեծանիվ՝
Թուչում ե խճուղու ճերմակ յերիզով,
Նայում ե վոսկեգույն ծիածանին,
Անափ արտերին կապույտ հորիզոն:
Պայուսակներում քնած են լոին
Որվա թերթերը (թարմ լուրերով լի),
Ուրախ կամ տիխուր նոր նամակների
Փնջերը, հեռագրերը վերին
Մեր որդանների: Թուչում ե թեթեվ,
Բրիգադները կանչում են «կռունկ»,
Շտապ նրանց մեջ իր բեռն ե ցրում—
(Հեռագիր, նամակ, խչխչուն թերթեր)՝
Թողնում ե ապա նրանց իր յետեվ,
Անցնում ե ուրիշ ֆերմաներ, արտեր:

ՀԱՅՐԵՆԻՔ

իմ հայրենիքի գետերն են հստակ,
իմ հայրենիքի լեռներն են ծաղկուն,
իմ հայրենիքի ամեն թփի տակ
Մի քաղցրագայլայլ տոխակ է յերգում :

իմ հայրենիքի աղբյուրները ջինջ
Բյուրեղ ջրերով միշտ ինձ են կանչում,
իմ հայրենիքի ամեն մի լճից
Բաղերի հազար յերամ ե թռչում :

Ծնվել եմ նրա պուրակներում թարմ,
Անտառներումը կուսական, վայրի,
Նա յե տվել ինձ իր յերգերը վառ,
Մեղեդիները՝ անուշ, լեռնային :

Փակում եմ, ահա, աչքերս, ահա
Մոամին եմ տեսնում կեցած իմ դիմաց,
Սպիտակակուրծք յեվ ձյունավահան,
Գագաթը հասած յերկինքն ամպամած :

Թարթառն ե, ահա քարերին փշռում
Խոլ կոհակների հնչուն ապակին,
Ահա ձորերը մեր ամպամշուշ
Յեվ հորիզոնը նրանց ամպագիծ :

Դեռ վոչ մի պոետ չի յերգել նրանց,
Դեռ սպասում ես դու քո յերդչին,
Հայրենի հող իմ, անցյալով մռայլ,
Ներկայով լուսե ու արեվածինջ :



Հիմայ յերգում եմ յես քո մասին
Հայրենի հող իմ, Ղարաբաղ իմ,
Հարսերիդ մասին վոսկեմազիկ
Յեվ աղջիկներիդ զվարթ ծաղիկ :

Նրանցից մեկը հաճախ, հաճախ
ինձ յերևում ե իմ յերազում,
Աղբյուրներիդ պես հստակաչյա,
Աղբյուրներիդ պես քաղցրակեղու :

Նրա աչքերում տեսնում եմ քեզ,
Յերկիր լեռնանիստ, անտառազարդ,
Դո՛ւ արեվային կարոտ իմ կեզ,
Ի՛մ լույս որորոց, ի՛մ հարազատ :

Կնսում վաղը յես սավառնակ,
Կթոչեմ գիրկը քո բարձրանիստ,
Ճեղքած յերկինքդ կապտակամաք,
Ինձ կվողջունե քնքուշ քամիդ :

Կփաթաթվի նա իմ վզովը,
Այն աղջկա պես ինձ կփայի,
Ես յերազում եմ հողդ, զովից
Հայրենի հող իմ, ծաղկուն մայիս :

ԱՆՁՐԵՎԻՑ ՀԵՏՈ

Անձրեվից հետո անուշ բուրում է
Լեռնային ողբ հայրենիքիս,
Շնչում եմ, թվում և համբուրում եմ
Սիրած աղջկաս ըրթերն անդին:

Ահա լեռները մեր անտառանիքստ,
Ախ, կանաչ, կանաչ, այնքան կանաչ,
Ահա լեռնային թարմաշունչ քամին
Ծաղկանց բուրմունքն ե բերում անափ:

Անձրեվն ե թափել կաթը լուսաշիթ
Բաժակների մեջ սաղարթների,
Առուն ե անցնում կարկաչով հուշիկ,
Յողում խոտերը իր յեղուրի:

Բոմանսներ են յերգում սրտառուչ
Վայրի հավերը սիրահարված
Փարթամ պուրակում ու զով անտառում
Ու թփերի մեջ՝ անձրեվաթաց:

Յես ճանաչում եմ քեզ, իմ հայրենիք,
Քո հողը, ջուրը ճանաչում եմ,
Ու կարստում եմ չքնաղ վայրերից,
Իյ նվազներով քեզ կանչում եմ:

Ինչ անուշ եք բուրում, վարդե՞ր,
Իմ լեռնային հայրենիքի
Թափառում եմ զվարիթաղեմ
Սատղերի տակ ձեր յերկնքի:

Մանկությունից ամեն ծանոթ
Թափի մոտով անցնում եմ յես,
Զեր փնջերով ինձ այնքան մոտ
Բարեռում եք մտերմի պես:

Բարեռում եք ինձ, գուրզուրում
Մեր բնության հմայքներով,
Աւ լցնում եք սիրտս անհուն
Գիշերային ձեր բույրերով:

Բույրե՞ր, բույրե՞ր, ցանված սարով
Բնկած կանաչ կածաններով,
Բույրե՞ր ցանված արոտներով,
Հովհաններով ու լայներով:

Բույրե՞ր, մաղված թփերի մեջ,
Ափերի մեջ գետակների,
Զափարի մեջ բաղերի պերճ,
Բույրե՞ր, այնքան ջինջ, հաճելի:

Ինձ թվում ե այս ուշ ժամին
Զեր բույրով են բուրում առուն,
Յե՛կ գաշտային բարակ քամին,
Յե՛կ աստղերը հեռու հեռվում:

ՅԵՎ լուսնյակը, վոր ասես թէ
Մարդու տալու մի աղջիկ է,
ՅԵՎ այս մարդը շաղոտ, թա՛ց, թե՛ն,
ՅԵՎ այս այդին մրդով լիքը:

Հիմա հարբած ձեր բուրմունքով
Լորիկներն են անուշ քնել,
Արտուտները արտերում ծով,
Արագիլը՝ չինարուն մեր:

Վարդե՛ր, վարդե՛ր, իմ յերնագեղ
Դուք բույրեր եք ցանել այնքան,
Վոր հայրենիքը ձեր չքեղ
Կոչում են լույս մի բուրաստան:

Ավիտ ժայռից ի՞նչքան եմ ջրերի մեջ քո թռչել,
Փլուել նրանց հայելին, մինչև հատակը առողջել,
Քարեր հանել հատակից վոսկելույն ու փիրուզե
Ու ճացել մանկական յերջանկությամբ խոր ու ջերմ:
Ու ճացել մանկական յերջանկությամբ խոր ու ջերմ:

Արծաթաղոծ ձկներին յերամները խլոտուն
Լող Են տալիս կարկաչուն իմ հուշերի ջրերում,
Նրանց ինչքան եմ բռնել մանկության լույս որերում,
Լցրել մաղախս մաշած, հպատությամբ բերել տուն:

Զինարների վոտքերն ես հարաի նման լվացել,
Վորոնք կեցած են ափիդ հասակներով սլացիկ,
Ուռենիներն են լվացել իրենց վարսը թափանցիկ
Կոհակներում քո, գետ իմ, Ծրառան ու լիածեռ:

Կամըջել ե, ո, հիմա կոհակներիդ շառաչուն
Հեղբոկայանը ձերմակ՝ կառուցած մեր ձեռքերով,
Լույսն ե հոսում լարերով դեպի կալերի հեռուն,
Ու խրձիթները յեռուն, իմ ինդություն արծաթջուր:

ՅԵՎ յես հիմա տողերով իմ ներդաշնակ ու հնչուն,
Քո ափերն եմ գովերդում, քեզ եմ յերգում ու
կանչում:

ԱՆՏԱՌ

Աշնանային անտառ, կին դեղնավարս,
Աշնանային չողուն քո վոսկին ես թափում,
Քամին ծառերի հետ պարում ե վայլս
Վոսկե տերեվաթափ, վոսկե թափոր...

Տերեվները դեղին թռչունների նման
Թռչուններով ահա իջնում են գետին,
Կամ նստում ջրերին հստակահոս գետի,
Քշվում առաջ, վորպես մակույկներ վոսկեման:

... Այդպես տարիներն են թափվում իմ
Յերիտասարդական հասակի այս զուլալ,
Բայց յես պահելու յեմ սիրոս, ո, միշտ
Մշտականաչ, վորպես սոսիների պուրակ:

Քանզի մեր արփերում նոր ու արեվային
Ջյունազարդ մաղերով
Ծերունիներն ել յեռում են, վորպես պատանի,
Քանզի մեզ մոտ ձմեռն ել դառնում ե լուրթ մայիս,
Աշխատանքով, կյանքով հոգեթով ու անիհար:

Աշնանային անտառ, խարտյաշ իմ սիրուհի,
Աշնանային վոսկի չքնաղ կեչիների,
Զարդարեցե՛ք պոետի յերգերի լույս ուղին,
Եել մնացե՛ք միշտ ել մտերիմ, սիրելի...

ՄԱՐԳՈՒՄ

Մեջքիս վրա պառկել եմ
Թափիչ կանաչում,
Շուրջս գարնան մարգերն են,
Գարնան գետակ, գարնան ջուր:

Պարզ յերկնքով յերամով
Անցան հեռանիստ
Ճերմակ — չուշան ամպերը
Մեր սիրելի Տերյանի:

Իոկ պայտերի տակ ձիուս
Մոտիկ գետավում,
Խոտն ե ահա տրորվում
Անկողնու պես մի փափուկ:

Դեմքիս քամին ե քավում
Մաղկանց բուրմունքով
Ու թուի մաղերս չոյում
Քնքուշ, կապույտ իր ձեռքով:

Խաղաղություն ձեղ ծանոթ
Դաշտեր ու մարգեր,
Մանկութ որերում եմ իմ
Մեկ ել այսպես յես պառկել,

Աչքերս հառած կապույտին,
Թափիչ կանաչում,
Շուրջս բուրող ծաղիկներ,
Գարնան գետակ, գարնան ջուր:

Պայծառաքանքար յերդասանը,
 Գարուն, ծաղկավոր քո պառնասում,
 Սոխակն ե, նրա յերդուն ձայնը
 Յես հիացքով եմ միշտ ել լսում...
 Յես մեծ սիրով եմ ականջ անում
 Դայլայլիկներին նրա անուշ,
 Իրիկունները նամանավանդ,
 Յերբ վոր լուսինը, վորպես նավակ
 Լողում ե յերկնի բիլ ովկյանում:
 Այդ սկահին, ահա, սոխակն հուզված
 Յերգում ե վարդի թափ թփերում
 Խնձորենու տակ արդեն քնած...
 Յերգում ե այնքա՞ն խոր ու ներսիրտ,
 Յեվ յես սենյակիս պատշգամբից
 Մեղեղին եմ իր լսում անբիծ
 Մեր յերկրի մասին գեղատեսիլ...
 Բնության մասին մեր ամպաշարՓ
 Թավիչ լեռների պանորամով,
 Յերկնքի մասին մեր աստղաշատ, —
 Աքողմած կարծես ճերմակ ձյունով...
 Յերգում ե ձայնով նա սիրավետ
 Ծաղկուն թփերում, նրանց Փոնում,
 Մրցելով ասես պատիՓոնով
 Կարկաչող Շարա Տալյանի հետ...
 Ունկ դրե՛ք ինձ հետ նրա ձայնին

Վարդե՛ք վառվռուն, հովե՛ք շոյող,
 Եարմաշո՛ւղ, կախված մեր հնձանից,
 Նուենի՛, զուգված կարմիր շորով...
 Յեվ որորեք, դուք, բարդի՛, հոնի՛,
 Մարդկոմի այլու պարտիզանի
 Գիշերն աստղալից, յերբ նա աննինջ
 Դրքերն ե կարդում Միջուրինի...

ԱՅՍՏԵՂ ՀՆԶԵԼ Ե ՔՆԱՐԾ...

Այստեղ հնչել ե քնարը
Քնարերգակ նաթավանի^{*})
Յեկ յերդել ե մեր դեղանի
Ղարաբաղի լեռնաշխարհ :

Նա յերդել ե այնպես նազով
Աղջիկներին Ղարաբաղի,
Նրա անուշ, հնչուն տաղին
Նախանձում եմ յես և այսոր :—

Յեղնիկներ են ահա շրջում
Կախարդական թափ անտառում,
Շուրջը դարուն մի դալարուն
Ու աղբյուրներ՝ հորդ, կարկաչուն :

Վայրի հավքն ե սարում կանչում
Գիշերային իր մեղեղին,
Չի ճանաչում դուրան ու դին,
Լոկ յարին ե իր ճանաչում :

Ահա հարսերը խնդալի
Կժերն առած ուսերին նուրբ,
Ամեն մինը մի չքնաղ թուի
Կաթնաղբյուրից տուն են դալի :

Սոխակներն են պարտեղներում
Համերդ տալիս ծաղիկներին,

^{*}) Աղբյուրեղանական ականավոր բանաստեղծուհի :

Դարունքվա արդ բալիկներին
Կապուտաչյա, քնքուշ, սիրուն :

Ու հովերը պար են դալիս
Դադաթներին բարդիների,
Փափուկ յետաքսը խոտեքիդ
Չի մոռանա յերբեք հոգիս :

Արշալույսն ե հազնում վառման
Վարդակարմիր իր ծիրանին,
Դու, Ղարաբաղ իմ գեղանի,
Դեղեցկուհի յես անհման :

ՅԵՐԳ, ԳՐՎԱԾ ԶՐԱՂԱՑՈՒՄ

Մատա ջրաղացը
 Գեսի յեղերքի,
 Ալյուրը, հացը
 Յերգիլ դու, յերգ իմ:
 Զվալներ են լի
 Ալյուրով սպիտակ —
 Ֆուրդոնում, սայլում
 Ու սրահի տակ:
 Դու ճերմակ ալյուր,
 Ճերմակ ցորենի,
 Մաքուր ես, մաքուր,
 Նման ես ձյունի:
 Մեր կոլխոզները
 Հարուստ են ու չեն,
 Քեղնից հարսերը
 Գաթա կթխեն,
 Լավաշ կթխեն
 Շուշանի գույնի,
 Ու կփռեն լեն
 Սուփրին, սեղանին:
 Լինի հարսանիք,
 Թե լիոր լինի,
 Անպակաս ե միշտ
 Մեր հացը, գինին:
 Միսն ե անպակաս
 Մեր պերճ լեռների
 Գրկում մեծացած
 Շարմաղ դառների:
 Սպիտակ ալյուր,
 Սպիտակ հացով,

Վարդ գինով հուրհուր,
 Թարմ խորովածով,
 Մեր քեֆերն են ճոխ,
 Խնջույքը՝ խնդում՝
 Մեր միշտ լիաշող
 Սեղանն ե թնդում:
 Մեր այս յերշանիկ
 Յերկրում դվարթուն,
 Չունենք սով, կարիք
 Ու աղքատություն:
 Զվալներով բյուր
 Անցիր տնից տուն,
 Սպիտակ ալյուր —
 Ծով հարստություն:

ԻՄ ՂԱՐԱԲԱՆ

(Դաստան)

1

Հնում հազար ահ ես տեսել,
Հազար մելիք, շահ ես տեսել,
Արյուն, ավեր, մահ ես տեսել,
Քեզ արին դադ, իմ Ղարաբաղ:

2

Սև որերում քաղց ու սովեր,
Մեր դարդերը անտակ ծովեր,
Բոնակալ տերը ուժով եր
Ու չուներ վախ, իմ Ղարաբաղ:

3

Դաշնակ, մուսավաթ կոփէ տվին,
Մեր արյունը ցրիվ տվին,
Արի, հրի, մրի առին
Շեն ու դշաղ, իմ Ղարաբաղ:

4

Նրանք հադած հուր-հրացան,
Զքնաղ Շուշին արին կործան,
Դարձրին մի բուռ մոխիր ցիրցան,
Քաշեցիր ախ, իմ Ղարաբաղ:

5

Կարմիր զորքը վատին քշեց,
Դաշնակ - մուսավաթին քշեց
Յեկ ուրիշ շատ-շատին քշեց,
Քաջ ու դոչաղ իմ Ղարաբաղ:

6

Բոլցերիկան ծեռքը փրկեց,
Բոլցերիկան զենքը փրկեց,

Քեզ մեր կարմիր յերգը փրկեց,
Ազատ, խաղաղ իմ Ղարաբաղ:
7

Դուշմաններիդ տունն ես քանդել,
Ամեն խախուտ սյունն ես քանդել.
Մութ վորջերը, բունն ես քանդել,
Ալվան բայրաղ իմ Ղարաբաղ:

8

Առալինը լույս տվեց քեզ,
Կանք ու խրախույս տվեց քեզ,
Հաղթանակի հույս տվեց քեզ,
Շեն և ուրախ իմ Ղարաբաղ:
9

Ենքան պայծառ, կանաչ ես դու,
Փոխվել ես, անճանաչ ես դու,
Վառ, հուրհրան ճաճանչ ես դու,
Արեաշող իմ Ղարաբաղ:

10

Յես քո նադն եմ հիմի քաշում,
Լուսաթաթախ իմ Ղարաբաղ,
Գարուն, ամառ, ձմեռ, աշուն—
Միշտ ես ուրախ, իմ Ղարաբաղ:
11

Մանկությունից են ինձ ճանաչ
Աղբյուրներդ քաղցրակարկաչ,
Անտառները քո մուղ-կանաչ,
Հազարաբաղ իմ Ղարաբաղ:

12

Աւական արոտներով,
Մետաքսեղեն խաս խոտերով,
Նախիրներով ու հոտերով
Հարուստ, չքնաղ իմ Ղարաբաղ:
13

Յերկինքի և մովի նման,
Քո թարմ ողն և հովի նման,

ԻՄ ՂԱՐԱԲԱՆ

(Դաստիան)

1

Հնում հազար ահ ես տեսել,
Հազար մելիք, շահ ես տեսել,
Սրբուն, ավեր, մահ ես տեսել,
Քեղ արէն դաղ, իմ Ղարաբաղ:

2

Աև որերում քաղց ու սով եր,
Մեր դարդերը անտակ ծով եր,
Բոնակալ տերը ուժով եր
Ու չուներ վախ, իմ Ղարաբաղ:

3

Դաշնակ, մուսավաթ կոխվ տվին,
Մեր արյունը ցրիվ տվին,
Սրի, հրի, մրի տվին
Շեն ու դշաղ, իմ Ղարաբաղ:

4

Նրանք հաղած հուր-հրացան,
Չքնաղ Շուշին արին կործան,
Դարձին մի բուռ մոխիր ցիրցան,
Քաշեցիր ախ, իմ Ղարաբաղ:

5

Կարմիր զորքը վատին քշեց,
Դաշնակ - մուսավաթին քշեց
Եեվ ուրիշ շատ-շատին քշեց,
Քաջ ու զուշաղ իմ Ղարաբաղ:

6

Բոլցերիկյան ծեռքը փրկեց,
Բոլցերիկյան զենքը փրկեց,

Քեզ մեր կարմիր յերգը փրկեց,

Աղատ, խաղաղ իմ Ղարաբաղ:

7

Դուշմաններիդ տունն ես քանդել,
Ամեն խախուտ սյունն ես քանդել.
Մութ վորջերը, բունն ես քանդել,
Ալվան բայրաղ իմ Ղարաբաղ:

8

Ատալինը լույս տվեց քեզ,
Կյանք ու խրախույս տվեց քեզ,
Հաղթանակի հույս տվեց քեզ,
Շեն և ուրախ իմ Ղարաբաղ:

9

Ենքան պայծառ, կանաչ ես դու,
Փոխվել ես, անճանաչ ես դու,
Վառ, հուրհրան ճաճանչ ես դու,
Արեաշող իմ Ղարաբաղ:

10

Ցես քո նազն եմ հիմի քաշում,
Լուսաթաթախ իմ Ղարաբաղ,
Գարուն, ամառ, ձմեռ, աշուն -
Միշտ ես ուրախ, իմ Ղարաբաղ:

11

Մանկությունից են ինձ ճանաչ
Աղբյուրներդ քաղցրակարկաչ,
Անտաները քո մուղ-կանաչ,
Հաղարաբաղ իմ Ղարաբաղ:

12

Ալիխական արոտներով,
Մետաքսեղեն խաս խոտերով,
Նախիրներով ու հոտերով
Հարուտ, չքնաղ իմ Ղարաբաղ:

13

Յերկինք ե մովի նման,
Քո թարմ ողն ե հովի նման,

Արտերդէ են ծովի նման,
Գհղածիծաղ իմ Ղարաբաղ:

14

Բաղերդ են լի մրգերով,
Չոլերդ են լի բերքերով,
Մարերդ են լի յերգերով,
Վարդերի թաղ, իմ Ղարաբաղ:

15

Դու խնդում ես նոր որերում,
Քո եղ կանաչ խաս շորերում,
Բլրուկներն են քեզ որորում,
Հարս ես չքնաղ, իմ Ղարաբաղ:
16

Աստեղաչյա, անուշահոտ
Սուսան, սմբուլ, վարդ ու նարոտ
Ամբողջ տարին Հյուր են քեզ մոտ,
Գոհարաշաղ իմ Ղարաբաղ:

17

Գարնան նման դու դալար ես,
Անդին մարզարիտ—դոհար ես,
Մեր արևի լույսով վառ ես,
Լուսաշաղախ իմ Ղարաբաղ:
18

Զեռքիս սաղը իմ սիրասուն,
Հազար բերան դովք եմ ասում,
Վորդիներդ առած ուսում—
Գրադես ոջախ իմ Ղարաբաղ:
19

Բախչա բաղիու բարը ծով ե,
Լեն արտերիդ վարը ծով ե,
Մարերիդ դալարը ծով ե,
Կանաչ յայլաղ իմ Ղարաբաղ:
20

Անուշ վարդ ես սրտիս համար,
Պայծառ դարդ ես սրտիս համար,

Միչտ զլարթ ես սրտիս համար,
Գովական տաղ իմ Ղարաբաղ:
21

Ենպես լավ եմ քեզ ճանաչում,
Բլրուկնի պես խաղ եմ կանչում,
Քո դըկում եմ յես կանաչում,
Վուկի վարաղ, իմ Ղարաբաղ:

22

Յես քո ծաղկանց ալն եմ սիրում,
Գոհարը և լալն եմ սիրում,
Թութ ու կեռաս, բալն եմ սիրում,
Վառ շամանդաղ իմ Ղարաբաղ:
23

Մոափ, ձյունդ շատ նախշուն ե,
Զառ փեշերդ նա նախշում ե,
Հալչում, ջրերը բաշխում ե
Գետերին պաղ, իմ Ղարաբաղ:

24

Ալվան-ալվան դյուլը իմն ե,
Սուսան ու սմբուլը իմն ե,
Քաղցրախոս բլբուլը իմն ե,
Ռւնես բյուր խաղ, իմ Ղարաբաղ:
25

Բաղ ես զնում դու վաղելով,
Կոլխոզնիկ յա՛ր, թուխ մազերով,
Ինձ վառեցիր քո նազերով,—
Արմաղ-շարմաղ իմ Ղարաբաղ:
26

Յա՛ր, ձեր բաղի վարդն ե սիրուն,
Քո քաղհանած արտն ե սիրուն,
Ծով աչերիդ թարթն ե սիրուն,
Յարի ծիծաղ, իմ Ղարաբաղ:
27

Բուրում ես դու սուսաններով,
Ճերմակաշուրթ շուշաններով,

Ինձ ես կանչում նշաններով,
Եես քեզ մատաղ, իմ Ղարաբաղ:

28

Քո ներկան ե հիմի պայծառ—
Ասես գարնան փարթամ մի ծառ,
Գեղգեղում են հավք ու ծիծառ
Սիրահար աշուղի նման:

29

Արտե՛ր, արտե՛ր որոր-շորսր,
Մվավում են իմ չորս բոլոր,
Յելավ լուսնյակը վոսկեվոր,
Շողշողուն մանկաղի նման:

30

Վայրի վարդն ե բուրում թփում,
Գետն ե հոսում ու գետափում
Մեր կոլխոզը թութ ե թափում,
Թութն ե մաղվում չաղի նման:

31

Ամեն սարում հաղար աղբյուր,
Գլցում են բյուրեղ, մաքուր,
Անուշ, վորպես յարի համբույր,
Յարի ջինջ ծիծաղի նման:

32

Չուրն են գնում քայլով քնքուշ
Մեր հարսերը անուշ-մեղուշ,
Ամեն մինը մի թառլան զուշ,
Նրանց խոսքն ե խաղի նման:

33

Մեր Փերման նոր ու դալարուն
Վրաններ ե զարկել սարում,
Յարս ե ենտեղ մածուն մերում
Քաղցրանուշ զայմաղի նման:

34

Կթվորուհին կով ե կթում,
Կթեջներում կաթն ե խնդում
Մեր սարերի ջինջ, զվարթուն
Աստղերի շափաղի նման:

35

Կմպերի մեջ վոլոր-մոլոր
Լուսինն յելավ դեղին, կլոր,
Վոսկի մաղեց նա չորս բոլոր
Մարի կարագ յուղի նման:

36

Արևի տակ ուրախ, ցնծուն
Բրիգադս արտն ե հնձում,
Նանս նստել հաց ե հունցում,
Անուշ ձվաճեղի նման:

37

Արևոտ առալոտ ես դու,
Ծաղկուն, անուշահոտ ես դու,
Ինձ հարազատ ու մոտ ես դու,
Իմ տուն, ոջախ, իմ Ղարաբաղ:

38

Կաղնիներով հսկահասակ
Պուրակները կանաչ դիսակ,
Կաղմում են քո կրծքին պսակ,
Սիրուն, արմաղ իմ Ղարաբաղ:

39

Աղջիկներդ խաս խումար են,
Կոկոն, մեխակ, նունուֆար են,
Խաղերս նրանց համար են,
Դու անուշ տաղ, իմ Ղարաբաղ:

40

Ման դամ ալվան քո բաղերով,
Կանաչներով ու թաղերով,

Ճերմակշուշան քո շաղերով,
Վարդով լի մաղ, իմ Ղարաբաղ:

41

Յերամակներ նժույղների
Վրնջում են քո մարդերի
Դալար ծովում սքանչելի,
Շողաթաթախ իմ Ղարաբաղ:

42

Բամբակն ե քո ծոցում աճում,
Գլայուլան ե կանաչում,
Գինին, արաղն ե կարկաչում,
Քո քեֆն ե չաղ, իմ Ղարաբաղ:

43

Ավտոներն են սարով անցնում,
Փարվազ անում, ձորով անցնում,
Միլի կանաչ չոլով անցնում,
Շուխով ու շախ իմ Ղարաբաղ:

44

Զառ փեշերին կանաչ լեռան
Հալքերն իջան յերամ-յերամ,
Փետուրները վոսկե չերամ,
Մետաքս, արմաղ իմ Ղարաբաղ:

45

Ժողովուրդներ յերկու ազգի
Նման գարնան յերկու հասկի
Մաղկում են քո գրկում վոսկի,
Վոսկելարաղ իմ Ղարաբաղ:

46

Նոր աշխարհի վառ ծաղիկ ես,
Նոր ինդությամբ հիմա լիքն ես,
Աղբբեջանի աղջիկն ես
Գյողալ, չքնաղ իմ Ղարաբաղ:

ՀՆԻՑԱԿՆԵՐ, ՈՒԹՆՑԱԿՆԵՐ
ՅԵՎ

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

ՀՆԳՅԱԿՆԵՐ

1.

Մեր հանձարները, ո, շատ են սիրել
բանաստեղծությունն, բանաստեղծներին.
Մարգար, Ենգելսը
Հայնեյի նման գրել են սիրերդ,
Լենինը անդիք գիտեր Պուշկինին:

2.

Ալբերտին հիմա վոնց կարգա հանդիսա
Քո սոնետները, Արտուր Թեմբոն,
Յերբ իսպանիայում
Մարտ ե, պայքար ե մահու ու կյանքի,
Յերբ պիտի կովել յերգով ու սումբով:

3.

Ամեն մի պոետ իրա բաժակով
Թոռ' լիմի գինին բանաստեղծության.
Վողջո՞ւյն այդեկութ,
Վողջո՞ւյն քեզ գինի բիլ ու խաժագույն —
Մեր հնձանների, մեր հայրենի տան:

4.

Ո, Զուլյետա՛, հին Իտալիայի
Ո, գեղեցկուհի բանաստեղծական,
Ո, չեքսպիրյան սե՛ր,
Արդ նոր Հոռմում ցոփ ու անձայիս
Ծախու մի կին ես դու անողնական:

Յես մուզիկան եմ լսում Բախի
Մեր ամառային նոր բուլվարում,
Յերաժշտություն,
Դու վո՞նց ես այսքան վիշտ ու թախիծ
Ու կարոտներ քո մեջ ամբարում...

6.

Ո, յես սիրում եմ խանդաղաղին
Ասավոտները աշնանային,
Յերբ իմ պերճ յերկրում
Մըղերով բեղաւն հաղար այդի
Ցնծում են, բուրում ջինջ, հմայիչ:

7.

Վարդերն են նորից վերածաղկել,
Նորից բուրում են գարնան այդում,
Նորից բացվում ե
Իմ և քո սիրո լուսածաղը,
Իմ քնքալի սեր, քնքանուր քուր:

8.

Գարնան ծառերը կանաչ, թելարաց,
Երենց բարբառով զբույց են անում
Մեր նոր քաղաքում
Ու պռետները, պայծառ լուսարաց,
Զքնալ դարունն են մեր փառաբանում:

9.

Յես քեզ կանչում եմ պաղատաղին —
Քնքության, սիրո իմ ձեռքերավ,
Յե՛կ, հեռավո՛րոս,

Յե՛կ, մտիր դու իմ ծաղկուն այդին,
Դարձիր վիպահիս շունչ ու հերոս:

10.

Հիմա դեռ ձյուն ե, դեռ հունվար ե,
Բայց նորից սրտով իմ լուսոսող
Տեսնում եմ ահա
Քո գեղատեսիլ, նուրբ դաւարը
Մայիս հմայիչ, լիազորով:

11.

Յերկիր իմ, թե քո հորիզոնը
Իմ յերդի հորիզոնը լինի
Կայնքում, աշխարհում,
Յերդս կլինի լայն, կիզուն միշտ
Ու նոր խոհերով ինձ կղինի:

12.

Կարև լիբկնելիսը յերդեր ե գրել
Բանտային խուցի պատերի վրա,
Փա՛ռք քեզ, պոեզիա',
Դու ուղեկցել ես մարտերում հրե, —
Յեղել ես մեզ քույր ու կամք ու կրակ:

13.

Զյունե միլուքով այն պարտիզանը
Առավոտյան դեմ ծառերն ե ջրում,
Իսկ դու բանաստե՛ղծ,
Հանդիսան նստել ես ահա քո տանը
Յեկ քնարական յերգեր ես գրում:

14.

Յեղելինիներն են սըլմըլովում՝ նազո՞յ
իմ այս փայքիայած, իմ սիրած այլում,
Ծըրշում ականջիս
Գարնան դալուստը չքեղ, յերազուն, —
Դու յե՞րբ ես գալու, իմ սիրուհի, քո՞ւյր:

15.

Մի շիկագանգուր յերիտասարդ մայր
Մանկիկն իր գոլկած չլովում և ահա
Մայիսյան այլում, —
Ի՞նչքան գոլմանքներ, քնքանքներ անմար
Իր մանկան համար ունի նա ովահած:

16.

Քեզ հետ նստել ենք այս ծառի տակին,
Խոսել ենք կյանքից, սիրուց որտակեղ,
Մոռացել ես դու՝
Կանգնած ե ահա այս ծառը կրկին,
Հարցըու՝ բոլորը կպատմի նա քեզ:

17.

Ելք արելն եր կախել լույս քուլան,
Յեկ հալչում եյին ձյուներն ելլ,
Մեր կյուղի ճամբին,
Իմ առաջ յելակ գարունը զուլալ,
Իմ առաջ յեկար, ե՛ դու, սիրելի:

18.

Գեռ քեզ հաճախ եմ կարոտում, անդին,
Կարոտն եմ հանձնում փոքրիկ յերգերիս,
Բայց վոչ մի անդում,

Գեռ չեմ կարոտել այսչափ քնքագին,
Ինչպես ասողալից այս ջինջ գիշերին:

19.

Յերկինքը, վորովես կազույտ մի քարտեղ
Տարածված ե իմ վերեկ անսահման
Ասողալից, մաքուր,
Այս գիշեր կծաղեն, ախ, ինչքան վարդեր,
Ի՞նչքան չուշաններ՝ ասողերի նման:

20.

Այսոր առավոտ ապրիլն ինձ բերակ
Ծաղիկների մի համաստեղություն.
Յես մտածում եմ՝
Ինչ վար մեղ համար ցնորք եր, յերազ,
Ծաղիկներով ե, սիրու, արդեն վթթում:

21.

Ո, մարդիկ շատ են աշխարհում լացել,
Արդ ինդությունն ե զարնան վարար դետ,
Փա՛ռք քեզ, Ստալ'ին,
Փա՛ռք քեզ, զաւ բերիր այս լուսարացը,
Ո, յերջանկության մէծ ճարտարապետ:

22.

Ինչպես քարերը զետափին ընկած,
Մակընթացության ժամին կորչում են
Գոռ կոհակներում,
Այլպես կորչում եք զուք, վշտե՛ր անկար,
Եկը մէծ ինդության ալիքների մէջ:

23.

Պատից նայում ե, ահա՛ ինձ Գորկին,
Լավոտեսության այդ մէծ գարբինը,

— Բարեկի քեզ, ո՞վ մարդ, —
Եյս յես ծչում եմ իմ սրափ խորքից —
Մարդն եր, բերկրանքն եր միշտ կյանքիդ
Հիմնը:

24.

Եթեն մարդ կայնքում մի բան ե սիրում,
Իսկ յես սիրում եմ ձեզ, մանուկնե՛ր լույս,
Ձե՛զ, ծաղիկնե՛ր լուրթ,
Դուք միշտ ժպում եք աչքերով փերուզ
Միը կյանքում պայծառ, և իմ յերգերում:

25.

Եի որ կմեռնեմ ու հոգ կղառնամ
(Հիմա ապրում եմ պայծառ ու զլարթ),
Բայց զու, քաղաք իմ,
Հավետ կըցնծառ, վորպես փառք դարնան,
Հավետ խանդավառ ու խինդանվագ:

26.

Ով զոր յեկել ե—քեզ նզովել ե,
Ով զնացել ե—լացել ե անզոհ,
Իմ բարեկամ, կյանք,
Մենք ենք, զոր պրկած մեր պիրկ ձեռքերը,
Պարզում ենք վերը դրոշները քո:

27.

Յես հստած եյի գարնան անտառում
Յեկ լսում եյի յերգը սոխակի
Գեղղեղուն, անուշ.
Դու անտառի պես թարմ ես, անթառամ,
Դու յերգի նման զվարթ ես, հոգիս:

28.

Ճայերն են ճախրում ճերմակ ջրերով
Առաջին ձյունի վաթիլների պես
Անարատ, անքիծ.
Ո՛, իմ սիրուհի՛, իմ ևվագներում
Մաքուր, մաքուր եմ միշտ տեսել յես քեզ:

29.

Դեղձենիները զետի մեջ հիմի
Թափեցին զարնան վաս ու զեղանի
Ծաղկաթերթիկներ, —
Եյս տարի զեղձը առատ կլինի
Իմ ուրախ յերկրի չքեզ սեղանին:

30.

Ամառվա այլում համերդ ե տալիս
Նվազախումբը մեր զարամասի.
Լիստ, յերեկե
Գուշակե՞լ ես, վոր քեզ կը կատարի
Կարմիր մարտիկը մեր արիստիրուտ:

31.

Իմ զլիի վրա դեռ ծերությունը
Հունվարյան, չույլ ձյունը չի ցանել,
Թեկուզ ցանի յել,
Ելի կլինեմ ջահել, խնդուն յես
Յերկրում, ուր վառ ե, կյանք,< ծիածանը:

32.

Մանուշակներ են արդեն վաճառում
Մաղկանց խանութում ու վողոցներում.
Բարեկ քեզ, մայիս,

Եմուտակաբեր արելուս գալուն,
Զեռքդ սեղմում եմ յերգիս տողերով :

33.

Ա՛խ, ծովը այսոր ի՞նչ գեղեցիկ է.
Յե՛կ, նստենք մակույկ ու թիավարենք
Կանաչ ջրերով,
Ինչ խօսքում կա, կասեմ ծովում քեզ,
Թո՞ղ ալիքներն ել մեր սերն սրորեն :

34.

Իմ հայրենիքի լեռնաւանջերում
Թուխ յեղնիկների խմբերն են խաղում.
Նայե՛ք աչքերիս,
Իմ հայրենիքի կապուտակ հեռուն,
Ու արեղակն ե այսուեղ ծիծաղում :

35.

Արելը, վորպես խարսյուշ մի յեղնիկ
Լևան լանջերով աշա վաղում է.
Զաւելություն իմ,
Դու արեղակին միշտ մոտիկ յեղիք,
Թող հուրըդ լինի աննվազուն միշտ :

36.

Դու մի՛ նեղանա, իմ հեռավո՛րըս,
Վոր նամակիդ ուշ եմ պատասխանում,
Զբազված եմ լսիստ,
Յերդ գրելով ե անցնում իմ որը,
Իսկ յերգերի մեջ քեզ չեմ մոռանում :

37.

Իմ առաջ հաղար վոսկե չքամուտք,
Հաղար դոներ ես բացել, հայրենիք,

Յես յերախտապարտ,
Ինձ հանձնած հախուսն հույզերի քամուն,
Քո տունն եմ մտնում մոտ ու հայրենի :

38.

Ամեն մարդ ունի իր առաստաղը,
Սավասնարզները այն շատ են սիրում.
Յես իբրեւ պոհու
Նոր պիտի նվաճեմ վինչ, առանց թափախ
Առաստաղը իմ յերգերի վիրուդ :

ՈՒԹՆՅԱԿՆԵՐ

1

Ո՛, յերկրագունդը մեր իմաստուն
Առանցքի չուրջն է իր պատովում,
Իսկ մենք՝ իմաստուն առաջնորդի,
Վոր վարում ե մեզ անդուլ մարտի
Մակընթացներով դեպի խաղաղ
Յեղեցներ, հերկեր չեղած, չքնաղ,
Գաղաթներ և' ու'դ, և' կուսական,
Հաղթանակներով մեր պատկած:

2

Ու չերկուլեար — միֆն ե առում, —
Հրեշների յե խոցել բազում,
Ու հիդրաների մահառիթ, մառ,
Մարդկության անվիշտ բախտի համար:
Դու չերկուլեսն ես վողջ աշխարհի,
Քո կորովովը շննդալի
Մաքրում ես կյանքը կապիտակի
Հրեշներիցը չար, ահալի:

3

Մեր այս հնամյա հողի վրա
Փողնկուրդների համար զրկված,
Յեղար լուսալոր մի հանդրվան,
Տվի՛ր նրանց տուն, հաց ու կբակի,
Տվի՛ր որենքներ վեհ, չփրված,
Տվի՛ր աշխատանք խինդաշուայլ,
Տվի՛ր այս ներկան լուսածրաբ, —
Կապարը, չարը, մտու ցրած:

3

Դու մեղ մղում ես արդար պայքար
Մեր դեկավար ձեռք ամենակար,
Մենք մարտիկներն ենք քո գնդերի,
Մերմած քո մտքեց, քո հունդերից,
Մնված կենարար քո ջերմ կաթով,
Անշահ, անկաշառ քո հավատով,
Մենք կազմ, պատրաստ ենք հրամանիուղ
Կոխվ թուշելու վորպես մրրիկ:

5

Հյուրընկալ տուն ես, խորհրդային
Իմ լայն հայրենիք, ծաղկուն մայիս,
Հյուրընկալ տուն ես, ո, մայր ես դու
Յե՛վ նեղրի համար անհաց, անսուն,
Յե՛վ չին գյուղացու՝ կանոնական,
Յե՛վ հանքափորի աստուրական:
Դրանով չես միթե՞ դու կուռ անպարտ,
Ամբո՛ց անդրամ, Լենինյան փա՛ռք:

6

Ո՛, վոչ մի ահեղ, զարհուր աղետ,
Վոչ մի փոթորիկ ու խորչակ խենթ
Զեն կարող մատնել մառախուզի,
Իմ մեծ հայրենիք, պայծառ ուղիղ:
Գնում ենք ուղիղ ու անհահանջ,
Կուրծքներս պարզած վորպես վահան,
Նշված ե բախտը մեր գվարթուն,
Մեր իսկ ձեռքերով, հավետ անդոււլ:

7

Մենք ուղիներով բազմավտանդ
Հասել ենք կյանքին այս ջինջ վտակ,
Հասել ենք բախտին անդուզական,

Հայացքներում մեր լույս ապագան :
Քարեկամ', յեղիր նըան արժան,
Նրա դրոշին — կարմիր չուշան,
Մարտերում թափված մեր բորբ արյան
Ենի բուրումնավետ մեր այս դադինան :

8

Ծաղիկներովը քո կուսագեղ
Քարունը այսոր ինձ պսաւեց,
Տեսա ինձ ծաղկուն վարդերի մեջ,
Մեխակների մեջ թարմ ու անմեռ,
Մարդարիտներ եր ցողը դրել
Թերթերի վրա նրանց հրե :
Ծաղիկներովը այդ հուրհուրան
Յերկիրն և ժպտում մեր մշտուրախ :

9.

Կանքը դարձել ե հիմա խնճույք,
Մեր դիմիներն են արդ կարկաչում,
Մեր ասոլիդներն են վոսկյա հնչում
Հովիտներում մեր, լեռան լանջում :
Քարեկամ', յես քեզ հյուր եմ կանչում,
Արի իմ յերկրի թարմ կանաչում
Խրախենք, յերգենք, անհոդ պարենք
Մեր յերկրի տոնին շողչո՞ղ, արե՞գ :

10.

Բոլորապառող շուայլ ամա՛ռ,
Սիրում եմ յես քո դեղնակամար
Աչքերը, իբրեւ իմ սիրուհու
Աչքերը հստակ, արելահուր,
Ենի վողկույզները քո խաղողի
Կախված արգասուն կրծքին հողի,
Նման են իր թուփ գանգուրներին,
Այնքան դրավիչ ու սիրելի :

11.

Իջակ յերեկոն հանդարտավետ,
Լուսինը ճերմակ ամպով նավեց,
Ամկայն միթե՝ յես լուսնահար եմ,
Միթե՝ յես լուսնի սիրահար եմ,
Միթե՝ իմ յերդը պիտի ձոնեմ
Այդ գեղեցկուհուն գեղնաձյունե,
Թողած իմ յերկրի աղջիկներին
Յեվ չքնաղաղեմ յեվ սիրելի :

12.

Հրապարակով ստագիոնի,
Մարմիններով պիրկ ու գեղանի
Ահա վաղում են նրանք թեթեվ,
Վորպես լեռնային յերկու վիթեր,
Նրանք մեր յերկրի աղջիկներն են,
Ինչքան են քերծեր, ժայռ ու լեռներ
Մաղլցել նրանք — ո՛, մանկություն,
Յեվ չարաճիճի և խլրտուն :

13.

Ահա լեռնային մեր մարմարը,
Մաքուր ե, կույս ե սուրբ այս քարը:
Քանդակագործներ մեր վեհ դարի,
Դուք քանդակեցե՞ք մեր այս քարից
Արձոնը անբիծ յեղբայրության,
Թող նա խոյանա խոր խնդությամբ,
Քերի կապույտը մեր կամարի,
Վորպես մի ամրոց սեղ, անառիկ :

14.

Տվե՞ք ձիրքերը ձեր մարմարին,
Տվե՞ք ձեռքերը ձեր քաջարի,
Տվե՞ք ձեր սերը լուսամարմին,

Կհյուսեմ մանյակ իմ յերպերից
Քեզ համար դուսոր իմ սիրելիք·
Կտամ Հայրական սեր ու քնքանք
Քեզ իմ նորաբաց, լուսե շուշան,
Մեր արեկը քեզ կհամբուրե,
Նրա լույսերով դու կբուրես
Մեր մանուկների զվարթ այդում,
իմ պայծառ դուսոր, ծաղիկ մաքուր:

19.

Յես քեզ բերել եմ այրինարան,
Վոր կարգասո, գնասո ուսումնարան,
Յես քեզ բերել եմ և խաղալիք
Սեզ աչիկներով իմ լավ բալիկ,
Դու լավ սովորիր այրաւենը,
Վոր պայծառ մանես կյանքի բեմը,
Կարդա՛, ուսում ա՛ո, խաղա՛, բերկրե՛ր,
Դարձի՛ր արժանի զուսոր յերերի:

20.

Ինչքան ել փոեն ու մահ ու սով,
Ինչքան ել գնեն ձեզ բանո, աքուր
Ո, մեր յերպայրներ Արեմուտքի,
Դուք լեռնանում եք, յելած վոտքի,
Զեր մարտաճայը լսում ենք մենք
Վոսկու Հորթի գեմ այն չարանենդ,
Անվախճան ե ձեր փառքը անձեռ,
Մեր փառքը՝ ձերն ե, ձեր փառքը՝ մեր:

21.

Ոտարյերկբացի իմ բարեկա՛մ,
Դու տեսել ես մարդ ու բարիկադ

Տվեք հանճարը ձեր հանճարի
Յեղբայրության մեծ զաղախարին,
Վոր սատիլինյան հրով վա՛ո միշտ
Յերգի՛ մարմարում մեր աշխարհի,
Նվազների հետ մեր քնարի:

15.

Յես յերբեք, յերբեք քեզ չեմ դժոժի
Լենինյան աստղ մեր դրոշի,
Բնչաղուրիկների փրկություն դու,
Խնդություն հողի, հանքի մարդու,
Կմաքառեմ քո մարտում զաժան
Ու կլինեմ քո փորդին արժան,
Բոլոր աստղերի աստղ հրաչ,
Հար շողա՛ յերգիս ուզու վրա:

16.

Կարմիր մարտիկի անպատճան սուր,
Յերկնի պես կապույտ, մաքուր ու սուրբ
Դու մեր մարտերում բովված, սրված
Վոսոխի զաժան սրտում խրված,
Սիրում եմ յես քո մերկությունը,
Հուր-հուր փայլերդ զոռ մարտում մեր,
Շողա՛ դու, վորպես շողչող շողակ
Թշնամին քեզնից թող հար դողա:

17.

Դու մարմարիոնի նման մաքուր
Անարատ յեղի պայծարի քույր,
Ինչպես Ռոզա Լյուքսեմբուրգը
Միշտ բարձր եր, վորի կամքի բուրդը
Մեր մարտինչումի հորձանուտում —
Յեզիր մաքառող, հորձանող դո՛ւ,
Յեզիր նվիրված մեր բանակին,
Մեղ հետ գրոհի՛ր, հաղթանակի՛ր:

Դու նստել ես բանո, աեսել աքսոր,
իրել չպթաներ ու քաղց ու սով.
Արդ գու յերկրում ես մեր ազատ, սուրբ,
Թող քեզ մեր կյանքի ղեկյուռը զով.
Համբուրի, իբրհիվ պայծառ վորդու,
Մոսկվան լինի քեզ ու մայլ ու տուն:

ԹԲԻԼԻՍԻՅԱՆ ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

1.

Վողջո՞ւյն, վողջո՞ւյն քեզ Վրաստան,
Դու խաղողի լույս հայրենիք,
Հեքիաթ պարտեզ իմ վոսկեմիրդ,
Վողջույն, վողջույն քեզ Վրաստան:
Աքեվային իմ արքեստան,
Պերճ անդաստան բաղմաբարիք,
Վողջույն, վողջույն քեզ Վրաստան
Դու խաղողի լույս հայրենիք:

2.

Վուղջո՞ւյն քո ժիր ժողովրդին,
Վոր ծնողն ե Ստալինի,
Վոր ձեռքերով իր մայրենի
Փայել ե մեծ առաջնորդին,
Վոր մարտերում իր մեծ յերթի
Կոմիտեց նրան դեռ պատահի —
Վողջո՞ւյն քո ժիր ժողովրդին,
Վոր ծնողն ե Ստալինի:

3.

Փառք Կազբեկի արծիվներին —
Վրաստանի ըմբոստ վոգուն,
Փառք վորդոցը նրա տոկուն,
Նման ազատ արծիվների,
Վոր չմնաց թափաղների,
Ժանդարմների ժանտ կապանքում —
Փառք Կազբեկի արծիվներին —
Վրաստանի ազատ վոգուն:

4.

Կախեթիայի գինով կակաչ
 Քո կենացն եմ սիրով խմում,
 Քո անունն եմ վառաբանում
 Կախեթիայի գինով կակաչ:
 Երդի նման քաղցրակարկաչ,
 Քո համբալն ե ինձ միշտ զինում,
 Կախեթիայի գինով կակաչ
 Քո կենացն եմ սիրով խմում:

5.

Արշալույսից գույներ առած
 Քո նարինջն ե իմ սեղանին,
 Քո լեռների պերճ, գեղանի
 Մայրամուտից գույներ առած:
 Հանց արեղակը անարատ
 Ծաղկածրար Ալազանի,
 Արշալույսից գույներ առած
 Քո նարինջն ե իմ սեղանին:

6.

Կյանք, ծաղկել ես կոլխիդայում,
 Ավաղանում հին Ռիոնի,
 Նման ամռան անուշ թոնի
 Կյանք, ցնծում ես կոլխիդայում:
 Ճահճուտների այս հին վայրում
 Դու հառնեցիր հանց նոր փյունիկ,
 Կյանք, ծաղկել ես կոլխիդայում,
 Հովհաններում նոր Ռիոնի:

7.

Հայրենիքում մեծ Շոթայի
 Վորքան յերգեր, արեվ, մայիս:
 Պոեմ, սիրով թող հմայի
 Հայրենիքը մեծ Շոթայի:

Հոգով անվիշտ, անամայի
 Մանկան նման շուրջու նայիր,
 Տես որբանում մեծ Շոթայի
 Վորքան յերգեր, արեվ, մայիս:

8.

Գարնանային արեգակով
 Ծիծաղում ե թրիլիսին,
 Վորպես սիրով ծփուն մի սիրու
 Գարնանային արեգակով.
 Փոված Քուռի գույներով,
 Նման չքնաղ, զուգված հարսի,
 Գարնանային արեգակով
 Ծիծաղում ե թրիլիսին:

9.

Բլուրների կանաչ չղթան
 Կապած մեջքիդ, թրիլիսի',
 Նայում ես ինձ գեղատեսի
 Բլուրներով կանաչ չղթա:
 Իմ սրտի մեջ գու միշտ ժպտա,
 Այդպես չքնաղ, վորպես տեսիլ,
 Բլուրների կանաչ չղթան
 Կապած մեջքիդ թրիլիսի':

10.

Փողոցներիդ յեղերքներին
 Ծաղկանոցներ կան ծիծաղկուն,
 Վառ վարդերն են հիմա ծաղկում
 Փողոցներիդ յեղերքներին:
 Յես հյուսում եմ իմ յերգերին
 Ծաղկիններիդ ծուփ - ծուփ, ծաղկուն,
 Փողոցներիդ յեղերքներին
 Ծաղկանոցներ կան ծիծաղկուն:

115

4.

Կախեթիայի գինով կակաչ
Քո կենացն եմ սիրով խմում,
Քո անունն եմ փառաբանում
Կախեթիայի գինով կակաչ;
Յերդի նման քաղցրակարկաչ,
Քո համբայն ե ինձ միշտ զիշտ յիշտ,
Կախեթիայի գինով կակաչ
Քո կենացն եմ սիրով խմում:

5.

Արշալույսից գույներ առած
Քո նարինջն ե իմ սեղանին,
Քո լեռների պերճ, գեղանի
Մայրամուտից գույներ առած:
Հանց արեգակը անարատ
Մաղկածրար Ալազանի,
Արշալույսից գույներ առած
Քո նարինջն ե իմ սեղանին:

6.

Կյանք, ծաղկել ես կոլխիդայում,
Ավագանում հին Ռիոնի,
Նման ամռան անուշ թոնի
Կյանք, ցնծում ես կոլխիդայում:
Ճահճուտների այս հին վայրում
Դու հառնեցիր հանց նոր փյունիկ,
Կյանք, ծաղկել ես կոլխիդայում,
Հովհաններում նոր Ռիոնի:

7.

Հայրենիքում մեծ Շոթայի
Վորքան յերգեր, արեվ, մայիս.
Պոետ, սիրող թող հմայի
Հայրենիքը մեծ Շոթայի:

Հոգով անվիշտ, անամայի
Մանկան նման շուրջն նայիր,
Տես որբանում մեծ Շոթայի—
Վորքան յերգեր, արեվ, մայիս:

8.

Գարնանային արեգակով
Ծիծաղում ե Թրիլիսին,
Վորքես սիրով ծփուն մի սիրո
Գարնանային արեգակով.
Փոյժած Քուռի զույգ յեղերքով,
Նման չքնաղ, զուգված հարսի,
Գարնանային արեգակով
Ծիծաղում ե Թրիլիսին:

9.

Բլուրների կանաչ շղթան
Կապած մեջքիդ, Թրիլիսի',
Նայում ես ինձ գեղատեսիլ
Բլուրներով կանաչ շղթա:
Իմ սրտի մեջ դու միշտ ժպտա,
Այդպես չքնաղ, վորպես տեսիլ,
Բլուրների կանաչ շղթան
Կապած մեջքիդ Թրիլիսի':

10.

Փողոցներիդ յեղերքներին
Ծաղկանոցներ կան ծիծաղկուն,
Վառ վարդերն են հիմա ծաղկում
Փողոցներիդ յեղերքներին:
Յես հյուսում եմ իմ յերգերին
Ծաղկներիդ ծուփ - ծուփ, ծաղկուն,
Փողոցներիդ յեղերքներին
Ծաղկանոցներ կան ծիծաղկուն:

Յերկինքը քո կապույտ ափսէ
Լվացած ե գարնան ջրով,
Յես սիրում եմ անհուն սիրով
Յերկինքը քո՝ կապույտ ափսէ:
Քույր հարազատ, լուսեղեն սեր,
Մայրաքազաք լիազորով,
Յերկինքը քո կապույտ ափսէ
Լվացված ե գարնան ջրով:

12.

Յես անցնում եմ Զելյուսկինյան
Քո հոյաշեն մեծ կամուրջով,
Յողաթաթախ, թալ կանաչով
Բլուրների Զելյուսկինյան:
Ողնիր դու ինձ, նվազուն յամբ
Հյուսելու յերդ նոր կարկաչով,
Յես անցնում եմ Զելյուսկինյան
Այս հոյակերտ նոր կամուրջով:

13.

Յերեկոյան ափերը այս
Ընկղմվում են լույսերի մեջ,
Հուրհուսմ են հրով անշեղ
Գեղեցկանիստ ափերը այս:
Մաքուր վորպես մանկան յերազ,
Մայրական զիբեկ, սիրուն ու պերճ.
Յերեկոյան ափերը այս
Ընկղմվում են լույսերի մեջ:

14.

Այստեղ մի որ ապաստանեց
Պուշկինը մեծ, հալածական,
Տիրաններից դաժան այնքան

Այստեղ մի որ ապաստանեց:
Բորբ յերգերով խարազանեց
Ալենքները բիրտ, ժանտական,
Այստեղ մի որ ապաստանեց
Պուշկինը մեծ, հալածական,

15.

Հնչել ե լույս քնարը քո
Այս ափերում, ձավձավածե,
Ժողովրդիդ վիշտն ե լացել
Քանքարավոր քնարը քո:
Արդ այս կապույտ յերկինի ներքո
Ազատության այգն ե բացմել,
Հնչել ե լույս քնարը քո
Այս ափերում, ձավձավածե:

16.

Յես վնտրում եմ Սայաթ-Նովի
Հայրենական ոթախը հին,
Յես յերգում եմ ո, տաղը հին
Մեր հանձարեղ Սայաթ - Նովի:
Ցույց տուր, ասում եմ, հանգիպողին
Գորշ Քարափի այն թաղը հին,
Ռւր ընկած ե Սայաթ-Նովի
Հայրենական ոթախը հին:

17.

Յես կանգնել եմ թուռի ափին,
Զկնորս Պեղո, քեզ եմ կանչում,
Քեզ եմ ձայնում ու ականջում
Վոտնաձայնդ՝ Թուռի ափին:
Շողում ե նոր կյանքի արժին
Յեզերքներում այս կարկաչուն,
Յես կանգնել եմ թուռի ափին,
Զկնորս Պեղո, քեզ եմ կանչում:

18.

Մուսաներն են այս տան միջին
 Հավելքերի պես ճախրել մի որ,
 Ու հյուսել են յերգելը բյուր
 Մուսաները այս տան միջին:
 Այստեղ յերգեց մելի յերգի ջինչ
 Են Հազարան բլրութը հուր,
 Մուսաներն են այս տան միջին
 Հավելքերի պես ճախրել մի որ:

19.

Սիրսս լիքը հազար հույզով
 Շրջում եմ լույս այս քաղաքում,
 Մեծ լոռեցու յերգն իմ հոգում,
 Սիրսս լիքը հազար հույզով,
 Վորակես գաղնան գնիյուռը զով,
 Վորակես ծաղկանց բույրը բերկուն,
 Սիրսս լիքը հազար հույզով,
 Շրջում եմ լույս այս քաղաքում:

ՅԵՐԵՎԱՆ

1937 թ. մայիս
 ԹԵՐԵԼԻ

Ի Դ Ի Լ Լ Ա

Դեստավիին նստած այսոր առավոտ
Յես նայում եյի գետի նաղերին,
Գաբնան մարդերի նման ծաղկավոր,
Մի ծաղկավոր չալ կապած մազերին
Մի աղջիկ յեկավ գետում լողալու,
Դետի պես խաղաղ ու աչքերով լուրթ:

Գլխի վրայից հանեց շալը նա,
Դրեց գետափին մի քարի վրա,
Ապա չորերը հանեց նա ճերմակ
Ու վրափրահորդ զետի մեջ թռավ,
Վորպես մի ճերմակ մաքուր աղալինի,
Այնքան զվարթում, այնքան գեղանի:

Կոհակներն իրենց կապույտ գիրկն առան
Աղավնու նման չքնաղ աղջկան,
Գերեցին կարծես ջրերը վարար, —
Զքնաղ աղջիկը չկար ու չկար
Թվաց՝ հեքյաթի այն փերու նման
Նա վրափուր դառավ, կորսավ անդյուման:

Յես ամիսսանքով նայեցի դետի
Ջրերին կապույտ ու քնքափրփուր,
Շալին այն ծաղկուն, յերկնի կապույտին
Ու ավագներին վոսկե, չըջասփյուռ,
Նայեցի յերկար, նայեցի տրտում
Այն լավ աղջկա կորուստն իմ սրտում:

Սակայն թափիծը իմ այդ սրտաբուխ
Կարծես հրաշքով փոխից խնդության,

Աղջիկն եր ժպտում հեռավոր ափում
Ծիծաղով հնչուն , հայացքով անամպ ,
Զրերի տակով լողալով անտես
Հեռավոր ապին եր նա հասել արդեն ,
— Բնիկերուհին ե ; մի ուրիշ աղջիկ
Ասաց ինձ ժպտով՝ մոտ ու հարազատ , —
Նա մըտանակ ե շահել առաջին ,
Լողորովուհին ե նա մէր գերազանց :
Մոսկվա յե զնում գարնան վերջերին
Միութենական մըցություններին :

Յես վոր նայում եմ ամեն լողորդի
Մէ անհուն , անհուն յերանությամբ խոր ,
Քնքություններով , զգվանքով սրտիս , —
Գրկեցի իմ մէջ աղջկան այն նուրբ ,
Այն գեղեցկուհուն , վոր այս ափերի
Խեղախ լողորդն ե ու չքնաղ վերին :

Հիմա հյուսում եմ , ահա , յերգերն իմ ,
Այն լավ աղջեկը կանգնած ե իմ դեմ ,
Ծաղկամոր չալը նետած մազերից ,
Աղավնու նման մի ճերմակաթեկ
Փրփռուն գետն ե թուչում ու լողում ,
Հորդ ջրերի հետ մաքսում , շողում . . .

ՀՐԱԺԵՇ

Յերեկ յես անցա ձեր նոր վողոցով
Ու նայեցի բաց պատուհանով քո ,
Թաշկինակ եյիր ասեղնագործում
Հարյուր մումանց մի լամպի ներքո :

Ամսան յերեկոն , ծաղկանց բուրմունքով
Բուրում եր անուշ , բուրում քնքալի ,
Քո լուսապայծառ պատուհանի քով
Կախում եր մութը նման սել շալի :

Թաշկինակ եյիր ասեղնագործում
Մատրոսի հոմար այն լավ , քո սիրած ,
Վոր սիրում ե քեզ հույզերով ցնծուն ,
Հույսերով իր ծով , անսմալ , անմիրած :

Վաղը կրկին նա ծով ե գուրս գալու
Բնիկերութը մոտ ու հարազատ . . .
Վաղջույն քեզ , մայիս , ծովային գարուն
Մէր խորհրդային ջրերի աղատ :

Վողույն , ծովային թոշուններ դժորի ,
Նստած կայմերին հարազատ նամիլի ,
Եշխատանք ու ջանք , գարմոն ու նույզ ,
Արել սոլիտակ , յերկինքներ մավի :

Մնաս բարով կերն , աչքերով վճիռ ,
Աղաղաղ մանկիկ , բարեհամբույր մայր ,
Բազու , ծովեղերք՝ չուշաններով ջինջ ,
Բարեկամներ մոտ ու վողոց ու մայթ :

Ասեղնագործի՛ր յերազուն նազուի,
Դի՛ր քնքությունդ ու սերդ անդին
Մյտ թաշկինակում, ով աղջիկ նազուն,
Կարմիր մատրոսի դու ընկեր ու կին:

Մովային ճայի պես ճյունասպիտակ
Այդ թաշկինակը պահելու յե նա
Մեր ջինջ ջրերի յերկնքների տակ,
Կարոսով հստակ, դգվանքով անօսի:

Յես յերգում եմ ձեր այդ խորունկ սերը
Հյուսված սիրո հետ՝ մեր յերկրի ուրախ,
Շողում են վորի ցոլուն լույսելը
Քաղաքներում մեր, ծովերի վրա,

Մբարում խիղախ մեր մատրոսների,
Վորոնք հսկում են ջրերը մեր լուրի,
Խաղաղությունը մեր յեղերքների,
Մեր կյանքը անդին, աշխատանքը լույս:

Յեկ գիտեմ, չկա ամբողջ աշխարհում
Մեր յերկրի նման յերկիր մի լուսէ,
Մեր գարնան նման համասելյուռ դարուն,
Մեր սիրո նման քնքայիր մի սեր:

Իու թաշկինակդ ասեղնագործիր
Իր հրաժեշտի անափ քնքարնքով,
Իր վերագարձի դգվանքով անձիր,
Մատրոսական սեր, աղջիկ իմ դանդուր:

ԿԻՆԸ

Նայում եմ ահա պատուհանից
Յես մեր փողոցին այս նորաշեն,
Մի ջահել կնիկ մաղերով չեկ,
Գրկած վարդենու ծաղկաման մի

Գարնան շուկայից գնում ե տուն:
Գնում ե անամպ ժպիտ կա մի
Աչքերում նրան ջինջ ու խնդուն,
Շրթերի վրա վառ ու կարմիր:

Յես հասկանում եմ այդ չեկ կնոյն
Ուրախությունը գարնանային,
Նա ստացել ե մի նոր տուն, ո,
Ու ամուսնացել ե հենց այս մայիս:

Յեկ ահա հիմա շուկայից նա
Գնած բողբոջուն այդ վարդենին
Տանում ե սիրով, խինդով անամպ
Ծաղկազարդելու սենյակներն իր,

Վոր իր նոր տանը բուրեք, վարդեր,
Զեր արեային բույրը վառման,
Ու հրապույրը այս նոր գարնան,
Հետո համբույրը կյանքի մեր թեժ:

Յեկ հետ, յես զիտեմ, քնքուշությունն ե,
Մերն ե, դգվանքն ե բողբոջելու
Յեկ տեսնելու յեր խնդություններ, —
Լույս մանուկներ, լույս սենյակներում:

Լացերն եք նրանց լսելու դուք,
Յեկ ծիծաղները բռւռն, անսահճ,
Ու տեսնելու յեք վոնց խլրտուն
Խաղերում նրանք կատնեն հասակ...

... Զգիտեմ նրա ամուսինը
Լավ նարվաստի յե, թէ ողաչու,
Բայց նախահճում եմ յերկուսին ել,
Լավ բախտի համար նրանց հնչուն:

Յեկ ընտանիքի համար այն նոր,
Վոր ստեղծելու յեն միասին,
Յեկ մանկանց համար այն քնքանուրը,
Վոր ծնվելու յեն այդ լիասիրա

Նոր ընտանիքի աստղերի տակ,
Ու ծաղկելու յեն, ո՛, լիաբուժու,
Քաղցի, կարիքի միջա անգիտակ
Մեր խորհրդային կանաչ ավում:

Ա՛յս, յերազում եմ ահա յես ել
Ունենալ այդքան քնքալի կին,
Վոր մտերմությամբ խոր, անեղերք,
Ինչպես ամառվա վճիռ յերկինք,

Սիրեյինք իրար անխար, վառման
Քո մակնթացով, ո, նոր կյանք իմ...

Սերն այդ անմոռաց յերգեր դառնար
Յեկ ընթերցողն իմ հիշեր անզիր...

Բ Ն Ի Ր...

Քնի՛ր, ընկերուհիս, ուր ել լինես, քնի՛ր,
Արդեն դիշեր ե ջինջ, հանդարտավե՛տ, խաղա՛ղ,
Մտավլ լուսինն արդեն ամպի անկողինն իր,
Լոկ աստղերն են շողում — աշնան դեղին սաղարթ:

Քնի՛ր, քնի՛ր անո՛ւշ, թող յես քեզ յերազվեմ,
Ինչքան ժամանակ ե ել չենք տեսնում իրար,
Յես քեզ ցանկանում եմ լուսեղեն յերազներ,
Մանկան յերազներ զուլալ ու խանդավառ:

Յես քեզ ցանկանում եմ խնդություններ հաղար,
Ծաղիկների նման ցողազարդ, բուրավետ,
Յեկ յերկնքներ, յեթեր, կապոյտներ լուսազարդ,
Յեկ այն, ինչ յերազում լուսավոր ե, լավ ե,

Բայց դու դեռ նստած ես գրասեղանի դեմ,
Համալսարանարան ու Փերատուր, ես կազմում,
Շեքսպի՛ր ես կարգում, Սեբաժմանե՛ս, թէ՝
Ինձ ես գրում նամակ քո սրտառուչ լեզվով:

Գուշե գու խորհում ես, թէ ի՞նչ սակառնակից
Պիտի թուչես վաղը պարացուտով...

Քնի՛ր իմ լավ գարնան ավետիք, ծիծենակ իմ,
Քնի՛ր, դիշեր ե խոր, քնի՛ր, քնի՛ր շուտով:

Վոչինչ, յեթե անդամ
Քո լացով խանդարես
Գործո պոետական,
Իմ փոքրիկ, իմ արե:

Ար'ի, գու չո՛ւտ արի,
Որորոցդ բաց ե,
Բեր ինձ քո սրտալից
Մանկական ջինջ լացը:

ԻՄ ՄԱՆԿԱՆ

Յել գու կդաս աշխամբհ
Գալրնան ծաղկի նման,
Քո աչքեցում պայծառ
Հազար ժպիտ, հմայք:

Ինչքան ծաղիկներ կան
Երթունքներով փիրուզ,
Քո գալուստը հանկարծ
Կլողջունեն սիրով:

Յել գու կդաս աշխամբհ
Կյանքում ուրախաբեր,
Ուր բերկրանքն է անխառ
Ծիածաններ կապել:

Որորոցիր մերն
Ստողերը կնազեն,
Իմ փոքրիկ, իմ արե,
Յանկալի յերազ իմ:

Թե ինչքան ընկերներ
Ունես մեր լույս յերկրում, —
Դու գալուց կտեսնես
Ո, իմ մանկիկ բերկրուն:

Նրանց հետ կիսաղաս,
Նրանց հետ գու կաճես
Մեր աշխամբհում խազակ,
Արեի տարկ մեր ջերմ:

Խաչածեվեն ինչքան եւ
Յերկինքը նրանք
Հորըդ գերել չեն կարող
Յեթերի վրա:

Որո՞ր, որո՞ր, անզինս,
Որո՞ր իմ լավիկ,
Շուտով կեջնի հայրիկը
Յերկնքից ծալի:

Ուրախ, զվարթ կա, քեզ
Կզրիկ սիրով,
Իմ լավ, փոքրիկ ողաչու,
Որո՞ր, որո՞ր:

Մուշ - մուշ, անուշ քնիր դու,
Վոր շուտ մեծանաս,
Հայրիկի հետ ող թռչես
Անվա՛խ ու անա՛հ:

Յես ուզում եմ, վոր լինես
Հայրիկիդ նման,
Յես ուզում եմ, վոր դու յել
Վարես սավառնակ:

Յես ուզում եմ, վոր դու յել,
Յերբ մեծանաս
Պարաշյուտով քո թռչես
Անվա՛խ ու անա՛հ:

Քնիր, քնիր, վոր վաղը
Սյուդրում տանեմ,
Քնիր, հայրդ յերկնքում,
Մայրիկդ տանն ե:

ՈՐՈՌՈՑԻ ՅԵՐԳԸ

Որո՞ր, ո՞րո՞ր մանկիկս,
Որոր իմ անուշ,
Զինջ և հիմա յերկինքը
Անամալ ու անմուժ:

Որո՞ր, ո՞րո՞ր, քնիր դու
Լույս որորոցում,
Հայրդ և լողում յերկնքում,
Աստղերի ծոցում:

Որո՞ր, ո՞րո՞ր, քուն յեղիր,
Դուրս գամ պատշգամք
Ու նայիմ յես այնտեղից
Յերկինքը անամալ:

Թոփչքները տեսնեմ յես
Հայրիկիդ խիզախ,
Լույսերի տակ լուսնյակի
Վոսկեդիսակ:

Հիմա քանի լուսարձակ
Ուզում են գերել
Սակառնակն իր համարձակ,
Յեթերից վերեվ:

Սակայն վորպես մի հմուտ,
Հանդուզն լողորդ,
Նա յեթերն ե սուզվում մուժ
Ու գաղտնի լողում:

ԵՐԱՅԻՆ ԱՅԹՈՒՄ

Յես այգումն եմ ահա, ու շրջում են շուրջո
կանաչ դրոշները մայիսյան ծառերի,
Յես խմում եմ ծաղիկների բույրը, շունչը,
Ծաղիկները — լույսը արեի :
Ու աքասիները հովը որորում եւ,
Պար են գալիս նրանք, ինչպես հարսանիքում,
Վողկույլներով ձերմակ քնքորթն բուրում են,
Լուսմ ճնճղուկների ծլվլոցը յերգուն :
Երդեն թութն ե հասել սե՛, նման սե սաթի,
(Բերանները մանկանց սեացել են),
Այգու ջինջ յերկինքը կապույտու սատին
Լուսաբացն անձրեվով լվացել ե :
Արդեպանի տունը ձերմա՛կ, նորակառուց
Վողովել ես, գարուն, կանաչներով թալիչ . . .
Յերեվում ե այստեղից հարությունն որորուն
Ծովի, վոր նման ե կառտապույն կտավի :
Ինքնաթիւնի կաթինկայի պատուհանից
Շա՛տ եմ նայել յես քե՛զ կտապույտներից մհառքս,
Թվացել ես, այգի՛, կանաչ կղզի դու մի,
Ինչ վոր մի հրաշքով այս թմբերին նետած :
Գորշ գերեզմանոց ե այստեղ մի որ յեղել
(Շիրմաքարեր դորշուկ, անհրապույր վուկած)
Դաշույն, սպանությունն ու արյունոտ յեղե՞նն,
Խավա՛ր, ուրսվալիաննե՛ր հոգիների մեռած :
Քե՛զ եմ փառաբանում քաղաքային խորհո՛րդ,
Նալթային բանակի դու չինարար բազուկ,
Գո՛ւ, վոր մեռելային այս վայրերում խարիսու
Ալեյներ ես փոել ծաղկավոր ու նազուն :

Յեվ չենքեր ես կերտել բետոնե, բազմահարկ,
Լողանում են վորոնք արեի լույս փոշում,
Վորոնց շուրջն ահա վորաբես արթուն պահարկ
Բարդիներն են խշում :
Յեվ ապրում ե այնտեղ, կրծքին փառքի պոակ,
Մեր նոր մարդը զիարթ իրա ընտանիքով,
Այդ տներում ձյունե՝ սունկերի պես բոած
Մայիսյան ծառերի կանաչ դրոշների քով :

Առավոտյան գովն և
Յերեսը լվանում,
Առավոտվա հովը
Յրտագին ու անուշ:

Առավոտվա ամպեր
Վար նետեցեք վերից
Սպիտակ սրբիչներ
Լվացած, ջինջ ելի:

Այս զով շամանդաղին
Ա՛խ, ինչ ըալ և գնալ
Վալեյրովի խաղի,
Ամպիկներ իմ գունատ:

Բայց լալ և ավելի,
Գնալ, նստել մակույկ,
Ջրերի հայելին
Անալիք և, մաքուր:

Բայց ամենից լալ և
Թռչել պարաշյուտով,
Առաջին ողանավը
Ա՛խ, կթռչի շուտով՝

Լինել միշտ ձեզ մոտիկ,
Զեր լաղուքում լողալ
Այս ջինջ առավոտին,
Ամպեր ճերմակ մեխակ

ԽԱՐԾ ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անձրեվն և թափալում
Մայթեղի վրա,
Յերեկոն կապույտ
Խփել և վրան :

Կանաչ վարսերն են
Իրենց լվանում,
Մայթ'ս, ծառերդ
Ծաղկուն ու անուշ :

Մեղմ ստվերներն են
Ծածանվում նրանց,—
Սև կապերտներ են
Մայթեղի վրա :

Սիրենինե՛ր իմ,
Զեր բույրն եմ խմում,
Սիրելիներ իմ,
Մոտիկ ու ծանոթ . . .

Շուշանե՛ր ըրշուն
Բաժակներով լուրթ,
Վարդեր քաղծրաւունչ
Ու մեխակներ լույս,

Բուրեցե՛ք, իմ նոր,
Հայրենի Բագվում,
Գինո՛վ եմ, գինով
Զեր խոր բուրմուճքով :

Իլիչի այգում,
Ծովի յեղերքին
Ֆարբիկում, հանքում
Դիմավորե՞ք ինձ:

Ներս խուժե՞ք, ո՞, ներս
Տները մեր լույս,
Ծաղիկներ գունեղ
Բյուր յերանդներով:

Կուրծքը զարդարե՞ք
Մեր աղջիկների, —
Շքանշաններ
Գարնան որերի:

Պատկներ կախե՞ք
Պատուհաններից,
Բույրով վողողե՞ք
Սենյակները ի՞մ:

Զ Ս Ե Ր

Զյունը իջել ե տանիքներին
Ու մեր քաղաքը նկարադարդել,
Ամենուր փոել սպիտակ վարդեր,
Սպիտակ ծաղիկներ սիրելի:

Ծառերն են ահա ճերմակաթերթ
Ծաղկել ծաղկանցով վաղ, ձմեռային,
Յեկ այդում ասես մի ճերմակ մայիս
իր ճերմակ փառքը, խինոն ե հորդել:

Յեղեցնիներն են գլխներին
Իրենց շղարշներ գցել սպիտակ,
Խեկ վերը, յերկիմքը մի անդույն կտակ—
Թափում ե ձյունի աստղերն ելի:

Ո, ձյունը ճերմակ եջ ե կազմել
Պատանեկան հրապարակում,
Ուր միշտ խաղում ե իմ սեփականդուր
Վորդյակը, ուրիշ մանուկների հետ:

Կաղում են, սահում սահնակներով,
Դահուկներով են խառնում ձյուները,
Դեմքերը նրանց վարդագունել են
Դուրեկան ցրտից, խաղից յեռուն:

Ծինում են նրանք ահա ձյունից
Կխարձանները մեծ զեկավարի,
Նա վոր տվել ե անսահման բարիք
Իրենց մանկության՝ լույս, յերջանիկ:

Նա, վոր հայրիկն եւ անծայր, անծիբ
Մեր Մեծ Միության պատանիների,
Վորի անունը թանկ եւ, սիրելի
Բոլոր սերերից, ամեն դանձերից :

Նա, վոր դպրոցներ եւ անթիվ բացել,
Իրենց պատանի մտքերին տովել
Թռիչքի, թափի, ոլացքի թեվեր
Մեր մեծ գալիքի լուսաբացին :

Ահա նա կեցած, հագին շինել,
Աջ ձեռքը ծոցում, հայացքում անմինջ
Ժաղիտ ու քնքանք : — Ամեն պատանի
Այդպես եւ տեսնում առաջնորդին մեր :

Հիմա դեռ ձյունից դուք քանդակե՞ք
Նրա արձանը, մանուկնե՛ր պայծառ,
Իսկ վաղը, գիտեմ, վարպետնե՛ր դարձած
Կառլից, բազալտից ու մարմարից եք

Կերտելու հմուտ ձեռքերով ձեր
Մոնումենտները նրա փառավոր
Մեր քաղաքներում շեն ու լուսավոր
Յեվ արեվային գյուղերում մեր :

Հիմա խաղացեք ձյուների մեջ,
(Յես ել ձմեռվա մեծ սիրահար եմ),
Սիրում եմ նրա ճերմակ գոհարը,
Փայլվիլումները նրա պերճ :

Սիրեցեք դուք ել ու լվացեք
Ձեր ձեռնիկները ձյունով առաջին,
Մարզե՞ք դուք հիմա ցուրտ յեղանակին
Պատանեկան մարմինները ձեր :

Աճեք ներդաշնակ ու մկանուտ
Իրաններով ձեր կուռ ու հոյագեղ,
Ինչպես անտառի ծառերը չքեղ,
Սաղարթախիտ ու բույրով անուշ :

Թո՞ղ ձեզ չինի, ո, վոչինչ խորթ
Մեր հայրենական աշխարհի վրա,
Վո՞չ ձյուները այս, աստղերը շուայլ,
Վո՞չ ջրերը, վո՞չ ամպ, մառախուղ :

Սիրով նայեցե՞ք յուրաքանչյուր
Կաթիլ անձրեվին, ցողին ու շաղին,
Ձեր վոտքի տակի կանաչին, հողին
Ու առուներին պաղ, կարկաչուն :

Ի՞նչ կա ավելի խոր, կախարդեչ
Զմռան գիշերից լուսավոր, հստակ,
Զյունն եւ խցառում ձեր վոտքերի տակ,
Լուսինն եւ նայում բաց կապույտից :

Իսկ գուք անցնում եք ձյունածալալ
Զվարթ փողոցով քաղաքի ձեր լույս,
Յերգում, ծիծառում, խնդում ու յեռում
Ու խմում ուղը ձյուն գիշերվա :

Իսկ ամառները յեղե՞ք հաճախ
Արեի ներքո պայծառծնծղա,
Ավաղներում շեկ թափալվեք խաղաղ,
Լողացե՞ք ծովում կապուտաչյա :

Յելե՞ք լեռները սեգ, բարձրանիստ
Ու գաղաթներից հեռուներ նայե՞ք,
Լուրթ հորիզոններ թող ձեզ հմայեն,
Թող ձեզ համբուրե քնքուշ քամին :

Սովերու անտառներում յեղեցք,
Նբանց անդուրը խանգարեցէք դուք
Վոտնաձայներով ձեր հնչել, խնդուն
Ու ծիծաղներով զբնագուն, խենթ:

Զե՞ վոր տերերն եք դուք մեր հողի
Յեկ պարտավոր եք դուք լավ ճանաչել
Նբա արևել մերջին ճանանչն ել,
Վերջին տերելն ել՝ վերջին շյուղի:

Նա մայրն ե, մայրն ե՛ մեր սրբագան,
Հաբաղատ, աղատ անհուն լայներով,
Հովիտներով ու տափաստամներով,
Այդիներով պերճ, կանաչազարդ:

.. Զյունը իջել է տանիքներին
Յեկ մեր քաղաքը նկարագարդել,
Ամենուր փուլ սպիտակ վարդեր,
Թող նբանք լինեն ձեզ ոիբելի:

ՃԱՆԱԶՈՒՄ ԵՍ ՅԵՐԿԻՐՆ ԱՅՆ...

(Նմանություն Գյոթեյի)

Ճանաչո՞ւմ ես յերկիրն այն, ուր լիմոնն ե հասնում,
Ուր գոհար խաղողով այդիներն են վողող,
Ուր նարինջը վորպես արեվային հասույթ
Նարինջնիների պուրակում ե շողում:
Գնանք, բարեկամ իմ, պայծառ այն յերկիրը,
Ուր հնչում են դվարթ Շոթայի յերդերը:

Ճանաչո՞ւմ ես յերկիրն այն, ուր ջինջ ծովն ե ծփում,
Կանաչ կոհակներով լվանում ափերը,
Ուր կիպարիսներն են քնչորոք սոսափում,
Ուր արեվը անեղծ խուրձերն իր թափել ե:
Գնանք, բարեկամ իմ, յերկիրն այն դեղանիստ,—
Փույնի, գեղեցկության ու շքեղ սեղանի:

Ճանաչո՞ւմ ես յերկիրն այն, ուր Ստալինն ե ծնվել,
Բյուր ժողովուրդների առաջնորդն իմաստուն,
Վորի փառքը վորպես ձյունե կազբեկը վեհ,
Վե՞ր, վե՞ր ե խոյացել վողջ աշխարհի սրտում:
Գնանք, բարեկամ իմ, այն յերկիրը խնդուն,
Ուր փառքն ե աղմկում Արագվայից հորդուն:

Ճանաչո՞ւմ ես յերկիրն այն աղջիկների նազուն,
Բարակիրան քնչուշ հայացքներով լուսե,
Աչքերով գարնանային, լիահույս, յերազուն,
Մաղերով հարավի գիշերների պես սեվ:
Գնանք, բարեկամ իմ, այն յերկիրը լազուր, —
Սիրո, գեղեցկության, արեվի ազագուն:

Ճանաչում ես յերկիրն այն ջրմվեժների արծաթ,
ՅԵՎ Դարյալի խորունկ, Լեռմոնտովի յերգած,
ՅԵՎ Քուռի հորդահուն — լույսի պայծառ արձան,
ՅԵՎ թեյի արտերի փարթամ, գեղանկար:
Գնանք այն յերկիրը, գնանք բարեկամ իմ,
Թող որորի մեղ նոր Վրաստանի քամին:

ՄԵԾ ՅԵՐԳՉԻՆ

1

Գեղեցիկ և Վրաստանը,
Գեղեցիկ և վորպես հարս,
Յերդիչները շատ են յերգել
Գեղուհուն այդ վոսկեվարս:
Բայց ո՞ւմ յերդն է հնչել այնպես
Քաղցրաբարբառ, հորդալի,
Յեղել այնչափ սրտաբուղին, ջերմ,
ինչպես յերգը Շոթայի:
Ո՞վ և նրա նման սիրել
Իր գյուցազուն հերոսին,
Ապրել նրա տառապանքով
Ու խնդությամբ միասին:
Յուրաքանչյուր խոսքը նրա
Մարդարիտ և թանգագին
Ու մրցում և շողերի հետ
Սրելակի խնդադին:
Սիրահարի աչքի նման
Մեն մի բառը Շոթայի
Ծով — ծով շողում և աննման,
Հրապուրում հմայիչ:

2

Հին ժամանակ Վրաստանում
(Սա հեքիաթ չե կաթոգին),
Յերբ աղջիկը հարս եր գնում,-
Մեծ Շոթայի գիրքն եր անգին,

Վորպես ոժիտ մի թանգաղին,
Հերանց տնից ստանում,
Պահում սիրով մի անմեկին
Ուրախությամբ մի անհուն:
Տխուր որին վրացուհու
Միրտն արդ գիրքն եր փայլայում,
Յեվ հանճարեղ անուշ յերգով
Կախարդում ու հմայում:
Նա խոսում եր արդարության,
Գեղեցկության մասին վառ,
Հերոսության ու բարության
Գովքը անուշ անկաչառ:
Ժողովուրդը (թավաղների
Տաժանելի լծի տակ),
Միշտ փայել ե ու պահել ե
Գիրքն արդ՝ սիրով անհատակ:
Ժողովուրդը միշտ սիրել ե
Շոթայի յերկը հանճարեղ,
Հասցըել ե այն նա մայրաբար
Մինչև կյանքը մեր արեվ:
Այսոր չքեղ Վրաստանի
Յերկնքի տակ աստղապարդ
Խորն ե հնչում Ծուսթավելու
Յերդը ուրախ ու ազատ:
Գեղածիծաղ հովհաներում
Ու լեռներում գեղեցիկ
Նա կարկաչում — խոխոջում ե
Աղբյուրի պես յերգեցիկ:
Ու զնդում ե մեր մեծ յերկրի
Լեզուներով սիրելի,
Վորպես անթոշ ծաղկանց պսակ
Վրացական հանճարի:
Գերում ե նա գոհար խոսքով

Մեծաքանքար Շոթայի,
Վրացուն և ուկրայնացուն,
Ադրբեջանցուն, հային,
Վորոնք հիմա յեղբայրական
Նույն հույզերով վարարուն
Մեծ յերգչի արեղական
Հիշատակն են մեծարում:

Շ Ք Ա Ն Շ Ա Ն

Վորպես անթառամ մի վունջ ծաղիկ,
Թող գոշիդ վրա ծաղկած մնա
Մեր յերկը փառքի ու ծիծաղի
Լուս ծաղիկը այդ անմար, անմահ:

Դրանից վառման ծաղիկ չկա
Մեր մեծ Միության ծաղկուն այլում,
Դու կրիք նրան, իմ բարեկամ,
Վորպես գրոշակն մեր բոցագույն:

Դու կրե՛ր նրան, նա կտա քեզ
Յե՛կ խոհ, յե՛լ կրակ, յե՛կ վեհ թոփչք,
Նա քո կորովը կեռտամիե
Յեկ կմղի քեզ անդուլ կոմի:

Երան կրում են կրծքին իրենց
Սալամնորդները մեր յերկնքի,
Վորոնք գերել են, անդարձ տիրել
Հյուսիսը ահեղ ու հողմաղին:

Մեր հերոսներն են, ո, այն կրում,
Մեր աղջիկները հերոսացած,
Ղեկավարները կոփած կովում,
Մեր մարշալները հերոսական:

Քո ցնծությունը յես բաժանում եմ,
Քո խնդությունը՝ այդ իսինդն ե մեր,
Թող պայծառ լինի քո անունը
Այդ շքանշանի նման անմեռ:

Հիմա կիյելում ծաղկել են արդեն
Փարթամ ծառերը շագանակի,
Կուղեյի դառնալ յես արագիլ,
Ու կապույտներով սևանալ այնտեղ:

Շատ եմ կարոտել յես Տիչինային,
Հայացքը նրա բարի, բարի,
Յերգերը նրա լույս քնարի,
Հիմա կիյելում գարուն ե, մայիս:

Կանաչ կիյելում յերգիր կարկաչուն,
Յերգիչ, քո յերգն ե ինձ հիմա կանչում:
Հիմա կիյելում գարուն ե, մայիս:

Ղ Ր Ի Ւ

Բլուրների խաս լանջերից ,
Հովհաններից կանաչալիսիտ
Քո աչքերով սքանչելի
Նայում ես ինձ արելախինդ :

Հակինթներով լույս խաղողի՝
Կախարդական չքնաղ յերկիր ,
Դու պուշկինյան պայծառ յերդի
Մշտածիծաղ գեղեցկուհի:

Կիսկարիսներդ խաղաղ , անձայն
Կեցած են քո գրկում հանդիսատ
Իրեկ անթեք բյուր հուշարձան
Գեղեցկության , անմեռ կյանքի :

Ծաղիկներով լի , վողողուն
Այդիներում սարում , հովտում
Բլրուղմերն են քո ճըռվղում ,
Մաղում յերդեր լույս , անտրտում :

Լվանում ե Սեկ ծալն ահա
Յեղերքները քո քարակոփ
Ու նավերն են վորակն պահակ
Նոր փառքերին քո սրահակում :

Զարդարել ե ափերդ լույս
Ժողովուրդը քո ժրաշան ,
Վոր յերկնի տակ քո վիճակ , սիրութ
Ել չգիտե ցակ ու տանջանք :

Վոր աղասոված յերկողմանի
Սրծիվի մեջ մագիլներից
Կառուցում ե կյանքը յերշանիկ
Այս աչք չոյնող բլուրներին :

Ել նրան չեն խեղանդամում ,
Նավեր լցնում ու խորտակում .—
Վոսկորներն իր ել չեն փթում
Ես Սեկ ծովի մութ հատակում :

Արդ նա տերն ե քո սուրբ հողի ,
Մեծ տիրակալն ե գերազոր
Մարդարտահուր քո խաղողի ,
Գինուդ , հրի նման բոսոր ,

Քո յերկնքին այս կաստաներկ ,
Քո յըրերին քաղցրակարկաչ ,
Վոր հոսում են վորպես մի յերդ ,
Վորպես ծանոթ ընկերոջ կանչ :

Զաղը Դաղի բարձունքների
Հովանու տակ անդորրը քո
Միշտ կմնա անդրդվելի ,
Վորպես խաղաղ քո յերեկոն ,

Քանի կա Մեծ ՍՏԱԼԻՆԻ
Զեռքով գրած որենքն արդար
Յեկ արեկը Մեծ Լենինի
Ազատարար , հավետյան վա՛ռ :

ՊՈՒՐԱԿՈՒՄ

Յես դրախտին չեմ հավատում,
Թե կա դրախտ հավերժական
Դա Յալտայի այս կուտանքան
Պուրակներն են թափ, սաղարթուն:

Սոսիներն են մեզմ աղմկում
Կուրորտային կյանքի մասին,
Մենք բնակվում ենք միասին
Հեքիաթային այս պուրակում:

Շուշաններն են ծաղկում նազով
Ժայռից թռչող ջրվեժի մոտ,
Կածաններով վարուց ծանոթ
Խաղ ե անում դեմքուոր զով:

Վայրի խոտը ձորակն ի վար
Իր գորգերն ե փոել կանաչ,
Յեկ աղբյուրն ե քաղցրակարկաչ
Յերդի նման հոսում զվարթ:

Բաղեղները մագլցել են
Սոսիների բներն ի վեր
Ու խիել են մով վրաններ
Հանդստյան տան քով հոյաշեն:

Տերեվները ասես կանաչ
Թռչուններ են հեքիաթային,
Դայլայլում են անտառային
Իրենց յերգը անուշ, անանց:

Դալալասվետ այս պուրակում
Մրախել և ոռւս արքան,
Գինիներ են հոսել այնքան
Արքայական ցոփ խնձույքում:

Հարբել և նա, ցարը գոռող
Տավրիդական հզոր գինով,
Ու «Հարբած պուրակ» անունով
Կոչել չքնաղ անտառն այս կույս:

Իսկ անտառի չորս դին, հեռվում,
Յեղերքներում Սեվ ծովի լուրթ՝
Հեծել և մի ժիր ժողովուրդ
Յարական սեվ կապանքներում:

Արդ պուրակում այս հողեթով,
Խորհրդային պայծառանուն
Մարդարուսպիր մեծ որենքով
Մենք ենք հիմա հանդստանում,—

Յեվ հանքափորը Դոնքասի,
Յեվ նավթագործն Ապշերոնի,
Յեվ կոլխոզնիկը Ղըմի,
Յեվ բանաստեղծը Կովկասի:

Ինչպես յետեվն իր ականջի,-
Ել չի տեսնի վոչ մի արքա
Այս պուրակի չեմը անդամ՝
Դրախտային, աստեղաջինի:

Յես դրախտին չեմ հավատում,
Թե կա դրախտ հավերժական
Դա Յալտայի թափ, կուտական
Անտառներն են այս սաղարթուն:

ՅԱԼՏԱՅՈՒՄ

Սովեղբյա այս քաղաքում
Սոխակները այդաբացին
իրենց անուշ յերգն են յերգում—
Վարդն ե բացմում, նման բոցի :

Այստեղ ամեն մի պուրակում,
Ցուրաքանչյուր թփի ներքո
Շուշաններն են ճերմակ ծաղկում—
Քնարական նրանց յերգով :

Նրանց դայլային ե մաղվում միշտ
Այստեղ ամեն մի յեղեվնու
Մրտի վրա կանաչ, անվիշտ,
Թեփասարած ու այնքան նուրբ :

Նրանց ռոմանսներն են մանվում
Այգում մատաղ վորդատունկի,
Վորդատունկի, վոր նման ե
Կանաչ, թալիչ թաշկինակի :

Նրանց յերգն ե խոր հմայում
Քաղաքացու յուրաքանչյուր,
Վոր բնակվում ե Յալտայում—
Ափում ծովի արծաթաջուր :

Նրանց յերգն ե հիմի հուզում
Կուրորտային ամեն մարդու,—
Լինի նա խառ Սիմեիզում,
Թէ Գուրզուֆում այն զվարժուն :

Յես ել նրանց յերգն եմ լսում
Արշալույսի այս ջինջ ժամին,
Յել իմ յերգին եմ յես հյուսում
Նրանց յերգը այդ հմայիչ :

Յես լոկ մի աենչ ունեմ կյանքում—
Պոեղիայի այգում կանաչ
Լինել սոխակ մի նոր, յերգում,
Յերգել այլէսակի քաղցրակարկաչ :

Անցնում եյի արի մռառով
Հրաշալի այս Սել ծովի,
Դեմքիս համբույրը զով հովի,
Սրտումս յերդի հոգեթովի:
Անցնում եյի սիրտս լիքը
Արշալույսով Ղրիմի,
Վոր ասես լի մրգով սինի
Մատուցում եր ինձ իր միրդր:
Անցնում եյի կանաչաթեղ
Թավ յեղելնու քովավ ուրախ,
Յել վարդերի ցողաթաթախ,
Մեր մանկանց պես զվարթադիմ:
Եղում եյին շուրջս զվարթ
Զույգներով ջինջ, սրտամում,
Զեռնիկներին շուշան ու վարդ:
Դիտում եյինք վաղորդայնի
Յերանդները նկարչական,
Ալիքների պարը այնքան,
Յել թովչական, յել գեղանի:
Կյանքի մասին եր մեզ հուշում
Ամեն մի շյուղ, ամեն ալիք,
Ամեն մի շյուղ ու դալարիկ,
Ամեն հովիկ քնքշաշրջուն:
Այգարացի այս լույս պահին
Յերբ կյանքով եր սիրտս հարրած,-
Յես հիշեցի վաղուց անցած
Տարիները ահի, մահի:
Յես հիշեցի Վրանդելի,
(Ինտերվենտյան գայլի այլ սեվ)

Արախսանը արնուտ, նոեմ
Շնաշխարհիկ այս արքերին:
Յես հիշեցի Պելեկոպյան
Գրոհները մահաղարհուր,
Զել հիշեցի լոնկերներ հուր
Բնկած արին ազատության:
Յուրաքանչյուր թվի ներքո
Ու առավելյա ալիքի տակ
Վոսկորներն են հանգչում ձեր տաք,
Զեղ արյամք և հողն այս ներկվել:
Ահա այգում այս կեցած ե
Զեր շիրիմը յեղբայրական,
Գեղեցկակերտ, կամարակապ
Գլխին դրոշը ձեր բոցե:
Շիրիմի մոտ, շուրջը, հեռուն
Ժողովուրդն ե ձեր արդ ազատ,
Հայրենիքն ե ձեր ծաղկաղարդ,
Յերազներն են ձեր հուրհուրում:
Դուք ապրում եք յուրաքանչյուր
Ղրիմեցու դվարթ սրտում,
Այս սաղարթուն այգում, հովտում,
Ափում ծովի արծաթաջուր:
Ննջեք խաղաղ, իմ լոնկերներ,
Իմ յեղբայրներ թաթարական,
Զեր գործերը հերոսական
Կան, կմնան հայետ անմեռ:
Ննջեք, ձեր վառ շիրիմների
Յեղերքներին կյանքն ե խնդում
Առորյան ե մեր լույս թնդում
Ու քայլերը մեր դնդերի:
Ննջեք, թող ձեզ պսակ լինի
Նվազները հայ պոետի,
Նա կանգնած ե Զեր սուրբ դեանին,
Ուր ծաղկում ե փառքը հիմի:

Ծաղիկների դու թագուհի,
 Վարդ Հրիմի,
 Անուշ ե քո բուրմունքը
 Վորպես դինի :
 Իմ աչքերի արցունքը
 Թող քեզ լինի ցող,
 Բուրիը, չողա սեղանիս
 Կայմիր բոցով :

Արշալույսը վոսկեպուրպուր
 Ասես գինի վոսկեփրփուր
 Քամվեց ահա ծովի վրա,
 Յես հիշեցի սիրով նրան—
 Մեծ Պուշկինին թխագանգուր,
 Վոր ափերից այս ժայռակուռ
 Այսպես լուսե մի առավոտ
 Նայեց սրտով անձկակարոտ
 Հեռաստանին ծովի աղատ :
 Նայեց այնպես խոր, հարազատ
 Ու լուսազարթ տաղեր տաղեց,
 Ու կարոտն իր, անունը մեծ
 Գալիք սերունդներին թողեց :

ԴԵՊԻ ԳՈՒՐՁՈՒԹ

Թուչում ե մեր ավտոն թեթեվ
Ճանապարհով արելազո՞ծ,
Թողած յետել կանաչաթեվ
Մառաշարքեր այնքան նազուն :

ԳուրզուՓ, ԳուրզուՓ չքնաղանիստ,
Պոետական գեղեցիկ վայր,
Ճախրում ե իմ սիրտն անհաճդիստ
Գո գիրկն այնքան թովչական, վաս:

Գեղությունը քո անծիր ե,
Նրանից ես ինձ սիրելի,
Վոր Պուշկինն ե քեզ այցելել
Աքսորական իր որերին :

Արքայական հալածանքից
Հեռու այստեղ յերազել ե
Ու գտել ե խաղաղ հանգիստ
Ու կորցրած յերազները :

Պատմիր դու ինձ, թովիչ ԳուրզուՓ,
Քո պոետի մասին այն մեծ,
Թող վորապես մի չքնաղ ասուպ
Մնա սրտում իմ ջինջ, անեղծ :

ՍԻՐԵՐ

Ծովը մանուշակ ե
Փիրուզաչյա, կապույտ,
Զուրը այնքան տաք ե,
Ցողովուն ե, անփույթ:
ԴելՓինները ճերմակ
Խայտում են կենսուրախ
Ալիքներում հատակ,
Յերազի պես զուլալ:
Ինչքան, ինչքան բավ ե,
Ինչքան դյութիչ, գերող
Նատել մակույկ, նավել
Դեպի հեռու հեռուն,
Դեպի լայները բաց
Ծովի քնքչազեփյուռ,
Ուր խաղում են ալյաց
Հորձանքները բյուր:
Ուր վոր Բալակլավի
Զկնորսներն են ջանում
Ու ջրերից ծավիկ
Լույս դելՓիններ հանում:
Գնալ, տարվել նրանց
Զկնորսական յերգով,
Հյուսած ծովի վրա,
Ծովի անուշ տեսքով:
Գնալ ուղեկցելով
Մարդատար նավերին,
Գնալ սիրազորով
Խմբով ընկերների:
Մեզ ե սպասում արդեն

Կանաչ այն բարդարկան,
Ուր ես բրոնզառեմ
Իմ սեր, իմ բարեկամ:
Թիւակները առ դռւ,
Թիւավարենք, նավենք,
Ծովը ջինջ ե, խնդռն,
Ծովը այնքան լավ ե:

ՍԱՎԱՌՆՈՐԴՈՒՀԻՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Խորհրդային մայր հողի
Աղջիկներ ենք անձնութաց,
Ուր կամենա յերկիրը —
Մենք այնտեղ ել կսուրանք:

Մենք յերգում ենք, այս յերգը
Վողջ յերկիրն ե համակում,
Մենք կհաղթենք թշնամուն
Ողում, ջրում, ցամաքում:

Ահալոր չեն մեղ համար
Վոչ հողմերը մոլեգին,
Վոչ մշուշներն անսահման
Պատնեշներով ահաղին:

Մենք յերգում ենք, այս յերգը
Վողջ յերկիրն ե համակում,
Մենք կհաղթենք թշնամուն
Ողում, ջրում, ցամաքում:

Վորպես հանդուղն արծիվներ
Մենք ճախրեցինք սրաթեվ,
Ծփուն դետեր, անտառներ,
Դաշտեր թողած մեր հետեւ:

Մենք յերգում ենք, այս յերգը
Վողջ յերկիրն ե համակում,
Մենք կհաղթենք թշնամուն
Ողում, ջրում, ցամաքում:

Տայգայում մութ, մալովակուրկ,
Ճահճուտի մոտ մենք իշանք,
Ժողովուրդը ուղարկեց
Մեզ փրկություն, խինդ ու կյանք:

Մենք յերգում ենք, այս յերգը
Վողջ յերկիրն ե համակում,
Մենք կհաղթենք թշնամուն
Ողում, ջրում, ցամաքում:

«Հայրենիք»-ի թեվերին
Հայրենիքին բերինք վասաք,
Մեզ պես խիզախ աղջիկներ
Մեր յերկրում կան անքանակ :

Մենք յերգում ենք, այս յերգը
Վողջ յերկիրն ե համակում,
Մենք կհաղթենք թշնամուն
Ողում, ջրում, ցամաքում:

Հնչում ե մեր չուրթերին,
Շողլողում ե մեր սրտում
Արեվային անունը
Առաջնորդի իմաստուն :

Մենք յերգում ենք, այս յերգը
Վողջ յերկիրն ե համակում,
Մենք կհաղթենք թշնամուն
Ողում, ջրում, ցամաքում:

ՅԵՐԻ ՎՈՐՈՏԱՆ ՇԵՓՈՐՆԵՐԸ

Յերբ վորոտան շեփորները,
Թշնամու դեմ արնազաղիր
Մենք կսուրանք պատերազմի,
Հաղած ոազմի մեր չորերը:

Յերբ վորոտան շեփորները,
Խորհրդային հող խմ հպարտ,
Կոփկ կերթան վորոշիներդ,
Վորպես մի սիրտ, մի առյուծ մարդ:

Յերբ վորոտան շեփորները —
Գրկի միջից քո մայրական,
Յերկիր, կելնեն Զապայներդ,
Հերոսները քո մարտական :

Յերբ վորոտան շեփորները,
Արտօտաները մեր մետաղե, —
Մով յեթերից հուր կմաղեն,
Յել կսարսեն վոսոխները:

Յերբ վորոտան շեփորները,
Մեր տանկերը ամպրոպազարկ
Նենդ թշնամու խրամները
Կդարձնեն գորշ վրատակ:

Յերբ վորոտան շեփորները,
Իմ պետություն, հոռը յերկիր,
Քո նասվերը զբահակիր
Կդրկեն մով ովկիանները:

Յեղբ վորոտան շեփորները —
Մարտ կթռչեն մեր քաջարի
Կարմրագլուզ հեծյալները,
Նման անանց մի անոտադի:

Յեղբ վորոտան շեփորները,
Վարդերի պէս առավոտյան
Կհուրհբան մեր դրոշները
Յերկրագնդի վրա համայն:

ԳԵՂԵՑԻԿ ԵՆ ՈՒ ԶՔՆԱԴ

Գեղեցիկ են ու չքնաղ
Այգիները խորհրդային,
Ասես հարսեր են չարմաղ
Այգիները խորհրդային:

Լինեն նրանք Ուկըախայի
Հովիտներում գեղանի,
Լինեն նրանք Վարսասանի
Գրկում, այնքան դվարթ մայիս: —

Լինեն նրանք, Ադրբեջան,
Ծաղկածրար ամերիդ,
Լինեն նրանք, լույս հայաստան,
Փեշերին քո լեռների: —

Գեղեցիկ են ու չքնաղ
Այգիները խորհրդային
Այգեկութե, մրգաքաղ,
Մրգերի առն ե հորդայի:

Փառք ժրաջան այգեպանին,
Սուալինին անսասան,
Վոր գարձրեց խորհրդային
Վողջերկիրը այգեստան:

ՀՐԱՑԱՆ ԻՄ...

Հրա՛ցան իմ, հրացա՛ն,
Քեղ հետ միասին
Սահմանները մեր պայծառ
Հոկում ենք լիասիրտ :

Ահա Արագն ե հոսում
Դանդաղ, յերջանիկ,
Հեռվում արտերն են խշում
Ադրբեջանի :

Հեռվում դյուլեր են փոված
Աշխատանքով խաղաղ,
Յայլաղային վրաններ,
Յե՛կ ավաններ, և՝ քաղաք :

Հրա՛ցան իմ, հրացա՛ն,
Քերեք գծանի,
Թե վոր փորձի սահմանը
Անցնել թշնամին,

Գլխին հուրը քո ցանի՛ր
Անխափան ու խնդուն,
Կրակովդ պաշտպանի՛ր,
ՅԵ՛կ հայրենիք և տուն :

Հրա՛ցան իմ, հրացա՛ն,
Մաքուր ու յուղած,
Արելի տակ հրացայտ
Փայլիր ու չողա :

Հրա՛ցան իմ, հրացա՛ն,
Իմ ձեռքում ամուր,
Տե՛ս, ցերեկը հեռացավ,
Կապույտ մութին ե մանվում :

Հարկավոր ե, վոր լինենք
Ավելի արթուն,
Զգոն հոկենք խավարում
Մենք ամեն մի թուփի :

Հրա՛ցան իմ, հրացա՛ն,
Յես սնայպեր եմ,
Զան, մեր յերկրում ինչքա՞ն կան
Լավ սնայպերներ :

Հրացա՛ն իմ, հրացա՛ն,
Քեղ սեղմում եմ ամուր,
Դու իմ ընկեր մարտական,
Դու մահ թշնամուն :

ԿԱՐՄԻՐ ՀԵԾՅԱԼԻ ՅԵՐԳԸ

Յես ջուր եյի տալիս ձիուն,
Դու կուժն ուսիդ աղբյուրն եկար,
Ասես դարուն գլարթ, սիրուն,
Հագիդ չորեր ծաղկանկար :

Յես ջուր եյի տալիս ձիուն,
Դու կուժն ուսիդ աղբյուրն եկար,
Գալիս եյիր, դալիս, սիրուն,
Ի՞նչու եղքան ինձ դուր յեկար :

Յես ջուր եյի տալիս ձիուն,
Դու կուժն ուսիդ աղբյուրն եկար,
Կարմիր հեծյալը իր սրառամ
Քեզ կհիշի յերկա՛ր - յերկա՛ր :



Բալթիական ծովն և նայում փոթորկամած՝
Ճերմակ փրփուրները կրծքի վրա դիզած —
Ախ, ի՞նչ նավազնե՛ր են, Բալթիական անափ,
Թաղլած քո հատակում, ի՞նչ ընկերնե՛ր խիզախ :

Տախտակամածներից նավերի նետել են
Մատրոսներին այն կուռ, ալստամբ ու ըմբոստ
Քո ջրերը պղտո՞ր, քո ջրերը,
Շղարշված ծանրածանր մառախուղով, ամպով :

Յես նայում եմ ահա քո ջրերին թանաք,
Ու ասում եմ՝ նրանց հայացքները բոցե
Կարմիր կրոնշտատը յերբեք չի մոռանա :

Նրանք իրենց մահով դարպասներն են դոցել
Պետերբուրգի բոցուն, Յուլենիչի դիմաց,
Հանուն Հոկտեմբերի ընդունել մահ :

ԶԱՊԱՅԵՎԻՆ

Կուզեյի յես լինել հիմա
Մե՛ծ, հանձարեղ մի նկարիչ,
Ու գույներով վառ ու անմար
Քե՛զ գորավա՛ր, մեր պայքարի

Նկարեյի հուրհուր չնչով...
Վրձինով կուռ գծեյի քո
Հայացքը բորբ ու ներշնչով,
Աչքերդ ջինջ ու կապտադույն,

Ինչպես յերկինքը Ուրալի...
Նստած նժույզդ սևաբաշ,
Դիվիդիայով քո կուռ, արի,
Բոնած ձյունոտ մի ճանապարհ,

Ինչպես յելել ես պայքարի
Կուչակի դեմ... Զորավա՛ր վեհ,
Ինչո՞ւ, ինչո՞ւ յես չեմ ծնվել
Մե՛ծ, հանձարեղ մի նկարիչ...

ՊՈԵՄՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

I

Յես ձեմում եմ կանաչանիստ այգում այս,
Ուր, ընթերցող, գուցե դու յել շըջել ես,
Աչքը հառած այս ծառերին, վոր կանաչ
Շատրվաններով բուրզում են ջինջ ողում,
Վոր պարզել են իրենց բուրյան շուրթերը
Իմ շըթերին բուրումնալից ու խնդուն:
Յես ծծում եմ նրանց բուրմունքը անուշ,
Յես գրկում եմ մեկ-մեկ այս թարմ ծառերին,
Այս տունկերին չյուղարձակ ու քնքշանութը,
Համբուրում եմ նրանց իրենի քույրերին,
Կյանքի յելած ցնծուղով մեր արևի,
Մեր անձրեվով բարեղութ ու սիրելի:
Յես տեսնում եմ՝ ահա շուրջս ապրիլը
Անձրեվել ե ձերմակալուն շուշաններ,
Ոլյանդրներ, վորոնք այնքան կարմիր են,
Վոր թվում են բոցեղեն ու արնագույն
Թաշկինակներ, թաշկինակներ և կամ ել
Բորբ կերոններ մշտաբորբոք, կրակուն:
Յես շըջում եմ այստեղ ահա, ընթերցող,
Ալեյների լայն գորգերովը խիճե,
Յել նոր գրած իմ յերգերն եմ ընթերցում
Այս թփերին, ծաղիկներին բուրավետ,
Այս վերահաս յերեկոյին սիրաջեռ,
Ու հովին, վոր մաղլցում ե ծառն ի վեր:
Շուտով, շուտով ելեքտրոններն կվառվեն
Սյուներին այս և սյուները կթվան
Հեքյաթային հոկա մոմեր պայծառ, վեհ...
Յես ձեմում եմ այստեղ ահա ու խոսում
ինքս ինձ հետ, հույրերիս հետ ու զիարթ

Մառերի հետ, թփերի հետ հովասուն:
 Մանուկներն են ահա խաղում ավազում, —
 Ո՛, մեր կյանքի ծաղիկներն այդ լուսադեմ,
 Աղմկում են, խլատում ու վազվղում,
 Կամ ճոճում են փունջ-փունջ՝ նստած կարուսել,
 Կարկաչում են ծիծաղներով արծաթե,
 Սրտերի մեջ հազար խնդում ու լույսեր:
 Ո՛, յերջանիկ, ո՛, անթախիծ մանկություն,
 Ո՛, խնդություն մանուկների մեր ուրախ,
 Ո՛, նարգիզներ, ո՛, մեխակներ զլարթուն...
 Դուք չեք տեսել վոչ սով, վոչ քաղց, վոչ կարիք,
 Այդ չեք տեսել ու չեք տեսնի մեր զուլակ
 Առորյայում, ուր կան այնքան լույս, բարիք,
 Լիություններ, լիություններ վոսկեվոր
 Չեր աշխարհում, ձեր մանկական սեղանին,
 Չեր սներում բազմահարկ ու լուսավոր,
 Ճամբարներում, մուրներում բարեշեն,
 Այդիներում ձեր քնքչորոր, գեղանիստ,
 Չեր շեներում, վրաններում զով, հանդիստ:
 Մանուկներ իմ, բալիկներ իմ խնդասիրտ,
 Յես տեսնում եմ պայծառ, վորպես ական թիք,
 Չեր դալիքը գեղատեսիլ ու հուզիչ,
 Յես տեսնում եմ մեր ներկայի աչքերով
 Աւզիները ձեր վարդավառ ու անբիծ,
 Ո՛, ձեր վազը, և' գրավիչ, և' գերող:
 Հավաքում եմ յես իմ բոլոր յերգերով
 Ծիծաղները ձեր, իմ սիրտը ներարկում,
 Իմ հին, տխուր մանկությունը հերքելով:
 Կրելու յեք դուք ձեր մաքուր ձեռքերով
 Աղատության դրոշակը արնագույն,
 Վոր կրել են Կոմիսարները հերոս,
 Վորոնց վոսկորները հիմա հանդչում են
 Այստեղ ահա, աղատության այս այգում,
 Գարնանային այս վարդերի հողի մեջ:
 Դուք խաղացե՞ք, փթթե՞ք նրանց շերմի քով.

Զեր լավ բախտի համար ընկան պայքարում,
 Զեր լավ բախտի համար ավազները դորչ
 Իրենց վասման արյուններով ներկեցին,
 Վոր ձեզ ժպտա կյանքը անվիշտ ու գարուն
 Մեր աշխարհում գեղեցիկ ու յերգեցիկ:

Ազատության հրապարակ, ի՞նչ յերգով,
 Պոետական ի՞նչ կրակով յերգեմ քեզ,
 Դու պանթեոն ազատության ու փառքի,
 — Դու Պէր-յաշ-շեզ կոմունայի հրակեզ,
 Մշտաբորբոք դու ջահ ցաման ու վառքի...
 Դու կեցած ես սերունդների սրտերում
 Վորպես մաքուր սրբություն մի սրբագույն,
 Դու կեցած ես և իմ հոգում, տաղերում,
 Դու ինձ ել ես պարգեղում հուր պայքարի,
 Ռւսուցում ես հանուն յերկրի սրբազն
 Լինել մաքուր ու ինքնազոհ ու արի, —
 Լինել արյան յուրաքանչյուր կաթիլով
 Նվիրական մեր ներկային նվիրված
 Ու կրակվել նրանց անմար հրերով,
 Վորոնց անրիծ արձանները ահա իմ
 Հայացքների հայելու մեջ անդվարե՛
 Գծված են արդ, նվիրական այս պահին:
 Յես անցնում եմ արձանների մոտով այս
 Ակնածանքով ու հարգանքով մի վերին, —
 Ահա իմ դեմ Շահումյանը դանդրամազ,
 Անկրկնելի իր անժպիտ աչքերով,
 Աղիզրեկովն, Զափարիձեն ահա մեր,
 Ֆիրուզովն, ընկերները մեր հերոս.
 Ո՛, անձնազոհ մեր նախորդներ քաջարի,
 Դուք մեզ հետ եք, դուք մեզ հետ եք պայքարում,
 Մենք սաներն ենք ձեր մաքտերի, կաճառի,
 Յեզ կրում ենք անունները ձեր մաքուր
 Մեր բոցագույն դրոշների նման վեհ:

Զեր աշխարհում, ձեր փայտիայուժ՝ քաղաքում
 Յուրաքանչյուր նավագործ ու նավաստի,
 Յուրաքանչյուր նավթագործն իր վառ սրառում
 Ձեր ավյունն է կրում չերմին ու աղնիվ,
 Հուրլը բորբոք հերոսական ու վառման,
 Նմանությամբ ձեր՝ կառուցում ու յեռում,
 Ո՛, փթթել են ձեր յերազած այն գարնան
 Մեխակները, շուշանները անթառամ,
 Ծովաղում են բազում տունկեր մեր յերկրում,
 Մեր մայիսին, շիրմի վրա ձեր հառնած:
 Յուրաքանչյուր թերթիկովը իրենց վառ,
 Յուրաքանչյուր բողբոջովը վառ, բերկրուն,
 Ձեր անունն ու հիշատակն են շրջում հար
 Ծաղիկներն այս, այս ծառերը սաղարթուն,
 Դարնան կանաչ դրոշները վեր պարզած,
 Ձեզ են հիշում, դուք վոր ընկաք մեր մարտում,
 Հանուն յերկրի ապատության, հանուն մեր
 Անպարտ հաղվի, փառքերի, արդ ծաղկադարդ,
 Հանուն գարնան, մեր ծաղկումի այս անմեռ,
 Ձեր անունը ինձ տալիս ե խոյացում,
 Նոր ներշնչանք պայքարաշունչ տողերի
 Յեվ տենչանք բարկ սիրանքի ու մեծության:
 Հովանու տակ ձեր ստվերի մեծանիստ
 Հորձանում են մեր խոհերը սիրելի
 Կոհակներով հորդահորդ ու անհանդիսա:
 Դուք յեղաք սեղ վորդիները արժանի
 Մեր սիրելի, մեր հարազատ, անդին մայր՝
 Կուսակցության մեծ լենին-Ստալինի.
 Յեղաք անհաշտ, յեղաք շիտակ, յեղաք դուք
 Անպետական, և միշտ անպարտ, միշտ անմտէ,
 Մարտ նետվեցիք, մաքառեցիք հար անդուդ
 Յեվ որերին այն դժնաքայլ ու նամիք,
 Հերոսական գլուխները ձեր դրիք
 Վեհ հեղափոխության զոհասեղանին;
 Անապատը յեղափ արնոտ գերեզման,

Ավագները արնոտ պատան յեղան ձեղ,
 Քամին յերգեց ահասարսուս յերգ թաղման:
 II
 Բորենիներ, բորենիներ վայրենի, —
 Դաշնակներ, մուսավաթներ, մենչեվիկներ, —
 Ձենք մոռացել ձեր գավերը յեղեռնի:
 Ինչքա՞ն, ինչքա՞ն խաղաղանիստ գյուղակներ,
 Լույս քաղաքներ մատնել եք դուք ալերի,
 Հրդեհների շղթաներով ողակել:
 Յեղայրական ընտանիքներ բյուրավոր
 Մոխրացել են հրեռում ձեր գավերի,
 Ծվատել եք քանի՛ այդ ու առավոտ:
 Պարել են ձեր հրդեհների կրակում
 Մեր մայրերը, մանուկները, քույրերը,
 Յե՛կ սրախող, և խելագար, և նկուն:
 Յերբեմնի շեն քաղաքները կարկառուն
 Կմախրներով, հմնակործան շենքերի
 Բյուրապատիկ նզովք են ձեզ բարբառում,
 Նզովք անվան ձեր անամոթ ու պատիր,
 Գաղափարին ձեր, գետնահար ցեխին այդ,
 Ձեր դրոշին, առմիշտ կեղտոտ այդ լաթին:
 Նզովք են ձեզ մեր մայրերը միշտ կարդում,
 Մեր քույրերը, յեղայրները հրդեհված
 Երբիմներից իրենց անհայտ, անանուն:
 Բորենիներ, բորենիներ բրիտանյան,
 Դուք, փոր արնոտ ժանիքներով ձեր գժնյա
 Հոչոտեցիք մահատեսիլ մի գիշեր
 Կոմունայի հերոսներին, փոր բոցե
 Տառերով են զերել իրենց հար անշեջ
 Անունները մեր անձնութաց սրտերում,
 Դուք զեն մի որ կիսրտակվեք մեր հորդուն
 Հորձանքներում ատելության հեղեղի,
 Վոր շաջում ե, ինչպես կասպին, յերբ հեռվում
 Փոթորկաբեր նորդն ե շաջում կատաղի,

Յերբ ձեռքերում սեպտեմբերյան մեծ հողմի
 Դալարփում են ջրերը մուլթ ու աղի:
 Բագուն, Բագուն ձեզ չի ների, չի ների
 Դենստերպիլ, Տոմսոն, ո՛, զուք արյունաբրուտ,
 Դեռ կսարսեք Հոկտեմբերյան սրերից,
 Դեռ մեր այդը կծածանվի Լոնդոնի
 Հորիզոնով՝ արդ միշտամած ու ամպոտ,
 Անգլիայի հանքափորը կտոնի
 Քսանվեցի մուտքն՝ յերկիրն հայրենի,
 Յեվ կունենա նա իր կերտած աշխարհում
 Յեվ հա՛ց, և տո՛ւն, և խմբությո՛ւն, հայրենիք:
 Բագո՛ւ, Բագո՛ւ, հերոսական իմ քաղաք,
 Դու որորան վորդիների քսանվեց.
 ՅԵ՞ՐԲ եր, յԵ՞ՐԲ եր, վոր գալարվեց ու սողաց
 «Թուրքմեն» նավը քո ծովով խոլ, մոլեղին:
 ՅԵ՞ՐԲ եր, յԵ՞ՐԲ եր, վոր բյուր սրեր հեսանվեց,
 Մրախողվեց սիրտը, սիրտը քո անդին,
 ՅԵ՞ՐԲ եր, յԵ՞ՐԲ եր վոր Բայիլի բանտը սեվ,
 Վորպես ահեղ մահատեսիլ մի Բաստիլ,
 Վորդիներին, զավակներին քո վսեմ
 Վի, ապների մագիլները նետեց նենդ:
 ՅԵ՞ՐԲ եր, յԵ՞ՐԲ եր, գնդակոծված, ահազդիկ
 Փարիզ դարձար, գերված, ծեծված, արնաներկ:
 Պատմի՛ր, Բագո՛ւ, պատմիր զու ինձ, քո վորդուն,
 Յես ել եմ քո մոից, վոսկրից, արյունից,
 Յես ել եմ քո հուրը կրում իմ սրտում:
 Պատմի՛ր այնպես կենդան, այնպես մայրաբար,
 Թող քսանվեցն Հողաթմբից այս հառնի,
 Թող յես տեսնեմ հայացքները այն հպարտ,
 Վոր տեսել են ավազները ամայի.
 «ՄԵՆՔ մեռնում ենք, սակայն նորից մենք կդանք . . .»
 Շուրջս ահա և՛ ինդություն, և՛ մայիս,
 ՄՌւր են նրանք, ոՌւր են, Բագո՛ւ, ոՌւր են, մա՛յը,
 Յես ուղում եմ լսել նրանց հազթական
 Վոտնաձայնը, յես ուղում եմ ամեն մայթ,

Ամեն փողոց, ամեն նրբանցք, հանքուղի
 Տա ինձ նրանց հետքերը թանդ ու վսեմ,
 Յես գնում եմ միշտ անսայթաք և ուղիղ
 Նրանց դժած ճանապարհով սրբազն,
 Յես պահում եմ իմ մեջ նրանց այն լուսե,
 Այն փայփայած խոհերը մեծ, հարազատ:
 Յես ուղում եմ տեսնել նրանց կենդան ու
 Դրկել, զգվել, յեղբայրորեն փայփայել
 Ու մատուցել պայծառ սիրով մի անհուն
 Ծաղկեփին ներ բազմայերանդ, մայիսյան,
 Ծահումյանի աչքերի մեջ մի նայել,
 Ալյոշայի ձեռքը սեղմել ցնծությամբ,
 Աղիզբեկովին իր մայրենի լեզվով
 Մեր Վուրդունի լիրիկ յերգերից կարդաւ,
 Ֆիոլետովին ասել՝ յեղա յերազուն,
 Անտառանիստ հայրենիքում իր զվարթ,
 Խոսել բոլոր ընկերների հետ պայծառ,
 Լույս ներկայից, մեր գալիքից այնքան վառ:
 Բագո՛ւ, Բագո՛ւ, տո՛ւր ինձ, տո՛ւր ինձ գու նրանց,
 Թող վողջ, կենդան նրանք յելնեն մեր առաջ,
 Հայացքներում և՛ կյանք, և՛ սեր, և՛ կրակ:
 Թող զան նրանք, տեսնեն սիրով, հիացքով
 Հայրենական քաղաքն իրենց թեառած
 Յեվ հայացքին անապական հայացքով
 Թեկուղ մեն մի, մեն մի ծիծղուն յերեկող,
 Յերբ զու չքեղ լույսերի մեջ ընկդմված
 Շողզողում ես, ո՛, քաղաք իմ աղմկուն,
 Իմ չտեսած, նեապոլից ել չքեղ,
 Վորին այնքան հին պոետները անդուլ
 Նվազներ են ձոնել սրտաղեղ, անկեղծ:
 Ահա չքնաղ ծովեղերքը քո, ահա
 Ծիծաղում եր յուր լույսերի թասի մեջ
 Այգիների շղթան կրծքին իր պահած.
 Նավերն ահա նստած ծովում լայնիքան,
 Փողփողում եր գրոշը կայմերին

Մեղմ ծածանվում՝ հովի չնչից դիշերվա :
 Յերկինքն ահա լուսարձակները ձևել են
 իրենց լույսի բաց կապուտակ սյուներով ,
 Յեվ ճախրում ե մութ կապույտում ու վերը
 Սավառնակների հանդուզն մի յերամ՝
 Պատրաստ մարտի ու սպայքարի աններուն ,
 Պատրաստ կեցած սխրանքների , քաջության :

III

Ահա Բայիլն , ահա ափն այս լուսազո՞ծ
 Յեվ ծառանիստ , ծաղկանկար և նորող ,
 Ահա այդին նրա վարթամ ու նազուն ,
 Այելներով այնպես բուրյան ու թովիչ
 Զբոսնում են այնքան վլարթ զույգերով
 Ազատ մարդիկ՝ վիշշաների ու ծովի :
 Ահա այս նոր այլու դիմադ խոյացած
 Շողչազում ե , վրոպես վիթխարի մի նամ .
 Կուլու - պալատը զեղեցկակերու ու պայծառ :
 Շուրջը նրա վորպես կանաչ մի գոտի
 Նոր ծառերի շարքն ե ճգվում այս կանաչ
 Յեվ ալվում այնպես զգվող ու մոտիկ :
 Մատրոսական նվազախումբն ե նվազում
 Ահա բարձր պաշտպամբում պալատի ,
 Սիրսա նրանց նվազներն ե հալաքում ,
 Նվազեցե՞ք , նվազեցե՞ք սրտալի ,
 Ո , ծովայիլն իմ յեղբայրներ , ո , պատիկ
 Չեր և գործին և հանգստին խնդալից :
 Նվազեցե՞ք ձեր ծովային յերգերը ,
 Վոր հյուսել եք ծովի վրա լայնանիստ ,
 Ի փառք կյանքի , աշխատանքի ու յերկրի :
 Նվազեցե՞ք , լսում եմ ձեր նվազը
 Վոր շոյող ե , ինչպես ծովի մեղմ քամին ,
 Սիրսա ե ուռչում ձեր այդ զվարթ նվազից
 առազատի նման ձկնորս նավերի ,
 Բաց ծովն ելած շամանդաղին ամռային :
 Ո , նվազեք , ո , նվազեք նվազե՞ք

Խաղմական ձեր քայլերգները կարմիր ,
 Փոված մեր լայն սահմաններին ծովային ,
 Ուր չի կարող ել ներս սովա թշնամի
 Վոչ մի քամի , ու վոչ մի նավ արներախ ,
 Քանի կա մեր սաղմի ուժը անխորտակ ,
 Քանի ունենք մշտաբորբոք մի յեռանդ ,
 Քանի կաք գուք , մեր նավազների փառապանծ ,
 Քանի մեր վառ փառքն ե յերկրում հորդացած :
 Նվազեցե՞ք , նվազեցե՞ք գուք հպարտ ,
 Չեր նվազը թող մաղվի մեր սրտերում ,
 Մեր հույզերում , վորպես անձրե մայիսի ,
 Վորպես բերկանք ու ներշնչանք մի յեռուն :
 Թող մաղվի նա այս ասֆալտէ մայթերին ,
 Այս ծառերին , ծաղկունքներին անբասիր ,
 Այս տունկերին նորաբողբոջ , սիրելի :
 Ահա ծովը ծփծփում ե մեղմ հովի
 Թեվերի տակ , թող խառնվի ձեր նվազը
 Կոհակներին իր որորուն ու ծալի :
 Յեվ թող թափիլի յուրաքանչյուր մի նավի ,
 Մակույկի մեջ , նավակի մեջ , նվազե՞ք ,
 Յես սիրում եմ նվազները ձեր թովիչ ...
 Բայիլ , Բայիլ , քաղաքամաս լուսավոր ,
 Շրջում եմ քո փողոցներով նորաշեն
 Մինչեւ գիշերն համի , մինչեւ առավոտ :
 Ցույց տուր գու ինձ քո նորակերտ թաղերը ,
 Ցույց տուր գու ինձ կառուցումդ շենք առ շինք ,
 Թող գուրգուրեն նրանց յերգիս տողերը :
 Հաբազատ ե ինձ ամեն մի ընտանիք ,
 Հարազատ ե ամեն մի թաղ ծառապատ ,
 Հարազատ ե ինձ ամեն տուն յերջանիկ ,
 Հաբազատ են պատուհաններն լուսալի ,
 Ամեղնազործ վարագույրներն այս կապած ,
 Զյունաճերմակ , մաքրամաքուր , ճրաշալի :
 Յես քաշում եմ ահա մի ջինջ վարագույր , —
 Նավթազործի մի լիստիրտ ընտանիք

Ի՞ր խնդությամք ինձ ել և նա վարակում :
 Սեղանի չուրջն ահա նստած խնդում ե
 Ընտանիքն այդ, վորպես մի մարդ յերջանիկ,
 — Այս առաջին բաժակը մենք խմենք մեր
 Մեծ, առաջին մարդու կենացը պայծառ,
 Վոր տվեց մեզ յերջանկություն, ցնծություն
 Յե՛վ աշխատանք, և' սեր, և' կյանք մի անմար :
 Իմ մաղերը ճերմակել են միշտ հանգում,
 Բայց զեռ նոր ե ուրախանում իմ տունը,
 Նոր եմ ապրում յերջանկավետ մի կյանքով :
 Յես տեսել եմ անցյալը մառ, դժնդակ,
 Յերբ շարունակ ժողովուրդն եր տառապում
 Յարական սեվ կնուտի տակ, կրունկի տակ:
 Յես վեհապանծ քսանվեցին եմ հիշում,
 Վորոնք այստեղ, Ապշերոնի այս ափում
 Պատղամներով մեծ Լենինի դյուցազուն
 Ընդվլումի խարույկները վառեցին,
 Վորոնք կիպուն անապատի արվազում,
 Ընկան հանուն ժողովրդի մեծ գործի :
 Հիսուն տարի յես ապրել եմ մի խուցում,
 Յերկու վորդիս մահացել են սեվ ախտից,
 Խոկ հիմա յես ուրախ կյանքից եմ խոսում,
 Խոկ հիմա յես հորափոր եմ անվանի,
 Նավթ եմ հանում կապույտ սրտիցը ծովի
 Յերկրի համար մեր բախտավոր, գեղանի:
 Մեր սիրելի քաջ ժողովոմը ահա ինձ
 Պարզեվել և այսոր ահա մի ավտո,
 Ուրախ արել ընկերներիս ու տունն իմ :
 Քող վա՛ռ մնա չողքը նրա արելի
 Մեր նախթային բանվորների վրա միշտ,
 Յես կոշխառեմ այսուհետեւ ավելի
 Վորակավոր նոր-նոր հորեր շատ վորել
 Իմ քաջարի բրիգադի հետ միասին:
 Այդ մեքենան, այդ նվերը, ընկերնե՛ր,
 Ինչքան իմն ե, մի այնքան ել նա ճերն է :

Յերբ յանկանաք ընտանիքով ձեր յեկեք,
 Նստնիք ուրախ, մեր քաղաքով զբոսնենք:
 Յես իմ կնոջ, վորդու, հարսի անումից
 Զեղ եմ ասում . Հազար բարով եք յեկել,
 Հաճախ յեկեք հյուր, ընկերնե՛ր անվանի :

IV

Դարձնանային առավոտն ե չողջողում
 Այս այլու մեջ, վորպես վայլում աղամանդ,
 Ու ծառերն ե իր չողերով ցնծուղում .
 Այս պահին ել, մի նկարիչ ծերունի,
 Միլրուքն առես մի ձյունեղեն ճերմակ ամպ,
 Յեկալ այդին իր սաներով պատահի:
 Փողկապները նրանց, վորպես ալ բոցեր
 Ծածանվելով ուրախ քամու շրջումից,
 Բոցկլում են վարդերով հուր ու անմեռ:
 Յուրաքանչյուրն առած տետրն ու արդեն —
 Նկարչական աթոռիկի վրա իր
 Նստեց ահա մի արձանի վեմ առ դեմ,
 Իր հերոսի կերպարանքը ջինջ սրտում, —
 Մի անձնուրաց կոմիսար ե նկարում .
 Ամեն մեկը տնհուն, անափ սիրով ե
 Գծազրում իր հերոսի պատկերը
 Պայծառախոհ, դյուցազնական ու սեվեռ:
 Խոկ ծերունի նկարիչը ձյունահեր
 Մոտենում ե ամեն մեկին հայրաբար,
 Շտկում նրանց նկարներն այնքան վեհ :
 Անցան ժամեր : Նրանց փոքրիկ տետրերում
 Շահումյանը, Զավարիձեն, Մեշարին
 Կենդանացան նորից պայծառ ու խոհուն :
 Նրանց անմար անունները հարիտյան
 Ստալինյան տրեկի տակ մշտավառ
 Միշտ անմոռաց ու միշտ պայծառ կժնան :

ԱՐԵՎԱ ՄԱՐԴԸ

(Բելոռուսական հեքյար)

Են բարձրաբերծ լեռան յետեվ,
Ծովի յետեվ կապուտակ,
Կարկտչում եր խոտերի մեջ
Գարնահային մի դետակ:
Հիմի յել ենա խոխոջում,
Հովիտները վողոզում,
Մարդկանց ջուր ե տալիս անուշ,
Լուսնյակի տակ շողջոզում:
Յես յեղել եմ նրա ափին,
Լվացիել եմ պազ ջրով,
Թագնվել կաղնու թավ վսուաերով,
Չուկ վորսացել մեծ սիրով:
Յոթը տարի յես ապրել եմ
Են գետի քավ հորդ այնքան,
Ուռկաններով ձկնորսական,
Աւ չանքով բուրլակական:
Մի անգամ ել վորսի յելա
Իմ եղ սիրած գետը հորդ,
Գլխիս վերեվ զիշեր եր մութ,
Վոտքերիս տակ հողը ցուրտ:
Միայն վոքքիկ աստղիկները,
Կոնց ծաղիկներ վոսկեման,
Ցոլում եյին մութ յերկնքում,
Հովիտների վերեվ լայն:
Իսկ յես նստած կանաչ ափին,
Մեն ու մենակ ու ազատ,
Մաքերխ հետ խոսում եյի,
Նայում գետին հարազատ:

Ինչքան լավ ե նստել ուրախ
Գետի յեղբին սիրելի,
Յել միտք անել, և ուռկանով
Խարել չորիկ ձկներին:
Մ' թություն եր մի անլուսին,
Գիշեր եր մութ, մութ զիշեր,
Հանկարծ շողաց սեվ յերկինքը
Ել կրակով վոսկեչըրտ:
Մի վառ աստղիկ վայր վլորվեց
Լայն, անսահման յերկնքով,
Լուսավորեց նա անտառներ,
Մարդեր՝ ծածկված մութ միուով:
Քնած ձկներն արթնացան մով
Գետի զմբուխտ հատակում,
Լայն պոչերովը ճողփեցին
Ալիքները լուսավույն:
Թոչունները լուսափետուը
Թոսան իրենց բներից.
Լոկ բուերը լուռ թաղցրին
Դլուխները սեվարիծ,
Վախենալով թոչող աստղի
Ճաճանչներից խնդրագին:
Լուսավորվեց ամեն ինչ ու...
Մութը իջավ վերստին:
Սառւմ են, թե յերը վոր աստղը
Թոչում, ցած և դլորվում,
Եղ նշան և թե մեռնում ե
Մարդու հողին աշխարհում,
Իսկ յես կասեմ ձկնորսական
Իմ ստածը ճշմարիտ,
Զքագորի սրտի պես լին,
Ու լուսավոր, վոսկեխմնող
Գարնահային որդիա նման,
Ալլրի նման լուսալիք.
— Յերբ վոր աստղը վայր ե լոնկում
Դա նոր շունչ ե կյանք դալիս,

Յեվ չկորալ այն աստղիկը,
 Վոր դլորվեց, ցած թռավ,
 Հեռու հեռալում, վորտեղ գետն է
 Հոսում այնպես հորդառատ,
 Վորտեղ հզոր կաղնիներն են
 Ահում վիշի յեղերքին, —
 Ծագեց այնտեղ այն աստղիկը,
 Նման վոսկե հաստիկին:
 Նա շողում է ահա դետի
 Ռնթացքովը փրփրալի,
 Ժեռ ափերամ, առսիների
 Անտառներով անտոիկ:
 Հառաղում է պայծառորեն
 Հովիաները ցողապատ,
 Ու մարդերը բազմաբուրյան
 Ու կաղնուաները հպարտ:
 Ու լողում են ահա դեպ նա
 Զկնիկները կարմրագեղ
 Ու հալքերն են թռչում, դալի
 Ու յեղենն է շըշում մեղմ:
 Լոկ բուերն են, ալուավներն են,
 Ուրուրներն են թաղցնում
 Սչքերն իրենց, խեղճ ու անմեղ
 Մարդկանց արյամբ լեփ-լեցուն:
 Շողաց-չողաց այն աստղիկը,
 Լողաց-լողաց նա արագ
 Ու կանդ առալ ձկնորսական
 Խրճիթի մոտ հասարակ:
 — Մարդ, —ասավ նա —արի ինձ մոտ,
 Թե ձեռքիդ կա կոչտ արնոտ,
 Թե ուսերիդ կա լաթ չուխտ,
 Թե քրտինք ես թափում հորդ:
 Արի, ինձ տար ու թազցրու
 Են խիտ, մթին անտառում,
 Դիր վրանում, վոր չտեսնի
 Դահիձների աչքն արուն:

Տեսնում ես դու՝ ինձ հալածում,
 Վորոնում են հետամուտ
 Են չար մարդիկ, գաղանները,
 Սեվ ուժերը նենդ ու մութ:
 Իմ արյունն են նրանք ուզում
 Յեվ արյունը քո, յեղբայր,
 Վորովհետեւ յես չողում եմ,
 Լուսավորում մութը մառ:
 Վորովհետեւ դու չես սիրում
 Նրանց կարգերը արյուն,
 Ինչպես ծիլ ու ծաղիկները
 Ահեղ ցուրտը չեն սիրում:
 Ծաղիկները շատ են սիրում
 Ցողալ ծեզի ցող շողով,
 Աստղիկները շատ են սիրում
 Շողալ վոսկի շափազով . . .
 Փաթաթեցի յես իմ թոնը
 Ու նստեցի յես մակույկ
 Ու գնացի աստղի ձենին
 Են հուր հրաշք ու մաքուր:
 Յես զնացի ու ի՞նչ տեսա,
 Վոչ թե աստղ է իմ գիմաց,
 Սյլ լույս մարդն է — Կարմիր արեվ:
 Մի հսկա յե փառապանծ:
 Ենքան բարի, ենքան անուշ,
 Ասես լինի գարնան հով,
 Յես արեվին եղ թանկաղին
 Դրի մակույկին ապահով,
 Վերցրի, տարս մեր հորդ գետի
 Յեղերքներով քարքարոտ
 Ու հասցրի փայտեղենի
 Գործարանը դեմի մոտ:
 Մենք զուրս յեկանք, անտառ մտանք,
 Մեր յետելից լողացին
 Արեգակի զինակիցներն՝
 Աստղերը վառ, լուսածին:

Սեկ բոռերը բըզբըզացին
 Ու վայեցին բուերը,
 Կածանները հաստիցին
 Սութ մարդակեր գայլերը,
 Ինչ ել արին, չճորեցին
 Մեր հսկայի հետքն անդամ,
 Նրա տեղը յես գիտեյի
 Յեվ հավքերը անհման:
 Զրերի ակես կարկաչեցին,
 Որերն յեկան ու անցան,
 Ու չողջողաց ուրախության
 Յերանդավոր ծիսծան:
 Յեկան մեր լույս Արեգակի
 Ընկերները զինակից,
 Յեկան դաշտից, յեկան ծովից,
 Գործարանից ու հանքից,
 Ու ժամ առ ժամ աճեց մեր քաջ
 Բաղեների յերամը,
 Յեկան խիզախ ուղմիկները
 Ու լիփ լեցվեց վրանը:
 Յեկան նրանք, ում ձեռքերին
 Կոշտեր կային արնավառ,
 Ում աւսերին լաթ չուխա կար,
 Ով տանջվում եր անդադար:
 Յեկան նրանք ու կազմեցին
 Հսկայական մի բանակ,
 Յեկան նրանք աստղերի պես
 Անհամար ու անքանակ:
 Ամպերն իջան, տարածվեցին,
 Ծավալվեցին յերկնքով,
 Փայլիլեցին փայլակները
 Ահեղասաստ խոռվքով,
 Հովիտների ու մարդերի
 Ու գետերի վրա պաղ.
 Ու լեռներում ու գյուղերում
 Յեվ մութ եր, և լուսաշաղ:

Ճայթեց կայծակն ու հրդեհեց
 Անտառը կաղամախու,
 Թաղնվիլ ելին այնտեղ բուերն,
 Ուրուժները արնախում:
 Հուր պղնձի ու կապարի
 Կարկուտ տեղաց հեղեղուն
 Ու բոնկվեց արեն այն ժամ
 Կարմրակրակ, շողշողուն,
 Մարդ ու լճով նա գլորվեց,
 Հուր-հուր վառվեց, ծավալվեց,
 Հասավ մինչեւ քաղաքները
 Ազմկալից, հսկա, մեծ:
 Մինչեւ կղզին են մով ծովի,
 Մինչ դյուղերը չքաշոր,
 Մինչ հյուղերը ձկնորսական,
 Մինչեւ հեռու սար ու ծոր:
 Ում ձեռքերին կոշտեր կային
 Արնաթաթախ, արյունոտ,
 Ում ուսերին լաթ չուխա կար,
 Ով քրտինք եր թափում հորդ,
 Բոլորն յեկան ու չարժվեցին
 Լուսապայծառ արևի
 Ու նրա վառ ընկերների
 Լույս աստղերի յետեվից:
 Փայլվեցին սուր սրերը,
 Հուր թրերը չողացին,
 Թշնամիներն արյունախում
 Ահից-մահից գողացին:
 Մեր ձեռքի հուր հրեղեն
 Սույլ արշավին չափ տվինք,
 Մենք բաղեներ հսկայական
 Մեր թեփերը թափ տվինք:
 Նենդ թշնամին չեր ցանկանում
 Լինել սակայն անձնատուր,
 Բայց ուժեղ եր մեր բանակը,
 Կովում եյին մենք անդուլ:

Նենդ թշնամին կրակում եր ,
 Շանթում ելինք մենք նրան
 Գնդակներով մեր անխափան ,
 Շեշտակի ու հուրհուրան :
 Մենք ծուխ ու մուխ դարձինք նրանց
 Սեվ բները քարուքանդ ,
 Լալիս ելին նրանք , իսկ մենք
 Խնդում ելին հաղթական :
 Արեվ մարդը յերեք անդամ
 Եսպես չքից աչսարհով ,
 Պատերազմն եր ուր մոլիգնում ,
 Սուրը սրվում հեսանով :
 Արեվ մարդը , ասեա , ձեռքով
 Պոկեց ուժը թշնամու ,
 Տվեց Հրին , ավեց սրին ,
 Տվեց ջրին ու քամուն :
 Արեվ մարդը յելավ , շողաց
 Անուշ լուսով , ճանաչով ,
 Արեվելքը լուսավառվեց
 Կարմիր-կանաչ ճանանչով :
 Լուսավորեց խեղճ չքավոր
 Խտաները , գյուղերը ,
 Զինորսական նախակները ,
 Մութ գետնափոր հյուրերը :
 Թռան յեկան հավքերն աղատ
 Նոր յերգերով ինդադին ,
 Յնչար մարդիկ , անճար մարդիկ
 Շունչ քաշեցին սրտագին :
 Պայծառացավ յերկիրն արար
 Արեվ մարդու լույսերով ,
 Ու փթթեց աղատությունն
 Նորաբոլով գուցերով :
 Զար , չարակամ վոստիները
 Դեա մեծ մարդը սողացին ,
 Զկարեցան հաղթել սակայն ,
 Են լեռ ուժից դողացին :

Մենակ մահը մարեց նրա
 Ջինջ աչքերը լուսավոր ,
 Մենակ մահը կապեց նրա
 Ջեռքերը կոռ ու հզոր ,
 Մենակ մահը կապանք դրեց
 Դյուցապունի մեծ կամքին ,
 Մենակ մահը խեց մեղնից
 Մեծ հանճարին , մեծ կյանքին :
 Յերբ տարածվեց Արեվ մարդու
 Մահվան բոթը աշխարհում ,
 Նրա բոլոր ուազմիկներին
 Համակեց վիշտ մի անհուն :
 Նորից թռան , յեկան բոլոր
 Են հավքերը ջանասեր ,
 Հեռվից յեկան , յոթը ճամբից ,
 Չորս կողմերից յեկան մեր ,
 Յեկան հանքից յեկան արտից ,
 Մեր ծովերից հեռավոր ,
 Յեկան քաղաքն հսկայական ,
 Վար մեր հզոր , փառավոր
 Արեվ մարդու , մեր անդին հոր
 Դեմքին նայեն թանկազին ,
 Հրաժեշտ տան մեծ հանճարին ,
 Մեծ , թելավոր են կյանքին :
 Ու մթնեցին մով մարդերը ,
 Մով արտերը մեր կանաչ ,
 Մշուշլեցին լեռները մեր
 Մաղկապատկան , լուսալան :
 Տիուր յերգով աղմկեցին
 Կաղնուտները դարավոր ,
 Թետէր , ծովեր ալեկոծվան ,
 Հեծեծացին վշտից խոր :
 Յերաժիշտներն ահա տիսուր
 Տավիդները լարեցին ,
 Պղնձե փողերն առան իրենց

Երթունքներին հակեցին,
Նվագեցին աղիսղորմ
Տաղեր տիսուր, լալաղին,
Անձեռազործ դադաղի քով
Արել մարդու մեր անդին:
Արել մարդու զինակիցներն,
Զավակները վշտաբար
Դադաղն առան ուսերն իրենց,
Տարան պալատը մարմար:
Ճախրում եյին նրանց վերել
Թռչունները վշտաքամ
Ու արցունքն եր թափալում, ինչպես
Մեր հորդահորդ մայր Վոլղան:
Յեկել եյին մարդիկ եսպես,
Դրոշների անտառն եր
Ամենուրեք հրապարակում,
Փողոցներում վեր հառնել:
Յեկել եյին բոլոր նրանք
Ու վարարել հանց ովկիան,
Ում վոր փրկեց Արել մարդը,
Տվեց հաց, լուս, աղտա կրանք:
Յեկել եյին եսպես տհա
Ու աչքերով ծովացած,
Նայում եյին են լույս տեսքին,
Հեծում, անում վիշտ ու լաց:
Հեծում եյին սուլիչները,
Անտառները ազմկում,
Լալիս եյին ծովերն ամեն,
Մուժում յերկինքն եր սղում:
Մարմար տան մոտ, ուր անում եր
Ժողովուրդը վիշտ ու լաց,
Լեն փողոցում յերեք անդամ
Թնդանոթը վորոտաց,
Զմրտեցին մարդիկ իրենց
Անդին հորը հարազատ,

Սեղ բաղեցին, քաջ հսկային,
Արել մարդուն լուսազարդ:
Եյն ժամանակ յելակ վառ աստղն —
Զինակիցն այն դյուցաղնի,
Դամբարանին գեղանի,
Հապեն չինել, յելակ կանդնեց
Ու վասկեղեն տառերով
Գրեց «Լենին» խոռքը անմահ,
Ուր կմնա դարերով:

ՄՈՍԿՈՎՅԱՆ ԻՆՏԵՐՄԵՑՅՈՒՆ

Մոսկովյան մայիս, ծիծեռնակի
Թոփչքներով ես գալիս զու սուր,
Աւ ձնհաներով պղտոր, հոսուն
Ու նոր յերկերով մեր աշխարքի:
Յեվ Մոսկա դետը կարկաչում է
Իրու յերգեցիկ, հնչուն բալլար,
Այդի, պողոտա, չենքեր, պալատ
Կորչում են քո թալ կանաչումը:
Քո այդիները ալիք - ալիք
Տվելքսկոյից հյուսիս, ապա հարավ
Հոսում են կանաչ ու մետաքստ.
Բուրումներով ես, գարուն, դալիս:
Յեվ ինձ թիւռում ե, բրոնզասիրտ
Իր մոնումենտի պատվանդանից
Պուշկինը — դանդուր մի պատանի —
Խնում ե ահա թիկնոցն ուսին —
Շրջում ե այդում ծաղկուն, նաղուն.
Ճեմում են ահա իրա շուրջը
Լույս աղջիկների պլարթ մինջեր,
Հաղած կապուտակ կոմբինեցոն:
Ահա սիրահար, մի դույդ, ահա
Նստած ար կանաչ սոճու ներքո,
(Տղան դրկել ե իր աջ ձեռքով
Աղջկան): Նրանք լուռ, գլխահարկ
Չափածո վեպն են իրա կարդում:
Աղջիկը քնքուշ Տառյանայի
Նման ե — պայծառ, պարզ ու նայիվ,
Սակայն աչքերով անովիչոտ, խնդուն:
Նրանք յերկուսն ել Մետրոշենի
Կոմյերիաներից են վառավոր,
Քանի՞ դիշերներ ու առավոտ

Աշխատել են նրանք խոնավ գետնի
Բնալերքներում գորչ: Մինչեւ գոտի՝
Մտորելիրյա ջրերում ուն
Կանդնած, ձեռքերին վորպես սուսեր
Քանդիչներ առած, մի անհետին
Յեռանդով, ջանքով, վեհ, անհնար
Փորել են հողը, քանդել անթիվ
Լարիբինթ, կանալ, խարխուլ անակ:
Փորել են հողը: Ամեն խորչից
Յերաջրեր են հանել անդուլ,
Արգելքների դեմ յելել անդող,
Տոննաժներ թափել կամքի, ուժի:
Թոքերով իրենց յերիտասարդ
Շնչել են փոշին ստորյերկրյա,
Շնչել են հեղձուկ ծուխը նրանք
Գետնախորչերի: Բայց հարազատ
Կասուցումիցը այդ հանճարեղ,
Այդ կոթողից մեծ ու հոյաշեն
Ու յերբեք, յերբեք հետ չեն քաշվել,
Զեն լքել գործը: Փառքով տարել,
Դրոշակի պես միշտ պահել են
Վստահությունը այն մեծ, անհուն
Մեր առաջնորդի պայծառանուն,
Մեր եպուստի լույս պահերի:
Բերել են մարմար հուր - վարդագույն,
Բերել են մարմար կանաչ վորպես
Ամառվա ծովի ջրերը: Տե՛ս,
Բերել են մարմար ձյունե: Տոկուն,
Վարպետ ձեռքերով հղեկել են հարթ
Քարն այդ բեռնային, տվել ձեեր,
Կտյաններ կանգնել չողողուն, վեհ.
Նայի՛ր դու, Պուշկին, ու հրճիկը հար,
Ինչպիս հին հելեն մեծաքանքար
Լույս վարպետների ձեռքով կերտած

Արձանների դեմ լուսաքանդակ .
 Մէծ թուժայի յերգերի հայր ,
 Նայի՛ր դու ահա մարմարակոտի .
 Այս թունելներին վառ , լուսաղոծ ,
 Այս Փոյեներին մաքուր , լաղուր ,
 Այս կարնիզներին , կամարներին կուր .
 Ելեկարսոքարչին այս շառաչուն ,
 (Վաղոններում լույս , ուրախ , դվարի ,
 Մակավցիներն են ումքերով վարդ) ,
 Այս մաքությանը՝ ջրվեժի ջուր ,
 Յեկ սանդուղքներին այս բնիքնաշարժ ,
 Գևտակների պես մշտահասուն ,
 Այս միջանցքներին մարմարայուն ,
 Այսուններին այս ձյուն ու քառաշաբ :
 Այս նոր Մոսկվան ե , Մոսկվայի տակ .
 Իր գեղեցկությամբ անհուն , խնդուն ,
 Յերթեեկությամբ իր վիստիտուն ,
 Յերկներով , սղով իր ջինչ , հստակ :
 Այդ իմ սերների զործն ե լուսե ,
 Այդ իմ սերների գրչով զրած
 Հղոք պոյեմի խինովանվագ
 Մի եջն ե միայն : Նա խինդ ու սեր
 Տվել ե հոգին քո հայրենի ,
 Ուր չկա տիրան , չկան տերեր ,
 Վորոնց վնաքի տակ , վարակի տերե .
 Ո , արորվել են բյուր ճորտեր միշտ :
 «Ինքնակալության բեկորներին» ,
 Կարգերի վրա միահեծան —
 Սվիններով ենք գրել պայծառ
 Մեր ու քո անունը սիրելի . . .
 Յեկ անձրեսում ե հիմա քո մեծ
 Համբավվը յերկրում լայն , անսահման
 Խավարից , մուժից արդեն հստած
 Ժողովուրդների մեջ : Քեզ կարդում են
 Ազգությունները բոլոր այն լույս ,
 Վորոնց յերգել են զվարթուն , վեհ

Քո տողերովը : Քեզ կարդում են
 Ձեչեն ու թաթար , զալմուզ , տունդուս ,
 Յել բաղում աղբեր այլ : Քեզ սիրում ե
 Պատանի ցեղն իմ , իմ սերունդը
 Մեր վաղված հերկի աճող հունդը ,
 Վողջ յերկրագունդն ե , վորի այն մեծ
 Վաղվաշխարհը : Ինչո՞ւ , Պուշկին ,
 Մեր եպօխայում չծնվեցիր ,
 Կլինեյիր իմ հզորաձիրք
 Յելնող սերնդի յերգիչն անդին :
 Ինչքան պոեմներ կրեքնչեր ,
 Ինչքան նոր յերգել բորբ , Հրակեղ ,
 Ինչքան հերոսներ կտար նա քեզ ,
 Յեկ քնքանք , և՛ սեր , և՛ խոյանք ջերմ :

ԲԱԼԼԱՐ ԱԴՐԲԵԶԱՆՈՒՀՈՒ ՄԱՍԻՆ

1

Շողացել ե վեռների տւսին,
Ծբարված կապույտ ամպով,
Մի գունատ, մի տիտուր լուսին
Մենավոր ու ինքնամփոփ...
Զարիֆան',
Լուսինն այդ զու յես յեղել,
Այդ ամպը՝ քո չաղըն.
Գյուղը ջիլը քեզ փորձ ե տվել,
Առաջ ե մզել —
Դու չաղընն նետել ես գեն...
Մի կապույտ իրիկուն ե յեղել,
Մի խաղաղ իրիկուն,
Անչաղը,
Քո սիրած կոմսոմոլ տղեն,
Բջջից բերել ե քեզ տուն...
Հայրդ դիշերվա կեսին
Քեզ գուրս ե քչել տնից.
— Հեյ, զա՞նջզ,
Ուր թողիր քողը յերեսիդ,
Ինչ չեյթան ծնեցիր, կո՞ի'կ...
Չթողնես եղ լրին իմ տունը,
Հայրական հարկս չթողնես,
Կասակեցնեմ վոնց վոր շունը,
Իմ դռան հողը թե կոխեց:
Մայրդ՝ հեծեծել ե խուլ,

Եղ կապույտ իրիկուն,
Դրառում խշացել են
Առուները տիտուր,
Հւաղը ննջել ե միկում:

2.

Եղ իրիկուն,
Աչքերիդ արցունքալի,
Թիմացել ե ձեր գռան բաղչի
Որորվող, խշուն չինարին, —
Տնից քշմած մի աղջիկ...
Լուսացըն ես եղ գիշերը զու
Գյուղհանգչուհու տանը,
Մաղերդ խոխիվ, աչքերդ տրտում,
Ու զեմքդ, վոնց վոր քաթանը...
Առավոտը կ. կ. Յե. Մ. Հրջկոմը
Բեզ զործուղղել ե Բաղու,
— Թող Զարիֆա հորըդ զոմը,
Գնա՛ դու,
Ուսում ա՛ռ Բաղվում.
Գնա՛ դու, լավ սովորի՛ր,
Կավարտես՝ կզաս դյուզ,
Կաշխատես կոլիխողում ու քո հորից
Զես քաշի ահ ու յերկյուզ...
Տղերքը գնացք են քեզ դրել,
Տկրել ե մեկը իր սրտում.
— Շուտ-չուտ նամակներ կդրես, —
Ենջացել ե նա տրտում...
— Ու հետո քեզ լավ կպահես
Զմրսես... Հիմանդրանաս,
Իսկ յես—տուել ե եղ տղեն ջահել—
Տրակտորի կուրսեր կդնամ...
3.

Հետո յեկել ե աշունը
Խշուն ու բերքառատ,
Կարդ այն են տղերքն անունդ,

Տեսել են զեզեցիկ նկարդ
 Թերթում նկարած ...
 Քո սիրած կոմսոմոլ աղեն
 Թերթից կտրել ե նկարդ,
 Խըճիթի պատին կպցըել
 Աւ փորձել ե յնքն ել քեզ նկարել ...
 Յերբ նրան աշնան մի որ ել
 Բանակ ե կանչել կոմիտարը
 Ծալել ե ծոցում դրել
 Աւ բանակ ե տարել նկարդ ...
 Կոլխազում յերգեր են հյուսել
 Կոմսոմոլները քո մասին.
 — Ազրոնմ ես գանձալու խմ սե՞ր,
 Աւ գյուղ ես զալու ասին ...

Աղմկում են զարնան ջրերը,
 Զինարիները ձիգ յել ուզիդ
 Զարեֆատ,
 Իմ բոլոր ալբրեջանուհի քույրերը
 Բնել են քո կանաչ ուղին:

ԶԱՅՔԵՆԴ ԳՅՈՒՂՈՒՄ

(Ս. Խվանովից)

Ինչողես ցայտքեր Վրդիժի հնչյունիքը հասան մեկ,
 Չայքենդ դյուզն է յինչ յերգում կես զիշերին ասազա-
 զարդ,
 Դուզուկներն են զիլ ցնծում մեզուների ոլարսի պես,
 Յել դափելն են ձայնակցում զուկովներին հարազա-
 ման:
 Մեկ մատ յեկան լեռնցիք: — Դուք ընկերներ, մեկ հյուր
 եք,
 Գիշերեցեք զուք մեկ մոտ: Մեր ձիքին զամ տարան:
 Տնառերը բարեվեց, բացեց սիրով տան զուռը,
 Ներսում հարսնիք ու ցնծում, խնդություն եր
 անսահման:

Սկսոցներին թարմ մթերք ու թարմ միքզն եր
 ծովմացած,
 Նոան զումի զինին եր բաժակներում կարկաչում
 Զնդացնելով թասերը, մենք խմեցինք զովացած,
 Հեղարար մեր թամապի ձայնին եյինք ականջում:
 Մտերմորին լսեցինք ըրեպաղիքին զվարթուն,
 Երա խոսքին խմառուն ու անչափ ել հյութասեկ.
 — Ճանոնութ տարիս մեր զինուց խինդ ե հորդում մեր
 սրառում,
 Մեր աչքերն են ասաղաշող, միշտ որոյծառ ե միտքը
 մեր:

Եղենք ջահել փեսայի, ջահել հարսի կենացը,
 Երանց առաղի լույսերը, ոհրը լինի անպակաս,

Այժեցինք ջահել փեսայի, ջահել հարսի կենացը,
Հայի, աղբբեջանցու նուրբ բարբառն եր հնչում պարզ:

Ապա ասաց թամադան. — ո՞վ կերպի մեր փեսային
Գոհարի պես թամկապին, անմահական խոսքերով,
Այն ժամ մեջտեղ դուրս յեկալ, զարկեց սաղի լարերին
Հայոնի աշուղ Ավագը, մեղ հմայեց յերպերով:

— Փառ' Ասաղին, փառք Ասաղին,
Մեր փեսային, մեր իդիթին,
Բոյն և նրա սեղ չինարի,
Ուժն և նրա սար վիթխարի,
Արձիկ աչքից աչքերն և սուր,
Շողշողում են ասես բոց — հուր,
Նո չպիսե սորսափ ու ան,
Դու չմաներին բերում և մահ,
Փառ' Ասաղին, փառ' Ասաղին.
Կարմիր կրակ մեր իդիթին:

Ասաղի ձին մի հեյրան և,
Հուր — հրեղեն մի թառլան և,
Նա ուր ասես քեզ իհանե,
Նա Ասաղի հողին, չանն և,
Լավ ընկերն ու բարեկամն և.
Փառ' Ասաղին, փառ' Ասաղին,
Կարմիր կրակ մեր իդիթին:

Հավատարիմ քույրն և նրա,
Հաղթաբաղուկ կուռն և նրա
Կայծակեղեն թուրբ նրա,
Ընկնող ասաղից սրբնթաց և,
Ասես հուրհուր մի շահթ, բոց և,
Փառ' Ասաղին, փառ' Ասաղին,
Կարմիր կրակ մեր իդիթին:
Փաշտպան և նո քեզ, մեր յերկիր,
Քեզ մեր արեգ, քեզ մեր յերկիր:

Քեզ մեր հո'զ, ջո'ւր, յեզ քեզ յե'րդի իմ,
Աւզած ժամին վորպիս հերսոն
Կոփի կերթա ընկերներով,
Փա՛ռք Ասաղին, փա՛ռք Ասաղին,
Կարմիր կրակ մեր իդիթին:
Եմե՛նք ջահել փեսայի, մեր իդիթի կենացը,
Վոր թշնամուն — այդ իժին տրորում և վոտքի տակ,
Եմե՛նք աղբբեջանցի ընկերների կենացը,
Կարմիր զորքի կենացը, կենացն վորդոց իր շիամկ:

Հարդանք ու զովք աշուղին: Բայց ո՞վ կերպի մեր
Հարսին,
Ենակն ծաղկի չես զանի, թե ման զաս զիփ բազերով,
Այնժամ մեջտեղ դուրս յեկալ, զարկեց սաղափ, նուրբ
Ապին
Իմամվերդին — զուսանը, վառվեց անուշ տաղերով:

— Աշուղները խաղ են ասում,
Քեզ նոր ծաղկած բաղ են ասում,
Սիրուն տեսքիդ շաղ են ասում,
Վարսերիդ շափաղ են ասում,
Թառլան Մարո, ջան Մարո:
Մեր կոլլսողի արուներով,
Գարնան կանաչ թալ խոտերով
